15 ՀՈՒԼԻՍ 2022 ՈՒՐԲԱԹ 27(5715)

Azg Ազգ

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Խաղաղության պատրանք

Գերմանական SWR-ը նկատել է տալիս Հայաստանի սահմանին ապրող բնակչի տառապանքը

Ո՞վ է երեկ սահմանին զոհված 19-ամյա Արսեն Մանուկյանը: Նրա մասին, զոհերի մասին, մանավանդ խաղաղության մասին թմբկահարող կառավարության անդամները, վարչապետին կից հանրային հեռուստառադիոհեռարձակողը չեն խոսում, չեն պատմում: Չեն ցավակցում: Չեն զգում... իսկ Մանուկյանների ընտանիքում Լույսը կուլ գնաց խավարին, երազները հանգան, սուգը հավերժ դարձավ...Մենք՝ խոնարհվում ենք, խոնարհվում ենք, խոնարհվում ենք...Արդեն վաղուց խոնարհված ենք ապրում: Բայց ե՞րբ ենք բարձրանալու, կանգնելու եւ օրինակ՝ Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» ծրագրից պահանջելու, որ պատմի այդ տղայի, տղաների մասին, որ ամենաթանկը տվեցին հայրենիքին, որ պատմի, թե ամենամեծ եւ հզոր մարդը, ամենավառ օրինակը հենց այդ զինվորն է:

⇨2

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Jesus Christ - Business project

Հակառակ բարձրացած աղմուկին, ընդհանրապես բացասական, ես կարծում եմ, որ պետք է հավասալ Գագիկ Ծառուկյանին, որ Հաչիսի բարձունքին իր կանգնեցնելիք 77 մետրանոց կոթողային արձանը լինելու է շատ տպավորիչ ու դիտարժան, իսկ դրա շրջակայքի հանգստյան գոտին, ինչպես ինքը նշեց, կլինի իսկապես շքեղ ու եկամտաբեր, թեեւ ինքս շատ եմ կասկածում, որ տարեկան կգրավի 5 միլիոն զբոսաշրջիկների, որոնք, իր ասելով, գալու են դիտելու հրաշատեսիլ արձանը: Չնայած դրան, չնայած նաեւ այն բանին, որ Ծառուկյանը, մեղմ ասած, չի փայլում ո՛չ ինտելեկտով եւ ո՛չ էլ ճաշակով, սակայն ունի բնատուր խելամտություն, որը դժբախտաբար պակասում է մեր պետական գործիչներից շատերին. նա գիտի ընտրել ու ոնց որ պետք է վարձատրել լավագույն մասնագետների՝ իր բիզնես ծրագրերը լավագույնս իրականացնելու համար: Վստահ եմ, որ նա արդեն գտելպայմանավորվել է լավագույնների հետ, բացի... արձանագործից: Այդ հարցում, ըստ երեւույթին, Ծառուկյանը շեղվել է իր սկզբունքից եւ հայտարարել արձանագործների մրցույթ՝ լավագույն գործը ընտրելու համար: Հետեւաբար նա անմեղսունակ է: Ոչ միայն ընտրված գործի, այլեւ մյուս բոլորի մեջ ես չգտա հայկական ազգային որեւէ հետք: Բոլորն էլ, փիչ թե շատ, նմանակում էին Ռիո դե Ժանեյրոյի կամ Լեռնալիբանանի Հարիսայի արձանակոթողներին՝ ձեռքերի նույն բացվածքով, դեմքի նույն՝ անխռով արտահայտությամբ:

Գիտեմ, այստեղ ինձ ընդմիջելու են առարկողները. Հիսուս Նազովրեցին նույն դիմագծերն ունի ամեն տեղ, նույն կարծրատիպ արտահայտությունը՝ ողջ աշխարհում: Ո՛չ: Կրկին դիտեք մեր մանրանկարները. դրանցում Քրիստոսը հա՛յ է: Դիտեք նաեւ էլ Գրեկոյի հայտնի նկարը. Քրիստոսը իսպանացի՛ է: Ամեն ազգ ունի ի՛ր Քրիստոսը: Մինչդեռ ընտրված այս Քրիստոսը հայ չէ՛, մերը չէ՛:

Գիտեմ, առարկություններ լինելու են. այդքան հեռվից, մանավանդ ներքեւից վերեւ հայացքով չեն նկատվելու արձանի դիմագծերը. կարեւորը կեցվածքն է, ձեռքերի դիրքն ու բացվածքը: Այո՛, այդ դիրքը, հար եւ նման Ռիո դե Ժանեյրոյի նախատիպին, անկասկած ոգեշնչված է Հիսուս Նազովրեցու խոսքերից. «Ինձ մոտ եկէք, ով բոլոր յոգնածներ ու բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ կտամ ձեզ»: Բայց ո՞ր կամ ի՞նչ հանգստի մասին է խոսքը, հոգեկա՞ն թե՞... Պատասխանը մեզ տալիս է Գագիկ Ծառուկյանն ինքը. արձանի շուրջբոլորը հանգստյան գոտի է լինելու՝ հյուրատներ, կաֆեներ, ռեստորաններ եւ, միգուցե, խաղատնե՞ր: Այլ խոսքով, նա եւ նրա թիմը, կառավարությունն էլ միասին, կրկին իմաստազրկելու են Աստվածորդու խոսքը՝ հոգեկանի փոխարեն աշխարհիկ, ֆիզիկական հանգիստ պարգեւելով զբոսաշրջիկներին՝ նրանց գումարների դիմաց: Չեմ կարծում, որ այդ հանգստացողների մեջ լինեն, օրինակ, կրոնական ջերմեռանդությամբ հայտնի մեր հարեւան պարսիկները, որոնց կրոնը, հետեւելով Մարգարեի հորդորին՝ չի ընդունում ոչ միայն արձան, այլեւ նկար սրբերի, ի նմանություն եւ ի տարբերություն Հայ առաքելական եկեղեցու:

Իսկ ինչ վերաբերում է մերոնց, մեր «հոգնած ու բեռնավորված» հայերին, վստահաբար նրանք սխալ են ըմբռնելու Հիսուսի կանչի իմաստը, եւ հոգեկան անդորր փնտրելու փոխարեն՝ Հաչիս լեռն են բարձրանալու՝ իսկապես բեռնավորված ավտոմեքենաներով՝ ուտելիք, խմիչք, բաստուրմա դրած միս ու շամփուրներ... Այլ խոսքով՝ կառուցվելիքը, հակառակ պնդումների, որեւէ կապ չի ունենալու ազգայինի, ազգային ոգու, կրոնական մեր ըմբռնումների եւ ընդհանրապես հոգեկանի հետ: Կապ չունի նաեւ մեր ժողովրդի դարավոր ավանդույթների հետ: Արձանային մոնումենտալիզմի օրինակներ չկան մեր երկրում, ընդամենը մեկ բացառությամբ՝ Հաղթանակի զբոսայգու «Մայր Հայաստանը», որի նախաստեղծման ու վերաստեղծման պատմությունը գիտեն բոլորը: Երկրորդ բացառությունը, փաստորեն, լինելու է Հաչիսի Քրիստոսը, սակայն ոչ թե բռնատիրական ճնշման, այլ՝ շուկայական ընչաքաղցության դրդապատճառներով:

Արդարեւ, դա լինելու է բիզնես պրոյեկտ՝ Հիսուս Քրիստոսի անունով, այն էլ՝ անհատական, սեփական, նման Աբովյանի Սբ. Հովհաննես հոյակապ եկեղեցու, դարձյալ Գ. Ծառուկյանի արդյամբ կառուցված, որը դեռեւս մնում է իր սեփականությունը՝ սեփական տերտերով եւ մյուս ծառայողներով հանդերձ:

Հաչիսի Քրիստոսը, որտան ես եմ հասկանում, նկատի ունենալով գործող իշխանության հետ Ծառուկյանի քաղաքական ու տնտեսական ներկա յուղումեղային հարաբերությունները, առնվազն մինչեւ կառուցման եւ շրջակայքի կառուցապատման ավարտը մնալու է Կոտայքի իշխանի անձնական սեփականությունը: Իսկ հետո՞: Հետո կախում ունի ռուլետի պտույտից, որը որքան ժամանակ է այլեւս չի կանգնում մեր երկրի ու ժողովրդի համար բախտավոր թվի վրա:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՔՊ-ն գործընկերներին մանդատից չի զրկի, բայց մահակը ձեռքից չի գցի

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Խորհրդարանական մեծամասնությունը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը, ընդդիմադիրներին մանդատից զրկելու համար Սահմանադրական դատարան չի դիմի: Խորհրդարանում երեկ՝ հուլիսի 14-ին, տեղի ունեցած խորհրդի նստից հետո լրագրողների հետ զրույցում հայտարարեց ԱԺ փոխխոսնակ **Ռուբեն Ռուբինյանը**:

Հիշեցնենք՝ խորհրդի նիստի օրակարգում ընդդիմադիր պատգամավորների մեծամասնությանը մանդատից զրկելու համար Սահմանադրական դատարան դիմելու հարցն էր:

«Անկախ ամեն ինչից՝ հարգում են ժողովրդի քվեն, որ նրանք վստահել են ընդդիմադիրներին, հետեւաբար վերջիններիս կոչ ենք անում խելոք գալ խորհրդարան ու մասնակցել աշխատանքներին»,- նշեց Ռուբինյանը:

Բացառությամբ «Պատիվ ունեմ» խմբակցությունից դուրս եկած **Իշխան Զաքարյանի**, նույն խմբակցության պատգամավոր **Թագուհի Թովմասյանի**, **Մարտուն Գրիգորյանի** ու «Հայաստան» խմբակցության պատգամավոր **Արգիշտի Գեւորգյանի** (վերջին երկուսն, ի դեպ, մանդատ ստանալուց հետո դեռեւս չեն էլ երդվել խորհրդարանական ամբիոնից)՝ ՔՊ-ն առաջ էր քաշել ընդդիմադիր մյուս պատգամավորներին մանդատից զրկելու հարցը: Պատճառաբանությունն այն էր, թե ընդդիմության ներկայացուցիչները խորհրդարանական աշխատանքին չեն մասնակցում, պատշաճորեն չեն կատարում երեսփոխանական իրենց պարտավորությունները: Նրանց ասածները, այո, իրականությունից հեռու չեն, բայց եթե ընդդիմադիրներն ԱԺ չեն գնում քաղաքական բոյկոտ հայտարարելու պատճառով, իշխանության ներկայացուցիչները ոչ պակաս անտարբեր ու «թռչող» են խորհրդարանի աշխատանքներից: Այնպես որ՝ եթե կարիք լինի բացակայության հիմքով քննելու պատգամավորների մանդատազրկության հարցը, ապա դա պետք է տարածվի բոլորի վրա:

Քաղաքական իշխանությունը, փաստորեն, նման կերպով ընդդիմությանը վախեցնելու նոտա է հղում, որ եթե սեպտեմբերին խորհրդարան չվերադառնան, ապա ՍԴ դիմելու ու մանդատից զրկելու մահակը ցանկացած պահի կարող են ջարդել նրանց գլխին: Կվերադառնա՞ն, թե՞ ոչ, դա քննարկման բոլորվին այլ հարց է, պարզ է սակայն, որ փողոցային պայքարում ձախողած ընդդիմության հետագա ասելիքը շատ դիպուկ ու հստակ պետք է լինի:

Ի դեպ, խորհրդարանն այսօրվանից արձակուրդի է մեկնում: Պատգամավորները «վաստակած» հանգիստը տարբեր տեղերում կանցկացնեն՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Հունաստանում, Խուսուփի լանջերին, Սեւանում, Դիլիջանում կամ իրենց տանը: Մեկ տարվա ընթացքում ԱԺ-ն բացի սուր քննադատություններից ու վեճերից նաեւ բռունցքներ, շշամարտեր, հայհոյանքներ ու «հաշիվ մարքրելու» տեսարաններ է տեսել: Հուսանք՝ սեպտեմբերին՝ խորհրդարանական նոր նստաշրջանին, պատգամավորները ջղաձգումները պարոած ու դրական լիցքերով կներկայանան:

Իրան-Հայաստան հարաբերությունների մակարդակի բարձրացում

ՍԱՆՍՐ ՍԵՅՖԷԴԴԻՆԻ

Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար **Ալի Շամխանիի**՝ անցնող շաբաթվա այցը Հայաստան կարեւոր նշանակություն ուներ: Այդ կարգի բանակցություններն ու այցելությունները հաճախ տեղի են ունենում ԻԻՀ ԱԳՆ կողմից՝ Ազգային անվտանգության գերագույն խորհրդի նախապես մշակած քաղաքականության եւ ընդունած որոշումների շրջանակներում: Սակայն երկրի անվտանգության խորհրդի քարտուղարի արտասահմանյան այցելություններն առանձնահատուկ նշանակություն ունեն: Շամխանիի այցը Հայաստան հավանաբար տեղի է ունեցել իր հայ պաշտոնակցի հրավերով:

Կարեւոր են նաեւ այն դիվանագիտական ու աշխարհաքաղաքական կոդերը, որոնք հանրայնացված պաշտոնական հայտարարությունների տեսքով հնչել են ԻԻՀ Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղարի շուրթերից:

Անցնող տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Իրանը ներքաշվել էր Հայաստանի հարավային Սյունիք մարզի նկատմամբ հնարավոր ագրեսիայի հետ առնչվող խնդիրների մեջ: Իրանի զինվորական հրամանատարությունը վճռականությամբ հանդես եկավ սահմանների անփոփոխելիության օգտին:

⇨6

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Երկու մեծերը չեն առճակատիր

Ընթացող Ռուս-Ուքրաինական պատերազմը «համաշխարհային» չի կրնար կոչուիլ, յիշելով եւ օրինակ վերցնելով նախորդ երկու աշխարհամարտերն ու անոնց պարագաներն ու հանգամանքները, նոյնիսկ եթէ Կաթոլիկ աշխարհի կրօնապետը ըսէ, թէ համաշխարհային երրորդ պատերազմը սկսած է:

Ճիշդ է որ երկրորդ համաշխարհայինէն երեք-քառորդ դար անցած է եւ այսօրուան պատերազմներն ու ռազմավարական գործողները շատ տարբեր են նախորդէն, սակայն, ընդամէնը երկու երկիր ուղղակի ներգրաւուած են ու անոնք է որ ուղղակիօրէն կը կրեն կռիւին հետեւանքները, նկատի առած մարդկային զոհերն ու քաղաքներու աւերումները, իսկ տնտեսական խնդիրները կը տարածուին նաեւ այլ երկիրներու վրայ: Աջակիցները միայն զէնք ու դրամ կը թափեն, կ՚ազդուին տնտեսապէս եւ, անշուշտ, քաղաքականապէս ալ, բայց կռիւին չեն մասնակցիր, քանի որ ԱՄՆ-ի նախագահը ի սկզբանէ յայտարարեց, որ ինք եւ իր դաշնակից պետութիւնները կ՚օգնեն Ուքրաինային պաշտպանական (ոչ յարձակողական) զէնք ու զինամթերքով, բայց Ռուսիոյ հետ ուղղակի առճակատիլ չեն ուզեր: Վերծանելիք բան չկայ, աւելի քան յստակ է:

Իմ կարծիքով համաշխարհային պատերազմ սկսելու համար,- Ասուած մի՛ արասցէ,- պէտք է ԱՄՆ եւ Ռուսիա իրարու բախին «տաք» պատերազմով, նոյնպէս ալ իրենց կողմնակիցները՝ ուղղակի, ոչ անցեալի «պաղ պատերազմով»: Երկու մեծերը իրարու դէմ ուղղակիօրէն չեն ճակատիր եւ երբեք ալ այդ անմտութիւնը պիտի չընեն, նկատի առնելով անցեալի դասերն ու ներկայի ռազմաքաղաքական եւ տնտեսական իրավիճակները:

Տեսէ՛ք, յիսունականներուն Քորէական պատերազմին սովետներն ու ամերիկացիները ձեւով մը բախեցան ու պատճառ դարձան, որ հրկիրը երկուքի բաժնուի, անկէ ետք, Վիէթնամի պատերազմին, ԱՄՆ ուղղակի մտաւ, իր բանակով, զէնք ու զրահով, համայնավարութեան տարածումին առաջքը առնելու համար, իսկ Սովետ Միութիւնը չմտաւ, սակայն զէնք ու զինամթերք մատակարարեց տեղացի ընդդիմադիրներուն: ԱՄՆ մեծ զոհերով դադրեցուց պատերազմն ու քաշուեցաւ:

1979-ին սովետական բանակը յարձակեցաւ եւ ներխուժեց Աֆղանիստան, իսկ Ամերիկան տեղի ընդդիմադիրներուն դուրսէն օգնեց, առանց ուղղակի բախումի: Սովետները մեծ կորուստներով քաշուեցան: Աւելի ուշ, թալիպաններու դէմ կռուելու եւ օրինական իշխանութիւնը պահպանելու համար ԱՄՆ մտաւ Աֆղանիստան, ռուսերը չմիջամտեցին, բայց ամերիկացիները չկրցան իրենց նպատակին հասնիլ, վերջերս ալ քաշուեցան, իշխանութիւնը յանձնելով թալիպաններուն:

Իրաքի պատերազմին ԱՄՆ ներխուժեց, գահընկեց ըրաւ Սաստամ Հուսէյնն ու կախաղան բարձրացուց զայն, Ռուսիան չխառնուեցաւ: Այսօր Ռուսիան մտած է Ուքրաինա, իսկ ԱՄՆ եւ իր համակիրները, առանց ուղղակի բախումի, դուրսէն կ՚օժանդակեն Ուքրաինոյ, պատճառ դառնալով, որ Ռուսիոյ նման հսկայ մը, որ կրնար Ուքրանիան կարճ ժամանակի մը ընթացքին գրաւել, պատերազմի սկիզբէն չորսուկէս ամիս ետք, տակաւին իր նպատակին չհասաւ:

Եւ այսպէս ալ, կարծես թաքուն համաձայնութեամբ մը, կամ իրարու ոյժերը չափելով, որոշած են իրարու դէմ չելլել, իսկ եթէ անհրաժեշտ է, ապա՝ իրենց հաշիւները մաքրել ուրիշ երկիրներու մէջ, օրինակներ՝ շա՛տ:

Բ. Աշխարհամարտին Ս. Միութիւնը 27 միլիոն զոհ տուաւ եւ ամէն ինչ ըրաւ, որ դառնայ ուժեղագոյն պետութիւն մը: Իսկ Միացեալ Նահանգները իր ամբողջ պատմութեան ընթացքին այդպիսի կորուստներ չունեցաւ, սակայն միշտ աշխատեցաւ որ գերտէրութիւն դառնայ եւ Ռուսիան չհաւասարի իրեն: Հիմա երկու մեծերը գիտակցելով իրենց ոյժին՝ զգոյշ են, կը խուսափին զիրար հարուածելէ: Յիշենք Քենեդիի ու Խրուշչովի օրերուն Քուպայի հարցը: Սովետը զիջեցաւ ու հրթիռներով բեռնաւորուած ռազմանաւը ետ դարձաւ:

Փառք Աստուծոյ, երկու գերտէրութիւնները այսպիսի չյայտարարուած համաձայնութիւն մը ունին, թէ չէ, մինչեւ հիմա երրորդ աշխարհամարտն ալ տեղի ունեցած կ՚ըլլար, չորրորդն ալ... (Վստահ չեմ այս «չորրորդ»ին, երրորդէն ետք աշխարհի վրայ մարդ մնացած կ՚ըլլա՞յ որ պատերազմ ըլլայ:

Խաղաղության պատրանք

⇨1 Ինչպե՞ս պահանջենք, որ Հանրայինի լրագրողը Սյունիքի Ներքին Խնձորեսկի կամ Սեւ լճի տարածքում բնակվող մարդու հոգսը մեզ փոխանցի, ոչ թե պատմի մայրուղիներ դարձող Հայաստանի ասֆալտապատվող կածանների մասին:

Գերմանական SWR-ը (Հարավարեւմտյան ռադիոհեռուստատեսությունը) 15,,58 rnոեանոg ռադիոռեթոrտաժ հեռարձակեց հուլիսի 7-ին ժամը 15.35-ին՝ իր աշխատակից **Քրիստինա Նագելին** ուղարկելով Հայաստանի հենց այդ շրջանների մարդկանց հետ զրույցի: «Չնայած Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղ բանակցություններ են վարում, Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտությունը դեռ պայթյունավտանգ է: Կրկին բախումներ են լինում նոր ու հին սահմաններում»:

Այսպես է մեկնաբանում ռադիոհեռարձակողը՝ այդ թեման լուսաբանելու արդիականությունը:

«Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտությունը և հնարավորի սահմանները» վերնագրյալ նյութը սկսվում է մոդերատորի՝ ո՞ւմ է պատկանում ԼՂ-ը՝ Հայաստանի՞ն, թե՞ Ադրբեջանին հարցով, որին հստակ, ստույգ պատասխանի փոխարեն հիշատակվում են այդ տեղանքի՝ մինչեւ 4-րդ դար եւ քրիստոնեություն առնչվող արմատները, այդ տարածքի վրա տիրապետություն հաստատած արաբների, սելջուկների, պարսիկների, օսմանցիների, ռուսական ցարերի թվարկմամբ, հասնում արդի ժամանակներ. 2020-ին Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պատերազմն ավարտվում է ԼՂ-ում եւ դրան շրջակա բազմաթիվ վայրերի վրա Ադրբեջանի վերհսկողության հաստատմամբ: Պատերազմում կրած պարտության, տարածքների կորստյան համար շատերը Փաշինյանին են պատասխանատու համարում: Շաբաթներ ի վեր Հայաստանի ընդդիմությունը բողոքում է վարչապետ Փաշինյանի՝ բանակցություններ վարելով երկրի շահերին դավաճանելու քաղաքականության դեմ: Հայաստանի բնակիչները խաղաղություն են կամենում, բայց ոչ ամեն գնով, ռեթորտաժի նախաբանն այսպես է եզրափակում մոդերատորը:

«Նիկոլ, դավաճան», կառավարության շենքի առջեւ հավաքված՝ մի քանի հազար ընդդիմադիրների հսկայ հայերենը գերմաներեն էլ ճշգրիտ թարգմանվում է: Ի հեճուկս կայծակ ամպրոպի, մի քանի հազար մարդ ցույցի է դուրս եկել: Փաշինյանը Ադրբեջանի հետ բանակցություններով տարված՝ բանի տեղ չի դնում ընդդիմադիրների պահանջը: Աժ «Հայաստան» խմբակցության 32-ամյա պատգամավոր **Ասպրամ Կրպեյանն** ասում է, որ իրենց ձայնը խորհրդարանում լսելի չէ, ուստի միակ տարբերակը փողոցային պայքարն է, որի նպատակը Փաշինյանի՝ իշխանությունից հեռացումն է: Ոչ ԼՂ-ի հայերի, ոչ էլ Հայաստանի բնակիչների ճակատագիրը արտոնված չէ բանակցությունների առարկա դարձնել: Մեր հայրենիքը ազերիներին ու թուրքերին չենք տալու, ասում է Ասպրամը: Լրագրողը հիշատակում է ցեղասպանության փաստը, երբ փորձում է հայրենիք բառի բացատրությունը եզրել մի տարածքում, որտեղ սահմանագծերն անընդհատ փոփոխվում են, 2020-ից հետո՝ հօգուտ Ադրբեջանի:

Տիգրանաշեն գյուղի մոտ են: Լրագրող **Սոնան** (ազգանունը չի նշվում-Ան.Հ.) իրազեկում է, որ խորհրդային տարիներին ադրբեջանցիներով բնակեցված այդ տարածք ադրբեջանցիների վերադարձը շատերին է մտահոգում, թե Հայաստանի հարավը Ադրբեջանը կարող է շրջափակել: Հասնում են Սյունիք, Սեւ լճի տարածք, որտեղ «վերեւի հատվածը Ադրբեջանին է պատկանում, ներքեւում նրանց դեմ հանդիման հայկական զինուժն է»: Գորիսի փոխքաղաքապետ Իրինա Յոլյանն էլ մտահոգ է՝ հարավային մարզի վիճակը անդորրի առիթ չի տալիս, «թշնամին անցյալ տարվանից ի վեր հայոց տարածքում է: Հաղորդակցություն ապահովող ճանապարհները շրջափակված են, գյուղերը կտրված են, ասում է նա, բացի դրանից նշում սահմանային փոփոխություններով պայմանավորված մարդկանց ֆինանսական կորուստների մասին՝ տուն, հող, անասուն: Անվտանգությանն առնչվող մտահոգությունները սակայն մարդկանց՝ սահմանամերձ բնակավայրը լքելու առիթ չեն դառնում: «Սա մեր հողն է, մեր երկիրը, մեր պայքարը, թշնամին պիտի հեռանա», ասում է տիկին **Յոլյանը**: «Ուզում ենք խաղաղ ապրել, բայց ոչ ամեն գնով: Թշնամին մեր երկիրն է ուզում: Եթե պատմությանը հայացք նետենք, կտեսնենք, որ հայը միշտ է պատրաստ եղել իր երկրում իր գոյության համար կռիվ տալու: Համոզված եմ, մեր բնակիչները հարկ եղած դեպքում պատրաստ են պաշտպանել մեր երկիրը»:

Ներքին Խնձորեսկում պատերազմն ամեն ինչ փոխել է: Մի նեղ կածան, տեղավայրի ցուցանակ էլ չկա եւ արգելափակոց: Շփոթմամբ եթե ձախ չթեքվես, կհայտնվես Ադրբեջանում, իսկ գյուղ մտնելու համար՝ յուրայիններն ստուգում են անձնագիրն ու փաստաթղթերը, ավտոմեքենայի համարանիշն արձանագրում: «Ադրբեջանցիներն այստեղ դաշտերի հետեւից երեւում են, պատմում է գյուղի բնակչուհի անգլերենի ուսուցչուհի **Հերմինե Դիլանչյանը**: Էլ ռումբ չի պայթում, բայց չգիտես, թե հաջորդ օրն ինչ կլինի: Կորցրել ենք ամենակարեւորը՝ խաղաղությունն ու անվտանգությունը մեր»: Բայց մանկապարտեզին հարակից խաղահրապարակը նորոգել են, իսկ Հերմինեն պարզ հացթուխարան է բացել իր բակում: Հույս ունեն, որ գյուղը հայկական կմնա: «Եթե ասված կամեցել է, որ մենք պատերազմից ողջ մնանք, միգուցե մեր առաքելությունն է, որ մնանք այստեղ, զարգանանք»: Իսկ Ադրբեջանի հետ խաղաղ գոյակցությո՞ւն, հարցնում է լրագրողը: «Ոչ, չի պատկերացնում...»

Վերադարձի ճանապարհին Երասխի հատվածում հայկական հսկա դրոշ է փողփողում: Այստեղ 2000-ականների սկզբին Հեյդար Ալիեւն ու Ռոբերտ Քոչարյանը հանդիպեցին, պատմում է Քրիստինա Նագելը, որ լրագրող Սոնայի հետ հեռուստաարխիվից գտել են դրա մասին տեսավկայությունը: Լսվում է Ալիեւի ցածրաձայն ռուսերենը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ԼՂ հիմնահարցի խաղաղ լուծման հանձնառության մասին: Լսվում է Քոչարյանի՝ նույնի վերահաստատումը: Խաղաղության մասին այս բառերն ինչպես նախկինում, այսօր էլ արդիական են, եզրահանգում է Նագելը եւ իր խոսքը կցում Աժ պատգամավոր 33-ամյա **Հռիփսիմե Գրիգորյանի** ասածին՝ «այն, որ վարչապետ Փաշինյանը խաղաղ բանակցում է եւ չեն կռվում, արդեն հսկայական առաջընթաց է: Լավատես ենք, որ բանակցությունները կհանգեցնեն կայուն եւ համալիր լուծման, որի համար երկու կողմն էլ փոխզիջումների պիտի գնան»: Հայկական շահերը վաճառելու մասին իշխանական պատգամավոր Գրիգորյանը չի ուզում լսել, նրա մեկնաբանմամբ՝ փորքաթիվ է ընդդիմությունը եւ շատ բան գիտակցված կեղծում է, չի հաջողել ընտրություններում հաղթել, իշխանափոխության է ձգտում՝ անընդհատ շահարկելով ԼՂ հակամարտությունը, հայ-թուրքական հարաբերությունները: «Իշխանափոխության հարց չէ, երկրի ճակատագրի հարց է, նկատել է տալիս Աժ ընդդիմադիր **Արմեն Ռուստամյանը**: Նրա ասելով, Փաշինյանը խաղաղության համար բանակցելու մանդատ ունի, բայց նրա բանակցությունը մեր գոյությունն անիմաստ դարձնող, մեր երկիրը գերեզմանոցի վերածող «խաղաղություն» է: Ռուստամյանն ընդգծում է, որ սահմանային հարցերում շտապել պետք չէ՝ միջազգային ուժերի, Ռուսաստանի ներգրավմամբ պիտի կարգավորվի հարցը: ՌԴ այժմ զբաղված է Ուկրաինայով, եւ հարմար առիթ է Ադրբեջանի եւ Թուրքիայի համար 44-օրյա պատերազմում չստացածը ճնշում բանեցնելով կորզել Հայաստանից: Նրանք շտապում են, չեն ուզում, որ հակամարտությունը կրկին աշխարհի ուշադրության առանցքում հայտնվի, ասում է Ռուստամյանը:

ԼՂ հակամարտությունն աշխարհի օրակարգի առաջնային առարկա չէ այլեւս, թեեւ մեծ է դրանում կուտակված բռնկման պատրաստ նյութը թե՛ Կովկասի, թե՛ Հայաստանի համար, Հայաստանի մասին իր ռեթորտաժն այսպես է եզրափակում գերմանական SWR-ը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Ղազախստանից ՀՀ կալանավոր է արտահանձնվել. ի՞նչ կապ ունի ՔՊ-ական պատգամավորը

Դեռեւս 2019-ի հունվարին Ղազախստանում հայ տղայի մասնակցությամբ տեղի ունեցած աղմկահարույց միջադեպից 2.5 տարի հետո Ղազախստանում կալանավորված **Նարեկ Գուրուրյանը** մոտ մեկ շաբաթ առաջ տեղափոխվել է Հայաստան: «**Ազգ**»-ին հայտնի դարձավ, որ Գուրուրյանին Հայաստան արտահանձնելու գործում ակտիվ դերակատարում է ունեցել Աժ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր **Դավիթ Դանիելյանը**: «Իշխանական պատգամավոր Դանիելյանի անձնական կապերի միջոցով է ծնունդով սարուխանցի (Գավառի շրջան- խմբ) երիտասարդը Ղազախստանից Հայաստան արտահանձնվել: Իսկ անձնական կապերը, պարզվում է, ոչ միայն Հայաստանի, այլ անգամ Ղազախստանի մասին է»,- ասաց «**Ազգ**»ի զրուցակիցը:

Միջադեպը, հիշեցնենք, Կարագանդայի ռեստորաններից մեկում էր տեղի ունեցել: Կենցաղային հողի վրա ռեստորանի այցելուների միջեւ ծեծկռտուք էր սկսվել, ինչի հետեւանքով 3 մարդ վիրավորվել, մեկը մահացել էր: Ծեծկռտուքի եւ սպանության փաստով ձերբակալել էր 7 անձ, որոնցից 5-ը կալանավորվել էին: Նարեկ Գուրուրյանի նկատմամբ համապետական հետախուզում էր հայտարարվել, ինչից հետո նրան Ռուսաստանում ձերբակալել էին, այնուհետ Ղազախստան տեղափոխել:

Ի դեպ, «Ազգ»ին հայտնի դարձավ նաեւ, որ արվեստագետ-պատգամավորն (նկարիչ է) այսօր պատրաստվում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ այցելել ու տեսակցել երիտասարդի հետ:

Մենք կապ հաստատեցինք ՔՊ-ական պատգամավորի հետ՝ հասկանալու համար, թե ի՞նչ կապ կամ շահագրգռվածություն ունի աղմկահարույց միջադեպի մասնակից դատապարտյալին Հայաստան տեղափոխելու հարցում: «Կարող եմ ասել միայն, որ իմ մտերիմն է, ու նա այժմ Հայաստանում է: Սրանից բացի այլ մեկնաբանություն չունեմ»,- նշեց Դանիելյանն՝ ըստ երեւույթին հաստատելով մեր տեղեկությունը:

Ս. Վ.

ՆԱԻՐ ՅԱՆ

Քրիստոսը դեռ համբերում է

Սահմանադրության օրվա առթիվ պետբյուջեից ֆդ-ական պատգամավորների պարգեւավճարի համար հատկացվել է 49 միլիոն դրամ: Շարֆային պատգամավորն ստացել է 660 հազար, հանձնաժողովի նախագահը՝ 800 հազար դրամ պարգեւավճար: Պետբյուջեից 4,2 միլիարդ դրամ է հատկացվել «Շանգրի լա» խաղատան պետական տուրքը մարելու համար: Հատիսի մերձակայքում 140 հա տարածք գրոշներով օտարվել ու տրվել է **Գագիկ Ծառուկյանին**, որպեսզի նա իրականացնի մոլորակի պատմության մեջ նմանը չունեցող մեգա-նախագիծը: Նրա միջավայրում այս ծրագիրն անվանվում է «Մեգա-Հիսուս»:

Հատիս սարի վրա Հիսուս Քրիստոսի արձանի տեղադրման հիմնարկեքին Գագիկ Ծառուկյանը համառորեն չասաց, թե ինչքան է ծախսելու այդ նախագծի վրա: Ինչքան պետք լինի, այդքան էլ կծախսեմ Քրիստոսի վրա՝ ասաց:

Կասկած չկա, որ ֆոսֆորապատ, 44 մետրանոց պատվանդանի վրա տեղադրվելիք 33 մետրանոց Հիսուս Քրիստոսի արձանի վրա միլիոնավոր դոլարներ են ծախսվելու: Իսկ թոշակը մյուս տարի բարձրանալու է 6000 դրամով, իսկ տնավեր ու բնավեր դարձած քաղաքացիներին բնակարան գնելու համար տրամադրվում է 10 միլիոն դրամ, պետական տուրքերը, բանկի տոկոսները հանած՝ 5-6 միլիոն էլ չի մնում:

Փաշինյանն էլ ասում է՝ պետբյուջեում հազարավոր տողեր կան, որոնք բոլորն էլ կարեւոր են: Այսինքն՝ մի հարցրեք՝ պատերազմ տեսած, Արցախից բազմահազար տեղահանվածներ ու տնազուրկներ, 12 հազար հաշմանդամ ունեցող երկրում փող ծախսելու ուրիշ տեղ չունե՞նք, որ Քրիստոսի արձան ենք կանգնեցնում, պարգեւավճար ենք տալիս, «Շանգրի լայի» տուրքերն ենք մարում: Պատերազմում ոտքը կորցրած հաշմանդամի կարգը փոխում ենք, թղթի վրա գրում՝ քրոնիկ ճնշում ունի, որպեսզի զրկենք հաշմանդամության թոշակից:

Թշնամին Նախիջեւանի կողմում զենք-զինամթերք, զորք է կուտակում, ամեն օր տարբեր զինատեսակներից կրակ է բացում սահմանի տարբեր ուղղություններով, զորավարժություններ է անում, միջազգային ժողովներ է անում ու հայտարարում, թե Երեւանում ավերվում է հին ադրբեջանական մշակույթը՝ ի դեմս Կոնդ թաղամասի, թե գալու են, տեր կանգնեն իրենց Կապույտ մզկիթին, իսկ Հայաստանի իշխանությունները Թուրքիայից ու Ադրբեջանից հնչող հոխորտանքները չլսելու են տալիս ու թիթեռ են նկարում:

Պաշտպանության փոխնախարարն ասում է՝ մենք հիմա Ադրբեջանի հետ երկար սահման ունենք, կրակոցներ կլինեն, բա իհարկե: Պաշտպանության նախարարն էլ Խաչիկ ու Ելփին գյուղերի ուղղությամբ կրակոցների վերաբերյալ հայտարարում է՝ պետք չէ մեծ խնդիր դարձնել, կրակոցներ միշտ էլ լինում են:

Գյուղացին Փաշինյանին ասում է՝ պարարտանյութը թանկ է, նա պատասխանում է՝ ամբողջ աշխարհում է թանկ: Թշնամին մեզ շրջափակման մեջ գցելու համար օրուգիշեր ճանապարհներ է սարքում, Հայաստանի իշխանությունները գյուղամիջի ճանապարհների որակն են ստուգում:

Էկոնոմիկայի նախարար **Քերոբյանի** մաթեմատիկան ուրիշ է՝ Հայաստանում գնաճը զսպել չեն կարողանում, բայց աշխարհում չկա մի երկրորդ երկիր, որտեղ տնտեսական այսպիսի աճ գրանցված լինի, ինչպիսին Հայաստանում է: Քերոբյանի գնահատմամբ՝ Հիսուս Քրիստոսի արձանը «շռնդալից զբոսաշրջություն» է ապահովելու:

Ջուգաշեռ իրականության մյուս կողմում խրախճանքներից, անհեթեթ երեւույթներից, մանկուրտիզմից դուրս փորթաթիվ մարդիկ են ապրում, որոնք մոլորվել-շվարել են պետականակործան, ազգադավ այս իրողությունների հորձանուտում: Ամեն օր մի նոր հարված, նախորդին գերազանցող զառանցանք ու անհեթեթություն, որ անվրեպ իրականություն է դառնում: Ու

շարունակվում է իշխանության ինքնասվածացման, ինքնաֆետիշացման, նարցիցիզմի, անկրկնելի ցինիզմի ամենօրյա մղձավանջը:

«Մեգա-Հիսուս» սրբապիղծ արտահայտությունն արտասանելիս անգամ պետք է խաչակնքել, մեղա գալ Աստծուն ու հենց Հիսուս Քրիստոսին, որ իր պատվիրանները, իր հավատքն առաջինը պետականորեն ընդունած երկրում պղծում են այդ նույն հավատքը, այդ նույն պատվիրանները ու նույն Քրիստոսին: Պղծում են շահույթ ստանալու, «շռնդալից զբոսաշրջություն» ապահովելու, աշխարհում ամենաթանկանոց, ամենամեծը, ամենաբարձր Հիսուսն ունենալու համար: Այն պետք է անպայման գերազանցի Ռիո դե Ժանեյրոյի Հիսուսի արձանին, որի բարձրությունը պատվանդանի հետ ընդամենը 38 մետր է, ծանրությունը 1145 տոննա է, տեղադրված է Կորկովադու լեռան վրա:

2528 մետր բարձրությամբ Հատիսի գագաթն արդեն ֆերել-հարթեցրել են, լուսանկարներում երեւում է, թե ինչպես են արձանի տեղադրման նախապատրաստական աշխատանքների համար սարի վրա ճանապարհներ «տաշվել», «Մեգա- Հիսուսն», անտարակույս, չէր կարող Ռիո դե Ժանեյրոյի Հիսուս Ամենափրկիչ արձանին չգերազանցել իր բարձրությամբ, քաշով, ինչպես նաեւ տարաբնույթ խոսակցություններով, քննարկումներով, վեճակռվով: Մերը բոլոր առումներով պետք է ճոխ լինի:

Պարզվում է՝ այն գերատեսչությունները, որոնք պատասխանատու են Հատիսի՝ որպես երկրաբանական, հնագիտական հուշարձանի աղավաղման համար, լրատվամիջոցներից են տեղեկացել «Մեգա-Հիսուսի» արձանի տեղադրման մասին ու հանրային բողոքից ու ընդվզումից հետո միայն որոշել կենդանության նշաններ ցույց տալ՝ մասնագիտական գնահատականներ տալով նախագծին:

«Հատիս հրաբուխ» անունով 2008 թվականին երկրաբանական, բնության հուշարձան ճանաչված Հատիսի վրա շինարարական աշխատանքներ կատարելն արգելվում է օրենքով: Հուլիսի 9-ին շինարարական աշխատանքների մեկնարը տրվել է, ճանապարհաշինությունն իրականացվել է, սարի գագաթը հարթեցվել է, իսկ մասնագիտական հանձնաժողովների փորձաքննության արդյունքները նոր-նոր են սկսել պահանջել:

Չնայած՝ ի՞նչ կա զարմանալու. այս իշխանությունների ձեռագրին, գործելաոճին համապատասխան հերթական նախագիծն է. նախ անում են, ինչ կամենան, ինչ խելքներին փչի, հետո միայն մտածում թույլատրելիության մասին. թքած, թե արդյունքում անդառնալի հանցանք չի գործվելու:

Ինչպես եղավ պատերազմի ժամանակ՝ կռվեք, հազարներով սպանվեք, ես կհանձնեմ նաեւ թշնամու ոտք չդրած հողերը, բայց եկեք պայմանավորվենք՝ ինչ էլ լինի, մենք մեզ պարտված չենք համարի: Պատերազմը չեմ կանգնեցրել, թեեւ երկու անգամ դրա հնարավորությունն ունեցել եմ, չեմ կանգնեցրել, որ չասեն՝ դավաճան ես: Պատերազմը կարող էի կանգնեցնել, բայց կունենայինք նույն արդյունքը, իհարկե, առանց զոհերի:

Կոտայքի մարզի դիահերձարանում տղաների մարմիններն ու մասունքները նետված են գետնին՝ որդերի ու գարշահոտի մեջ. չի բացահայտվի այս խայտառակությունը, շատ լավ, կբացահայտվի, դե ի՞նչ արած: Նախկինները քի՞չ հանցանք են գործել:

Հատիսը նաեւ հնագիտական հուշարձան է, որի գագաթին գտնվում է բրոնզ-երկաթեդարյա ամրոց (ժողովրդական անունը՝ Շամիրամի կամ Քյոռօղլու բերդ)

Հնագետ **Համլետ Պետրոսյանը** հայտարարել է, որ Հատիսի ամբողջ լանջը ճեղքել ու ճանապարհ են անցկացրել՝ խաթարելով մշակութային բազմաթիվ շերտեր, իսկ լեռան գագաթի ամրոցի մի զգալի մասն ավերվել է:

Կարիք չկա, որ թշնամին մեր երկիրն ավերի, մենք նրանից շուտ կանենք դա ու մեր իսկ ձեռքով, ինչ է թե «շռնդալից տուրիզմ ենք զարգացնում», ինչ է թե քաղաքական հարթության վրա առուծախի միջոցով միջանձնային հարաբերություններ են «շտկվում»:

Եվ այս ճղճիմ, արգահատելի քաղաքական առուծախի մեջ՝ Հիսուս Քրիստոսը, որն ինքն է դեմ եղել, որ որեւէ մեկին մարդիկ կուռք սարքեն, մեր եկեղեցին է դեմ դրան: Բայց այստեղ կուռքի, պաշտամունքի, քրիստոնեական հավատի նշույլ անգամ չկա:

Թշնամին ատամները սրած պատրաստվում է հոշոտել քրիստոնյա երկիրը, իսկ քրիստոնյա երկրում փոխանակ պատրաստվեն, որ թշնամուն դիմակայեն, որ չմահմեդականացվենք, փող աշխատելու մոլուցքով են տարված՝ «Մեգա-Հիսուսի» արձանն են կանգնեցնում:

Ու Հիսուս Քրիստոսը դեռ համբերում է:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ռուս-իրանական հարաբերությունների մերձեցմանը նպաստող ազդակները

Իրանագետ

2022 թվականի հունիսի 29-ին Մադրիդում գումարված ՆԱՏՕ-ի գագաթաժողովի ժամանակ ազդարարվեց այդ ռազմականացված կառույցի աշխարհընկալման մեջ նշանակալի փոփոխությունների հեռանկարի մասին: Ատլանտյան օվկիանոսի երկու ափերն իրար միացնող այս կառույցը, փոխելով իր ռազմավարությունը, հանդես եկավ Եվրոպայում եւ դրանից անդին սպասվող վերահաս «հեղաշրջման» մասին հայտարարությամբ:

Ուկրաինական ճգնաժամին նվիրված գագաթաժողովի ժամանակ Ռուսաստանը հռչակվեց որպես թշնամի երկիր, իսկ Չինաստանը՝ պոտենցիալ թշնամի, եւ դրանից բխող վտանգների չեզոքացմանն ուղղված ռազմավարության մշակումը՝ խիստ անհրաժեշտ: Այդ օրը Թուրքիայի, Շվեդիայի ու Ֆինլանդիայի միջեւ եռակողմ հայտարարագրի ստորագրման փաստը գնահատվեց որպես ՆԱՏՕ-ի պատմության կարեւոր էջերից մեկը:

Նույն օրը՝ հունիսի 29-ին, Աշխարհում անցկացված Մերձկասպյան երկրների վեցերորդ գագաթաժողովը չի կարելի ՆԱՏՕ-ի նոր քաղաքականությանն ուղղված ՌԴ նախագահ Պուտինի համարժեք քայլ համարել, որքան էլ որ 2007 թվականին կազմակերպության անդամ պետությունների ստորագրած փաստաթղթում նշված է, որ կողմերը պայմանավորվել են «ոչ մի պարագայում թույլ չտալ օգտագործել իրենց տարածքը կողմերից յուրաքանչյուրի դեմ այլ պետությունների ագրեսիայի կամ ռազմական այլ գործողությունների համար»:

Աշխարհի գագաթաժողովի շրջանակներում ՌԴ եւ ԻԻՀ նախագահներ **Պուտինն** ու **Ռայիսին** ընդամենը վերահաստատել են 20-ամյա համագործակցության փաստաթղթի ստորագրման անհրաժեշտությունը, որը 2022 թ. հունվարի 19-ի մոսկովյան այցելության ժամանակ ԻԻՀ նախագահ Ռայիսին պետք է ստորագրեր Ռուսաստանի նախագահի հետ, սակայն անհայտ պատճառներով դրա ստորագրումը հետաձգվել է:

Եվ ահա, Պուտինի խոսնակն օրերս հայտարարեց Ռուսաստանի նախագահի Թեհրան այցելության ժամկետների եւ այցի ծրագրի մասին, որի շրջանակներում տեղի է ունենալու նաեւ Իրան-Թուրքիա-Ռուսաստան նախագահների եռակողմ հանդիպում:

Պաշտոնական Մոսկվան հայտարարում է, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի Թեհրան այցելության եւ եռակողմ հանդիպման ժամանակ չի քննարկվելու ուկրաինական թեման, եւ բանակցությունների առանցքը կազմելու է Սիրիային վերաբերող հարցը: Իսկ Իրանի մեջլիսի տնտեսական հանձնաժողովի նախագահ **Փուր-Էբրահիմիին** հայտնի է, որ Պուտինի այցի ժամանակ, բնականաբար երկկողմ ձեւաչափով, քննարկումների գլխավոր թեման առնչվելու է տնտեսական համագործակցությանը: Փուր-Էբրահիմին համոզված է, որ Արեւմուտքի կողմից Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներն ստիպում են Մոսկվային տնտեսական հարցերում ավելի մոտենալ Թեհրանին:

Պուտինի այցը Թեհրան եւ Իրան-Ռուսաստան հարաբերությունների ակտիվացման այս հանգրվանը նաեւ համընկնում է ԱՄՆ նախագահ **Բայդենի** մերձավորարեւելյան այցելությանը, որի նշանակությունը, հաշվի առնելով ԱՄՆ-ի կողմից ձեւավորվելիք նոր հակահրանական կոալիցիայի հեռանկարը, նույնպես չի կարելի անտեսել:

Պուտինի Թեհրան այցելության ժամկետների հրապարակումից անմիջապես հետո ԱՄՆ նախագահի՝ անվտանգության հարցերով խորհրդական **Ջեք Սալիվանը** խստորեն քննադատել է Իրանին՝ ուկրաինական պատերազմի ժամանակ Ռուսաստանի հետ համագործակցության համար՝ նշելով, որ ԱՄՆ տիրապետած տեղեկատվության համաձայն՝ Իրանը պատրաստվում է Ուկրաինայի դեմ ռազմական գործողությունների համար Ռուսաստանին ԱԹՍ-ներ մատակարարել, որի նախապատրաստական աշխատանքները, ըստ Սալիվանի, մեկնարկել են:

Հատկանշական է, որ ուկրաինական ճգնաժամի բռնկումից հետո Պուտինն ընդամենը մեկ անգամ, այն էլ Թուրքմենստանում անցկացված Մերձկասպյան երկրների վեցերորդ գագաթնաժողովին մասնակցելու եւ հընթացս՝ Տաջիկստան այցելելու նպատակով է Ռուսաստանից բացակայել:

Ռուսաստանի նախագահի օտարերկրյա այցելությունների հաջորդ նշանակետն Իրանն է, որը կարեւոր է թե՛ ուկրաինական ճգնաժամի պատճառով տնտեսական շրջափակման մեջ հայտնված Ռուսաստանի, եւ թե՛ տնտեսական պատժամիջոցների ծանր բեռը թոթափելու նպատակով, որպես ճարահատ քայլ, հայացքը դեպի Արեւելք ուղղած Իրանի համար:

Հայաստան-Թուրքիա բանակցութեանց ելքն ու անելը

Հայաստան-Թուրքիա բանակցութեանց չորրորդ նիստէն ետք վարչապետ **Նիկոլ Փաշինեանը** յայտարարեց. «Հիմա շատ կարեւոր է, որ մեր գերատեսչութիւնները Թուրքիայի համապատասխան գերատեսչութիւնների հետ աշխատեն, որովհետեւ այդ աշխատանքից է կախուած պայմանաւորուածի իրագործումը: Իմ յանձնարարութիւնն է համադրուած (կոորտինացուած) աշխատանք, որ հնարաւորինս շուտ կարողանանք իրագործել ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները»:

Իսկ Հայաստանի տնտեսութեան (էկոնոմիկա) նախարար **Վահան Քերոբեանը** աւելցուց. «Հիմա մենք ըստ էութեան Հայաստանը փակուղուց դուրս ենք խաչմերուկ»:

Սակայն, այս բանակցութեանց նկատմամբ կարծիքները միատեսակ չեն, կան բազմաթիւ հարցականներ, որոնք կը մնան անպատասխանի: Օրինակ, հարցականի տակ է, թէ իսկապէս բանակցութիւնները կ՚ընթանան առանց նախապայմաններո՞ւ, թէ՝ որոշ նախապայմաններով: Հարցականի տակ կը շարունակէ մնալ նաեւ արհեստավարժ ձեռնհասութիւնը Հայաստանի կողմէ բանակցող **Ռուբէն Ռուբինեանի**. չորրորդ հանդիպումէն վերջ ձեռք ձգուած արդիւնքը՝ սահմանը բանալ երրորդ երկիրներու խաղաքաղաքացիներուն կը մնայ իբրեւ թնճուկ:

Հայաստան երեք տասնամեակէն ի վեր կը գտնուի շրջափակման ներքեւ, հետեւաբար ուեւէ տրամաբանող հայ համամիտ պիտի ըլլար բանակցութեանց՝ եթէ անոնց արդիւնքը պիտի նշանակէր շրջափակման վերացումը:

Հայաստանի մէջ որեւէ խաղաքաղաքական հարց կը դիտուի երկրին մէջ յառաջացած բեւեռացման պրիսմակէն: Նոյնիսկ կենացմահու խնդիրներ կ՚առնչուին Փաշինեանին ի նպա՞ստ, թէ՞ դէմ ըլլալու հարցականին: Այդ իմաստով ալ իշխանութիւնն ու իշխանամէտ մամուլը փրկարար լաստի հանգամանք կը վերագրեն այս բանակցութեանց, իսկ ընդդիմադիրներն ալ կը գործածեն զանոնք իբրեւ իշխանութիւնները խնբծելու միջոց:

Հետեւաբար, դժուար է, եթէ ոչ՝ անկարելի, այս յոյժ կարեւոր բանակցութիւնները դուրս բերել բեւեռացման այս պարունակէն եւ դիտել զանոնք իրենց ինքնարժէքով, իրենց խաղաքաղաքական, պատմական եւ իրական տարողութեամբ:

Պէտք է յիշել, որ թուրքերը կամովին չձեռնարկեցին այս բանակցութեանց. այլ ընթացք տուին նախագահ **Պայդընի** առաջարկին. եւ այս բանակցութեանց կը մասնակցին այնպէս՝ ի ցոյց մարդկան: Ամբողջ այն տարիներուն, երբ շրջափակման մէջ էր Հայաստանը, Թուրքիոյ միակ պայմանը այն էր, որ Լեռնային Ղարաբաղի հարցը պէտք էր լուծուէր ի նպաստ Ատրպէյճանի: Հիմա որ այդ պայմանը բաւարարուած է, սահմանը կը շարունակէ մնալ փակ, եւ Անքարան նոր պայմաններ կ՚առաջադրէ, հակառակ որ իբր թէ կը մասնակցի բանակցութեանց առանց նախապայմաններու: Եւ Հայաստանը աչք կը փակէ՝ ձեւացնելով, որ չի տեսներ Թուրքիոյ կողմէ առաջադրուած այս նոր պայմանները: Բացայայտ երեւոյթը, որ Թուրքիան կը բանակցի նախապայմաններով՝ այն է թէ բանակցութեան մէջ իւրաքանչիւր քայլափոխ ան կը ստանայէ Ատրպէյճանի իշխանութեանց հետ, որ կը սահմանէ չափազանց ծանր պայմաններ: Բանակցութեանց չորրորդ նիստէն երեք օր առաջ, Պաքուի մէջ կայացած Թուրքիոյ, Ատրպէյճանի եւ Ղազախստանի արտաքին գործոց նախարարներու հանդիպման Թուրքիոյ արտաքին գործոց նախարար **Մեւլութ Չաւուշօղլուն** յայտարարեց. «Մենք կ՚աջակցինք Զանգեզուրի միջանցքի բացման եւ կ՚ուզենք որ ան օր առաջ բացուի»:

Իր հերթին, թուրքագէտ **Ռուբէն Մելքոնեան** կ՚ըսէ. «Պրոֆեսիոնալ դիւանագէտների մօտ դառը ժպիտ է առաջացնում այն յայտարարութիւնը, որ Թուրքիան մեզ հետ կարգաւորման գործընթաց է սկսել առանց նախապայմանների: Աւելի ակնյայտ պայմաններ ան դրուած է հայ-թուրքական յարաբերութիւնների օրակարգում, երբեւէ չեն եղել: Էրտողանի յայտարարութիւնը, թէ մինչեւ չսորագրուի Ատրպէյճանի հետ խաղաղութեան պայմանագիր, Արցախը չճանչցուի Ատրպէյճանի մաս, որեւէ քայլ չենք առնելու, նախապայմաններ չե՞ն»:

Պարզ է, որ Թուրքիան կը բանակցի - կամ աւելի՝ բանակցիլ կը ձեւացնէ - զիջումներ կորզելու Հայաստանէն: Ան յաջողած է արդէն չեզոքացնել փոխադարձ նախապայմանները հայկական կողմէն, մանաւանդ՝ ցեղասպանութեան ճանաչման հարցը, որ պատմական պարտամուրհակ մըն է Թուրքիոյ վզին՝ կամովին զանց առնուած է Հայաստանի կողմէ, որովհետեւ Փաշինեան հրապարակաւ կը յայտարարէ որ ցեղասպանութեան հետեւանքների հարցը Սփիւռքի պարտականութիւնն է:

Այս բանակցութեանց ընթացքին յաճախ արդիւնքներու մասին առաջին լուրերը կը հասնին թրքական կողմէն, ապա հաստատուելու համար Երեւանէն: Այս գործընթացին մէջ միշտ գլուխ կը ցցէ հարցականը Հայաստանի կողմէ բանակցող Ռուբէն Ռուբինեանի մասնագիտական հմտութեան մասին. ան իր վերջին հանդիպումէն ետք թուրք բանագնաց **Սերտար Քըլըչի** հետ՝ հարցազրոյց մը ունեցաւ **Պետրոս Ղազարեանին** հետ եւ իր տուած պատասխանները դպրոցականի սորված բանաձեւերու բնոյթն ունենային կարծէք. մանաւանդ երբ հարցազրուցողը հեգնանքով հարցուց, թէ իսկապէ՞ս առանց նախապայմաններու կը կատարուին բանակցութիւնները, առանց դէմքի մկանի շարժումի՝ տուաւ միեւնոյն պատասխանը:

Այդ ուղղութեամբ Յուլիս 6ին Lur.com մէջ երեւցաւ յօդուած մը զգայացունց վերնագրով, թէեւ ոչինչ կար զգայացունց, այլ միայն՝ մտահոգիչ կարգադրութիւն մը, ուր մէջբերուած էր վկայութիւնը Լեհաստանի մէջ Հայաստանի նախկին դեսպան **Էտկար Ղազարեանի,** որ վեր կ՚առնէր այն փաստը որ բանակցութեանց չորրորդ հանդիպման Ռուբէն Ռուբինեանին ընկերակցած է «իբրեւ նաժիտ» յայտնի թրքագէտ **Արսէն Աւագեանը**, մինչդեռ այդ դերերը շրջուած պէտք է ըլլային, ու կ՚աւելցնէ. «Նիկոլ Փաշինեանը չի վստահում պրոֆեսիոնալ դիւանագէտներին, իսկ արտասահմանեան առաքելութիւնների գործուղում է իր կնոջը, թիմակից անպիտաններին, իսկ պրոֆեսիոնալներին կարգում է դրանց սպասաւոր՝ խախտելով դիւանագիտական սկզբունքներն ու նորմերը, որոնք ոչ մէկ դէպքում անհետեւանք չեն մնում»:

Թէեւ որոշ խստութեամբ բնութագրուած է երեւոյթը, սակայն խորին մէջ իրական է, որ այսօրուան իշխանութիւնը աւելի կը վստահի իւրայիններուն, քան արհեստավարժ դիւանագէտներու: Հայաստան-Թուրքիա բանակցութիւնը այն տեղը չէ, որ մենք կրնանք վերաբերիլ տնավարի որոշումներով:

Յուլիսի 1-ին, Հայաստանի եւ Թուրքիոյ բանագնացները հանդիպեցան չորրորդ անգամն ըլլալով: Այդ նիստին ընթացքին արձանագրուած է որոշ տեղաշարժ եւ առնուած է երկու որոշում. ի դէպ, այդ որոշումները ունին քաղաքական բնոյթ եւ կրնան իրականանալ միայն այն պարագային, երբ կողմերը կը դիմեն գործնական քայլերու: Ուրեմն արդիւնքներէն առաջինն է. «Հնարաւոր ամենասեղմ ժամկէտի մէջ Հայաստան-Թուրքիա ցամաքային սահմանը հատելու հնարաւորութիւն առպահովել Հայաստան եւ Թուրքիա այցելող երրորդ երկիրներու քաղաքացիներուն համար»: Դժուար է կռահել տրամաբանութիւնը այս որոշման-. «Այո, ըսաւ Ռուբինեան յիշեալ հարցազրոյցի ընթացքին,- ուեւէ երկրի քաղաքացի կրնայ հատել հայ-թրքական սահմանը, բացի Հայաստանի ու Թուրքիոյ քաղաքացիներէն»: Ռուբինեան պատասխան մը չունի այդ առեղծուածային որոշման մասին, սակայն վերլուծաբանները յանգած են այն եզրակացութեան, որ այդ «երրորդ երկրի քաղաքացիները» կրնան ըլլալ միայն ատրպէյճանցիները, որոնց կը շնորհուի «երկրորդ միջանցք մը», այս անգամ Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանին վրայ: Մինչդեռ, ի դէպ, մերժուած է Հայաստանի կողմէ ներկայացուած առաջարկը, որ սահմանը բացուի գոնէ դիւանագէտներուն համար:

Այս միեւնոյն նիստին առնուած երկրորդ որոշումը կ՚արտօնէ երկու երկիրներու միջեւ օդանաւային բեռնափոխադրումը:

Թէ ինչո՞ւ այսման դանդաղ կ՚ընթանան բանակցութիւնները՝ յստակ է պատասխանը. առաջինը այն է, որ Անքարան կ՚ուզէ ցոյց տալ նախագահ Պայդընին, որ ընթացք տուած է իր ցանկութեան եւ սկսած է բանակցութիւններուն: Սակայն, պարզ է, որ այդ բանակցութիւնները արդիւնքի պիտի չյանգին, մինչեւ այն ատեն, որ Հայաստանը չպարտաւորուի ստորագուցիչ «խաղաղութեան պայմանագիր» մը կնքել Ատրպէյճանի հետ: Եւ այնուհետեւ ալ վերջ պիտի չգտնեն քաքքուքները, որովհետեւ Անքարան առաջ պիտի քէր իր սեփական քաղաքական օրակարգը. եւ ան պիտի հաւատայ, որ Հայաստան պիտի յօժարի անոնց եւս ընթացք տալ, քանի կը գտնուի տկար դիրքի վրայ: Այդ օրակարգի վրայ անխուսափելիօրէն պիտի երեւնան 1921ի Կարսի պայմանագրի վերահաստատումը Հայաստանի կողմէ, ամրագրելու համար Հայաստան-Թուրքիա ներկայ սահմանը: Իսկ ցեղասպանութեան ճանաչման պայքարը արդէն փոխանցուած է Սփիւռքին՝ Փաշինեանի կողմէ: Սակայն, Թուրքիան այդքանով ալ պիտի չբաւականանայ, այլ պիտի պնդէ, որ Հայաստանի իշխանութիւնները զսպիչ դեր կատարեն Սփիւռքի վրայ, հրաժարելու Ցեղասպանութեան քաղաքական պայքարէն, ինչ որ սեղ մը պիտի խրէ Սփիւռքի եւ հայաստանցիներուն միջեւ: Այսօր Հայաստանի մէջ դանդաղօրէն տեղ կը գտնէ այն մտայնութիւնը, որ տանք Արցախը եւ հանգիստ կեանք մը ունենանք. նոյն տրամաբանութիւնը կրնայ հասնիլ նաեւ Ցեղասպանութեան խնդրին:

Թուրքիոյ դիւանագէտներուն հնարամտութիւնը շատ բեղուն է: Բանակցութիւնները երկկողմանի գոհացման հասցնելու ճամբան պիտի երկարեն, հաւանաբար մինչեւ յաջորդ սերունդը:

Հետեւաբար ներկայ բանակցութեանց ելք մը ակնկալելը տակաւին շատ կանխահաս է, չըսելու համար, թէ բանակցութիւնները ելքէ աւելի՝ կրնան յանգիլ նաեւ անելի:

Խմբագրական
«Պայքար» շաբաթաթերթի,
յուլիս 10, 2022

Ամերիկացի սենատորի «ռուսական» պահանջը Թուրքիայից

ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ **Ռոբերտ Մենենդեսը** կհանի Թուրքիային F-16 կործանիչների վաճառքի դեմ իր առարկությունները՝ պայմանով, որ այդ երկիրը հրաժարվի ռուսական S-400 հրթիռային համակարգերից եւ դադարեցնի Ռուսաստանի հետ սերտ հարաբերությունները: Ռուսական որոշ լրատվամիջոցների փոխանցմամբ, սենատորի այս հայտարարությունը հրապարակել է Աթենքի ԱՄՀԱ լրատվական գործակալությունը:

«Ես շատ հստակ արտահայտվել եմ Թուրքիային F-16-ների վաճառքի վերաբերյալ: Մենք մեր ռազմական տեխնիկան վաճառում ենք ըստ որոշակի չափանիշների նրանց, ովքեր կիսում են մեր արժեքները, եւ ոչ թե միայն ֆինանսական շահի համար»,- ԱՄՀԱ-ին հայտարարել է Մենենդեսը:

Սենատորն Անկարայի հանդեպ մի շարք պահանջներ է առաջ քաշել: Դրանց թվում ե՛ւ ռուսական S-400-ների, ե՛ւ հունական կղզիների վրայով թռիչքների, ե՛ւ լրագրողներին ու փաստաբաններին ազատություն շնորհելու հարցերն են: Քաղաքագետի խոսքով՝ չլուծված հարցերը շատ են եւ դրանք պետք է լուծվեն, սակայն Թուրքիայի նախագահ Էրդողանի կողմից նման քայլերի պատրաստակամություն առայժմ չի նկատվում:

Հայտնի է, որ Թուրքիան ձգտում է ԱՄՆ-ից գնել 40 հատ F-16 կործանիչներ եւ արդիականացնել նախկինում արդեն ձեռք բերված 80-ը: Հունական գործակալության վկայությամբ, Ռոբերտ Մենենդեսը համարվում է այն մարդը, որը «տիրապետում է F-16-ի բանալիներին»: Որպես Սենատի միջազգային հարաբերությունների կոմիտեի նախագահ նա ի պաշտոնե իրավունք ունի «վետո» դնելու ամերիկյան սպառազինության համակարգերի վաճառքի վրա:

Հիշեցնենք, որ ամերիկացի մի խումբ կոնգրեսականներ էլ հայտարարություն են ստորագրել՝ առարկելով Թուրքիային ամերիկյան կործանիչների վաճառքի դեմ: Մյուս կողմից, ինչպես «**Ազգ**»ի նախորդ համարներից մեկում տեղեկացրել ենք, ԱՄՆ նախագահ **Ջո Բայդենը** վերջերս հայտարարել է, որ մտադիր է Կոնգրեսի հավանությունը ստանալ այդ վաճառքի հարցում:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

«Հիմա ռուս խաղաղապահն այլեւս հյուր չէ, նրանցից շատերը փորձում են անգամ հայերեն խոսել»

«Ազգ»ի զրուցակիցն է Արցախի Ազգային ժողովի «Արդարություն» խմբակցության պատգամավոր Մեսրոպ Հակոբյանը

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

- Բերձորի, Աղավնոյի ու Սուսի մասին մոտ տասն օր առաջ բոլորին զայրացրած լուրը կարծես հենց այնպես, հարեւանցի, ցնցեց ու անցավ, այնինչ դրա մասին դեռ 2020-ի նոյեմբերիանյան հայտարարությունից հետո էինք ահազանգում, որ այլընտրային ճանապարհի կառուցումը մեր շահերից չի բխում: Հայաստանյան իշխանությունները հստակ հայտարարել են, որ այդ գյուղերից պետք է հեռանանք, ի՞նչ են մտածում Արցախում: Որեւէ ելք, լուծում, միջոց տեսնո՞ւմ եք:

- 2021-ի նոյեմբերից առդեն իսկ գիտեինք, որ ինչ-որ ճանապարհ է կառուցվում, եւ այն որեւէ կապ չունի 2020-ի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության հետ: Հայկական իշխանությունները լռում էին, իսկ Ալիեւը անդադար խոսում էր դրա մասին ու հայտարարում, որ այն կարճ ժամանակում շահագործման է հանձնվելու: Բազմաթիվ անգամ փորձել ենք ոչ հրապարակային ճշտել՝ խոսքն արդյո՞ք թշնամու օկուպացրած տարածքներով անցնող ճանապարհի մասին է: Սակայն հայաստանյան իշխանություններն, իրենց որդեգրած ուղուց չշեղվելով, այս անգամ եւս խոսեցին այն ժամանակ, երբ ամեն բան ակնհայտ էր, կառուցվող ճանապարհն էլ եկել, հասել է մեզ: Այն, որ այլընտրանքային ճանապարհը մեր շահերից չի բխում, հստակ է: Ի դեպ, այն որեւէ առնչություն չունի 2020-ի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 6-րդ կետի հետ: Ըստ այդ կետի՝ հստակ ձեւակերպված է՝ նոր երթուղին պիտի անցնի Լաչինի միջանցքով, իսկ այդ դեպքում չի կարող քննարկվել Բերձորի, Աղավնոյի եւ Սուսի հանձնումը: Սակայն այն երթուղին, որը առաջարկվում է՝ դուրս է Լաչինի միջանցքից, այսինքն՝ անցնում է 5 կմ-ի սահմանը եւ չունի միջանցքի իրավական կարգավիճակ: Եվ այս պարագայում, երբ հայկական իշխանությունները հերթական պարտությունն են գրանցում, ոչ միայն Բերձորն, Աղավնոն ու Սուսն են հանձնում, այլեւ անվտանգային լուրջ խնդիր են առաջացնում մի պատառիկ մնացած Արցախի ու Արցախում բնակվողների համար: Ե՛վ ելք, եւ՛ միջոց, եւ՛ լուծում միշտ կա, երբ կա բանակցող: Ցավոք մենք զրկված ենք այդ ամենից, քանզի ադրբեջանական կողմի հետ «բանակցում» են Հայաստանի՝ պարտված եւ Ադրբեջանի շահերը սպասարկող իշխանությունները: Հակառակ դեպքում՝ պետք էր կասեցնել այս գործընթացը եւ պահանջել եռակողմ հայտարարության կետերի իրականացում, որոնք առ այսօր Ադրբեջանը բացահայտ խախտում է, իսկ հայկական իշխանությունները լուռ հնազանդվում են:

- Պատերազմից ավելի քան տարիուկես է անցել, ու դրանից հետո թե՛ Հայաստանը, թե՛ Արցախը կարծես միայն զիջողի դերում են եղել: Դուք՝ որպես Արցախում ապրող, երբեւէ կմտածեի՞ք, որ կգա մի օր, երբ ամեն բան այսքան անիրական թվացող գորշ կլիներ:

- Դեռ 2018-ի իշխանափոխությունից հետո արդեն իսկ

ակնհայտ էր, որ իշխանությունը զավթել են մարդիկ, որոնք զուրկ են ազգային մտածողությունից, ազգային արժեքների կրողները չեն եւ «ժողովրդավարության» ու «ազատության» քողի տակ ազգին հրամցնելու են աշխարհի վաս բարքերն ու մտածողությունը: Իշխանազավթումից մեկ տարի անց, երբ արդեն որոշակի «հաջողություն» էին գրանցել, սկսեցին բացահայտ խոսել ու գործել ի շահ Ադրբեջանի եւ Թուրքիայի: Ազգի այն հատվածը, որը սթափ գնահատում էր իրավիճակը եւ տեսնում մոտեցող արհավիրքը, տեսնում էր նաեւ այս օրը: Մեծ ցավ ու տառապանք են այն հիշողությունները, երբ հատկապես Արցախում դեռեւս պատերազմից մեկ տարի առաջ մարդկանց խնդրում էինք սթափվել, իրականությունից չկտրվել ու տեսնել ակնհայտը: Ավա՜ղ, ազգի մի հատվածը չցանկացավ տեսնել, լսել, այլ գերադասեց տվել խաբկանքին, հավատալ տված սին ու դատարկ խոստումներին:

- Ի՞նչ տրամադրություն, հոգեվիճակ է այսօր արցախցու մոտ: Մենք Երեւանում շատ ենք քննարկում, քննադատում, այնինչ իրական պատերազմ տեսած մարդու մտորումներն ու կյանքը բոլորվին այլ է: Այսօր ի՞նչ է մտածում ու անում արցախցին:

- Արցախցին կորցրել է իր վաղվա օրը, այն այլեւս չի պլանավորվում, քանզի անորոշ է, մշուշապատ: Առաջին հայացքից կարծես ամեն բան հունի մեջ է ընկել. մարդիկ աշխատում են, առօրյա հոգսերով են զբաղված, սակայն օդում լարվածություն ու կախված մի հարց կա՝ էլ ի՞նչ սպասել, իսկ սպասելիքները լավատեսական չեն: Սակայն մի բան հաստատ գիտենք. պիտի ապրենք Արցախում, թեկուզ եւ վիրավոր, վտանգված, ոչ բարեկեցիկ, բայց պիտի ապրենք այստեղ:

- Գրեթե որեւէ անգամ չի խոսվել ռուս խաղաղապահների՝ Արցախում հաստատվելու մասին: Ինչպե՞ս է ստացվում նրանց հետ տարրական շփումը, համակեցությունը:

- Սկզբում, երբ ռուս խաղաղապահները տեղակայվեցին Արցախում, արցախցիներն իրենց բնորոշ հյուրընկալությամբ եւ ջերմությամբ ընդունեցին, նաեւ այն գիտակցմամբ, որ հենց նրանց հետ կողք կողքի դեռ ապրելու են: Հիմա ռուս խաղաղապահն այլեւս հյուր չէ, նրանցից շատերը փորձում են անգամ հայերեն խոսել, շատ արագ հարմարվեցին: Եթե սկզբում մարդիկ նկատում էին նրանց ու միմյանց ցույց տալիս, բայց հիմա իրենք ուղղակի հասարակության անդամ են:

- Ադրբեջանը թեեւ օրերս կրակ էր բացել արդեն Վայոց ձորի մարզում, բայց ասպես ասած հարաբերական անդորր է: Սա խաղաղության օրակարգի՞ նախերգանքն է ըստ ձեզ, թե՞ մեր վայ-հարեւանները խաղաղվել են փոքրիկից առաջ:

- Վերջերս հաճախ եմ հիշում 2020-ի ամառը: Ադրբեջանցիներն անընդհատ կեղծ լուրեր էին տարածում, որ հայկական կողմը կրակ է բացել իրենց ուղղությամբ, իսկ ՀՀ ՊՆ-ն կա՛մ հերքում էր դա, կա՛մ վստահեցնում, թե ադրբեջանական կողմն է խախտողը: Հայկական իշխանություններն էլ խոսում էին «խաղաղաղասեր» հարեւանների դրական հատկանիշներից: Սեպտեմբերին սկսվեց դաժան պատերազմը եւ 44 օր կեղծելով իրականությունը, խաբելով ժողովրդին՝ իշխանությունները բազմահազար զոհերի պատճառ դառնալով՝ հանձնեցին մեր Հայրենիքն ու հպարտորեն հայտարարեցին, որ այդ ելքն ընտրելու արդյունքում 25.000 մարդու կյանք փրկեցին: Իսկ վերջին ժամանակներում սահմանային իրավիճակը նման է 2020-ի ամռանը. տեսնես հիմա ո՞ւմ եւ ինչի՞ց են «փրկելու»:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Զրույց՝ պահանջի ու պահանջատիրոջ շուրջ

ՀՀ շարքային քաղաքացիս, որն ակտիվ լրագրությամբ է զբաղվում, փորձում հատկապես գյուղլոլորտի ու էլեկտրաէներգետիկայի ճյուղերի շուրջ հարցեր ու մտահոգություններ հայտնել արդեն իսկ կայացած ու զարգացած երկրների օրինակներով, հաճախ է հարցի արժանանում, թե ինչքանով է տեղին, ասենք, Լիտվայի կամ Շվեյցարիայի օրինակների հիշատակումը: Նշեմ, որ վերջին հրապարակումներում անդրադարձել էի այդ երկրների տնտեսական գլխավոր ցուցանիշներին, համախառն ներքին արդյունքներին: Վիճակագիրները փաստում են, որ 2018 թվականին առաջինում այն մեկ բնակչի հաշվով 17,4 հազար դոլար էր, երկրորդում 83,6 հազար դոլար, մեր գերհամեստ 4,2 հազար դոլարի կողքին: Մի առիթով տպագրված մտորումներիս հետեւյալ վերնագիրն էի դրել «Ե՞րբ կարդենք Հայաստանում»:

Ահա համեստ անձիս, ակնկալիքների հույսով ապրող շրջապատիս ու միլիոնավոր հայապաշտների ցանկությունը, որին հասնելու միջոցը մեն միակն է՝ նորին մեծություն աշխատանքը, քանզի այն նաեւ ամենաստեղծ է անվանվում: Կրկին ու հերթական անգամ հավաստեմ, որ թե լիտվացիները, թե շվեյցարացիները համառության ու նվիրվածության առումներով մարդ արարածի հայ տեսակից էապես չեն տարբերվում, որը պատեհ ու անգամ անպատեհ առիթներով հաճախ են վկայակոչում. այս երկրների ազգությամբ հայ քաղաքացիներն են նման գնահատականները կազմավորել: Այստեղ արժե հիշել, որ արդեն կայացած Լիտվան ոչ վաղ անցյալի ԽՍՀՄ շրջանում մեր բախտակից հանրապետություններից մեկն էր, իսկ բազմազգ ու բազմակրոն Շվեյցարիան ուղղակի անհասկանալի ու անբացատրելի է բոլոր առումներով: Բայց անգամ այս պարագայում Հայցարիա դառնալու մեր փափագը հարկ է ամուր պահել:

Այն մի երեք տարի առաջ առկայծեց Կավավան թե համանման մի անունով անվանվող հայաստանյան մի բնակավայրի տեսքով, որը համաշխարհային զբոսավայր դառնալու հավակնության արժանացավ, համայնքապետն էլ իշխանական բարձրագույն բազկաթոռներից մեկում հայտնվեց: Ոչինչ, որ հազիվ հարյուր բնակիչ ունեցող գյուղն անգամ բնակավայր չէր, միակ փողոցն անբարեկարգ էր առավել քան, զբոսաշրջիկներին առաջնահերթ անհրաժեշտ սրճարան չկար, ոչ էլ մոտակա անտառահանդեսից հավաքած ծաղկաստեսակներից առաջարկվող թեյարան: Փոխարենը խոստանում էին գոլֆի դաշտ ստեղծել, հոսող առվակի վրա էլ լողավազան հիմնել, անտառափայտից էլ յուրօրինակ Բաբելոնյան աշտարակ կառուցել… Այս ամենը գրառում եմ հայաստանյան գյուղի զբոսաշրջային գրավչությունը ներկայացնելու նպատակով, քանզի ըստ պատումների թե ցանկությունների՝ այստեղ մեկօրյա այցով եղել են Մոնակոյի իշխանի ընտանիքի անդամներից մեկն ու առայժմ մեն միակ ԱՄՆ-ի քաղաքացի, այս երկրի 331.000.000 բնակիչներից մեկը: Հիշեցնեմ, որ սրանք ընդամենը պատումներ են, առանց փաստարկման: Եվ հարցը, թե ոգեւորության ի՞նչ չափաբաժին է պարունակում ժամանակակից հայ գյուղական բնակավայրի այսօրինակ նկարագիրը, ինչում է ինքնաբերաբար:

Դրանցից Կավավան թե համանման մի անվանվող գյուղում կավ թերեւս շատ է եղել, դրանից նաեւ կճուճներ են պատրաստել: Բնակավայրը ոմանք նաեւ Կալավան են կոչել, փորձել կապել կալսել երեւույթի հետ, սակայն ոչ կալսելու դաշտի ցորեն է եղել, ոչ էլ մի այլ բան: Բայց արի ու տես, որ այստեղ խաղող էլ չի աճում, իսկ ահա գյուղաբնակ Հարութի կճուճները գինով լի են: Մարդը Իջեւանի տարածաշրջանի այգեգործներից մի 150 կիլոգրամ խաղող է գնել, հյութից գինի ստացել, որը համտեսողներն այն յուրահատուկ են անվանում: Յուրահատուկ-ն ըստ բացատրական բառարանների- յուրատեսակն է, յուրաստիպ-ը, յուրաբնույթ-ը: Մարդն ամենայն անկեղծությամբ նշում է, որ թեեւ չկարողացավ մասնակցել մայրաքաղաքի Սարյան փողոցում անցկացված գինու ալամաշխարհային փառատոնին, սակայն հույսը չի կորցնում, ինչպես հանգուցյալ ապուպապն է ասել, հույսը երբեք չի մահանում:

Տարօրինակ է, որ համանման պահվածք են դրսեւորում ոչ միայն անհատ գյուղատնտեսները, այլեւ ոլորտի պատասխանատուները, մինչեւ գործադիր բարձրագույն մարմին ՀՀ կառավարությունը:

Խաղողագործության խթանման նպատակով պետական հատկացումների պակաս չկա, իսկ ահա այգիները հատատված ծավալներով չեն աճում: Նախորդ տարվա աշնանը հանդիպում եմ ունեցել ոլորտի անմիջական պատասխանատու ՀՀ էկոնոմիկայի փոխնախարարի հետ, որը նշեց, որ ըստ թռչող դրոններով արված նկարահանումների՝ խաղողի այգիները երկրում 12 հազար հեկտար են կազմում: Թե դրանց որ մասն է 1 եւ 2 տարեկան, որոնց ընթացքում այգին չի պտղակալում, չի ասվում ընդհանրապես: Արդյունքում ստացվում է, որ պլանավորված 28,2 հազար հեկտար բերքատու այգիների համախառն բերքը պետք է կազմեր 451 հազար տոննա, երբ փաստացի դրա կեսն էլ չի ստացվել: Դե եկ ու մի ողջունիր նման թերակատարումը, քանզի խաղողի լրացուցիչ անգամ մի քանի տասնյակ հազար տոննա բերքն է ոլորտում իսկական խառնաշփոթ առաջացնում, ուր մնաց՝ ամբողջ 200-250 հազար տոննան: Խոշոր մթերողները այդ քանակները գնելու ո՛չ գումար ունեն, ո՛չ տարողություններ, խաղողի վաճառք իրականացնողները դժգոհում են սառնարանային տնտեսությունների բացակայությունից, որի արդյունքում մարդիկ զրկված են շուրջ տարին խաղող համտեսելու հաճույքից, իսկ փոքր ու միջին գինեգործականները նվազագույնն են բավարարում գինեսերների որակային ու գնային պահանջները: Պարզ հաշվարկները հաստատում են, որ հայաստանյան հանրությանը դեպի գինու չափավոր սպառում կողմնորոշելու պարագայում անգամ 451 հազար տոննան լավագույնս կսպառվի երկրի ներսում, որից լիարժեք գոհ կմնան գործարքի երկու կողմերն էլ: Ավելորդ չենք համարում նկատել, որ խաղողից նաեւ քաղցրահամ հյութ են ստանում, գիլաներից մուրաբա են պատրաստում, կորիզից ձեթ քամում: Բայց դրա համար աշխատել է պետք, ՀՀ-ն յուրօրինակ Հայցարիա դարձնել:

Թե՝ ինչպես-ը երկրի կառավարումը ստանձնածների խնդիրն է, հենց թեկուզ Շվեյցարիայի անցած ուղու ու ներկայիս տնտեսավարման գործընթացների ուսումնասիրումն ու մեր պայմաններին համապատասխան ներդրումը: Կառավարությանը կից տնտեսագիտական հաստատություն է գործում, դեսպանություններում տնտեսագիտական կցորդներ կան, միջազգային օգնողների էլ պակաս չունենք…

Իսկ ահա պահանջի ու պահանջատիրոջ պակաս ունենք, անգամ չենք հարցնում, թե ինչ եղավ, ասենք, Կավավանի թե Կալավան անվանվողի հետ. գոնե ճանապարհը կառուցվե՞ց:

Եթե այլ մոտեցում կա, մի՛ հապաղեք, գրեք մեր թերթին:

12.07.2022թ.

Իմաստաբանական բառարան

Հերն էլ անիծած...

Էջը, որ պատկանում է միասմբակավոր կենդանիների կարգին, վայրի տեսքով հայկական լեռնաշխարհում է հայտնվել դեռեւս միջին քարի դարում, եւ ընտելանալուց անմիջապես հետո, անտրտունջ ու գլուխը կախ, հուսալի բեռնակրի ու փոխադրամիջոցի դերում ծառայել է հային:

Թեեւ էշը ձիու ցեղակիցն է, բայց վերջինիս պատվին արժանանալու համար պետք է երկար ճանապարհ անցնի, սակայն այդ համեստ կենդանու գոռոզամտության պատճառն է դարձել այն փաստը, որ լեզվաբանները բնիկ հայկական «էշ» բառը համարել են հնդեվրոպական *ekẃo - «ձի» արմատից առաջացած բառ:

Անշուշտ, էշի գոռոզամտության համար այլ հիմքեր էլ կան: Էշը մարդկության պատմության զարգացման ընթացքում անուրանալի դեր է խաղացել հատկապես ճանապարհաշինության մեջ, եւ այդ պարկեշտ կենդանին գլխավոր գեոդեզիստի դերում բազում օրինակներ է ցույց տվել: Չէ՞ որ էշը բնազդաբար գտնում է ամենակարճ ճանապարհը: Նախկինում՝ գեոդեզիստական սարքերի բացակայության պայմաններում, ամենաօպտիմալ ու կարճ ճանապարհը գծելու համար մարդիկ դիմել են բեռնավորված ավանակի օգնությանը, որը եւ մասնագիտորեն գծագրել է ամենակարճ ճանապարհները: Պատահական չէ, որ երկրաչափության մեջ «ուղիղ գծի» կամ «գեոդեզիկ գծի» թեորեմը որոշ լեզուներով, այդ թվում՝ պարսկերենով, կոչվում է «Ավանակի թեորեմ»(ghaziyye-e hemar)՝ համաձայն որի, երկու կետերի միջեւ ընկած ամենակարճ ճանապարհն ուղիղ գիծն է:

Պարսկերեն ամենահեղինակավոր բացատրական բառարանը՝ Դեհխոդան, էշի (պարսկերեն՝ xՊr) դրական հատկանիշների մասին գրում է. «Երբ կարիճն է թեզ խայթում, անհապաղ էշի ականջին բարձր ձայնով գոռա, որ կարիճը խայթել է թեզ, որից հետո հակառակ դիրքով նստիր էշի վրա, որպեսզի խայթոցից առաջացած ցավը փոխանցվի էշին»: Հասկանալի է, որ ավանակի տվյալ դրական հատկությունն անվիճարկելի է, եւ պետք է ժամանակակից բժշկությունը հատուկ ուշադրություն դարձնի դրան: Էլ չենք խոսում իրանական Ղարաղան քաղաքի բուժիչ հատկություններով օժտված էշի յուղի մասին, որը բազմաթիվ հրաշքներ է գործել:

Էշի մեծամտության պատճառներից է նաեւ այն պատմական փաստը, որ հենց այդ խոհեմ կենդանին է ապահովել Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ: Սակայն իրանցի անվանի բանաստեղծ **Սաադիի** կարծիքով, դա ոչ մի առավելություն չի տալիս էշին: Բանաստեղծն այսպես է իր միտքը հիմնավորել.

Եթե անգամ Նազովրեցու ավանակը ուխտի գնա դեպ Մեքքա,
Միեւնույն է, վերադարձին նախկինի պես ավանակ էլ կմնա:

Բայց ժամանակակից իրանցի բանաստեղծ **Իրաջ Միրզան** հակառակն է պնդում.

Նազովրեցու ավանակն է բացառապես իմ գովեստին արժանի,
Քրիստոսի էշից բացի, հերն անիծած մյուս բոլոր էշերի:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրան-Հայաստան հարաբերությունների մակարդակի բարձրացում

⇨1 Հայաստան մուտք գործելուց անմիջապես հետո Շամխանին մեկ անգամ եւս ընդգծեց տարածաշրջանում սահմանների աշխարհաքաղաքական փոփոխությունները մերժելու մասին Իրանի դիրքորոշումը, ինչը որոշակի իմաստ է պարունակում Իրանի դիվանագիտական լեզվում:

Իրանի ու Հայաստանի միջպետական սահմանը Իրանի հետ ցամաքային սահման ունեցող 15 երկրներից ամենաանվտանգ սահմաններից է, որի հետ գրեթե ոչ մի ներքին խնդիր տեղի չի ունեցել:

Սյունիքի սահմանը կարեւոր է Եվրասիական տնտեսական համագործակցության կազմակերպություն Իրանի մուտքն ապահովելու առումով, քանի որ Իրանի ներկայությունն այդ կազմակերպությունում առանց Հայաստանի հետ ցամաքային սահմանի հնարավոր չէ պատկերացնել:

Էլեկտրաէներգիա գազի դիմաց բանաձեւով համագործակցությունը եւ երկու երկրների միջեւ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի շինարարական աշխատանքների ավարտը հնարավորություն կտա իրականություն դարձնել Իրան-Հայաստան-Վրաստան- Ռուսաստան էներգետիկ համակարգը: Իրանի տարածքով Երեւան-Աշխաբադ գազային սուպափի շնորհիվ եւ այս համակարգին Թուրքմենստանի միացումով աննախադեպ նախագիծ է կյանքի կոչվելու: Քանի որ այդ պարագայում Իրանն էլ Թուրքմենստանի ու Ադրբեջանի միջեւ սուպափի շնորհիվ, իսկ մյուս կողմից՝ Թուրքմենստանի ու Հայաստանի սուպափի շնորհիվ, կվերածվի էներգետիկ մեծ կենտրոնի:

Կարեւոր էր նաեւ Շամխանիի հայտարարությունում երկու երկրների միջեւ գոյություն ունեցող «քաղաքակրթական խորը կապերի» մասին շեշտադրումը, որը կարող է տնտեսական, տրանզիտային ու քաղաքական հարաբերությունների մակարդակը բարձրացնելու համար հիմք հանդիսանալ: Իրանն ու Հայաստանը տարածաշրջանի ամենահին քաղաքակրթությունների կրողներից են, որոնք մտադիր են այս կապերը ծառայեցնել տնտեսական ու քաղաքական ոլորտներում փոխշահավետ համագործակցությանը: Երկու երկրների գեոմշակութային հարաբերությունները նույնպես դիվանագիտական հարաբերություններն իմաստավորող գործոններից են: Գեոմշակույթի ոլորտում խնդիրներ ունեցող երկրները դժվարությամբ են կարողանում կառավարել իրենց երկրների միջեւ գոյություն ունեցող հումանիտար ու մշակութային մարտահրավերները, ինչն ի վերջո ի հայտ է գալիս աշխարհաքաղաքական կոնֆլիկտների մեջ: Իրանի ու Հայաստանի միջեւ այդ կարգի կոնֆլիկտների բացակայությունը երկկողմ հարաբերությունների համար մեծ առավելություն է, որը կանխարգելում է թշնամաբար տրամադրված երկրների մուտքը բարեկամական դիվանագիտություն, քանի որ այդ դեպքում նման հարաբերություններին օգնության է հասնում հանրային կարծիքը:

Այս օրերին միջազգային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում հայտնված Հյուսիս-հարավ տարանցիկ ճանապարհը հնարավորություն է տալիս Հնդկաստանին միանալու Ռուսաստանի հետ: Այս վիթխարի միջանցքն առայժմ կովկասյան տարածքում ունի ընդամենը տեղական նշանակության մեկ անցուղի, որն անցնում է Ադրբեջանից: Իրանն աշխատում է այս նախագծի դիվերսիֆիկացումն ապահովելու, ինչպես նաեւ միակողմանի կախվածությունը բացառելու նպատակով, ակտիվացնել նաեւ Հայաստանի ցամաքային ճանապարհը: Իսկ այդ կարեւոր նախագիծն իրականացնելու համար անհրաժեշտ է Հայաստանի լեռնային ռելեֆի վրա կառուցել տրանզիտային նոր մայրուղի եւ թունելներ: Ի դեպ, այս նախագիծը հովանավորվում է նաեւ Եվրոմիության կողմից, որի համար անգամ բյուջե է հատկացվել: Այդ առումով, Հայաստանի տարածքում Քաջարանի թունելի կառուցումը կենսական նշանակություն է ձեռք բերում: Մյուս կողմից, Իրանին առաջարկ է եղել մասնակցել ավելի քան երկու միլիոն եվրո բյուջե պահանջող այս ճանապարհի շինարարությանը: Նշանակում է, որ իրանական ընկերությունները նույնպես կարող են մասնակցել այդ նախագծին:

Շամխանիի հայտարարությունների մեջ տեղ գտած կարեւոր շեշտադրումներից է նաեւ այն, որ Իրանի տեսակետով, հարաբերությունների զարգացման համար ոչ մի սահմանափակում գոյություն չունի: Այդ հայտարարությունը վերաբերում է երկկողմ հարաբերությունների խափանմանն ուղղված երրորդ երկրների միջամտությունը չեզոքացնելուն: Այս մոտեցումը նույնպես երկկողմ հարաբերությունների համար նոր էջ է խոստանում եւ փարատում պատժամիջոցների ու նման խնդիրներին առնչվող մտահոգությունները:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է ասել, որ բարիդրացիական հարաբերություններ ունեցող Իրանն ու Հայաստանը փոխհարաբերություններն ընդլայնելու եւ զարգացնելու առումով լուրջ խնդիրներ չունեն: Անգամ երկու երկրների զանգվածային լրատվամիջոցների կողմից միմյանց նկատմամբ խնդիրներ հարուցելու առումով լուրջ մարտահրավերներ չկան:

Իրանական «ՇԱՐՔ» օրաթերթի 2022 թ. հուլիսի 13-ի համարից
Արտատպվել է նաեւ իրանական «Ազարիհա» կայքում

Արցախում արեւային կայաններ են տեղադրվում



Արցախի Հանրապետությունում կարեւոր նշանակություն ունի այլընտրան-քային էներգետիկայի զարգացումը: Այն հնարավորություն կտա լուծելու բազմաթիվ էներգետիկական եւ բնապահպանական խնդիրներ: Արցախի Խաչեն գյուղում տեղադրվել է 3 ԿՎտ հզորությամբ արեւային կայան: Այն հնարավորություն կտա տարեկան արտադրել մինչեւ 5 հազար ԿՎժ էլեկտրաէներգիա եւ լուծել բազմաթիվ հարցեր:

Խաչենը գյուղական համայնք է Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանում: Տեղաբաշխված է հանրապետության հյուսիս-արեւելյան հատվածում: Ասկերան շրջկենտրոնից գտնվում է 21 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 26 կմ հեռավորության վրա: Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ եւ հողագործությամբ: 2010թ.դրությամբ գյուղում ապրում էր 334 մարդ:

Անհրաժեշտ է զարգացնել հաջողությունը: Արեւային կայանների օգտա-գործումը ռազմավարական մեծ նշանակություն ունի Արցախի տնտեսության հետագա զարգացման գործում: Հնարավոր է գտնվեն գործարարներ կամ բարեգործական կազմակերպություններ,որոնք կարող են նպաստել հարցի արագընթաց տեմպերով զարգացմանը:

Ս. ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՊԿԵԼԿԱԾ
ՍՄԱՍԻՈՒԹ

Թիվ 27(5715)
15 ՀՈՒԼԻՍ
2022

«Տպագրուած է սփիւռքահայ մեկենասի հովանաւորութեամբ...»

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆԵԱՆ

Բանասիրական գիտութիւնների դոկտոր

Երբեւէ կգրուի նաեւ մեր ժամանակների հայասանեան գրքասդութեան պատմութիւնը, որի էջերում հարկ կլինի առանձնայատուկ ուշադրութիւն դարձնել այդ գործում Սփիւռքի կատարած աշխոյժ եւ մեծ դերակատարութեանը: Դժուար չէ պատկերացնել, թէ ինչ կլինէր անկախութեան ժամանակաշրջանի հայասանեան գրքասդութիւնը, եթէ նոր պայմաններում յայտնուած եւ գրեթէ զոյական ֆինանսաւորում ունեցող հրատարակչութիւններին եւ անհատներին ձեռք չմեկնէին գիրքն ու գրականութիւնը գնահատող սփիւռքահայ բարեարները՝ անհատներ եւ հասատութիւններ:

Սոյն գրութեամբ ցանկանում եմ վերյիշել եւ արժեւորել Հայաստանում վերջին երեսուն տարիներին հրատարակչական գործին սատարած Սփիւռքի գրքասէր անհատներին եւ կազմակերպութիւններին: Ոչ միայն այն պատճառով, որ մեծ մասամբ Սփիւռքի շնորհիւ են կեանքի կոչուել իմ հեղինակած աշխատութիւնները եւ Գրականութեան եւ արուեստի թանգարանում որպէս տնօրէն պաշտօնավարած տարիներին (1993-2010) թանգարանի հրատարակչութեան լոյս ընծայած գրքերը. սոյն երախտիքի խօսքիս ներքոյ, անշուշտ, կստորագրեն բազում այլ հեղինակներ եւս:

Արդիւնաւէտ եղաւ **Գալուստ Կիւլպենկեան** հիմնարկութեան եւ Երեւանի պետական համալսարանի հրատարակչութեան համագործակցութիւնը: Կիւլպենկեան հիմնարկութեան հայկական բաժանմունքի այդ ժամանակուայ տնօրէն դոկտոր **Զաւէն Եկաւեանը**, լինելով Երեւանի համալսարանի շրջանաւարտ եւ հայագէտ, կարեւորեց անցեալի եւ ներկայի հայագէտների անտիպ մնացած բազմաթիւ կարեւոր աշխատութիւնների լոյսընծայումը: Այսօր գերազանցապէս Եկաւեանի եւ համալսարանի հրատարակչութեան երբեմնի տնօրէն, երջանկայիշատակ **Պերճ Ստեփանեանի** ջանքերի շնորհիւ ասպարէզում են հիմնականում հայ բանասիրութեան եւ պատմագիտութեան աւելի քան մէկ հարիւրեակ մեծարժէք հատորներ, սեղանի գիրք դարձած բառարաններ, բնագրեր՝ հայ եւ այլազգի ուսումնասիրողների հեղինակութեամբ: Նրանց շարքում յիշենք այնպիսի անուններ, ինչպիսիք են Հայնրիխ Հիւբշմանը, Եոզէֆ Կարասը, Հրաչեայ Աճառեանը, Կարէն Եուզբաշեանը, Պիոն Յակոբեանը, Գէորգ Աբգարեանը, Ալեքսանդր Մարգարեանը եւ այլք: Հրատարակուած գրքերից են Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի, Վարդան Արեւելցու, Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրի երկերի քննական բնագրերը, Թադէոս Յակոբեանի, Ստեփան Մելիք-Բախշեանի եւ Յովհաննէս Բարսեղեանի խիստ կարեւոր «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարանի» 3-րդ, 4-րդ եւ 5-րդ հատորները, Աշոտ Սուքիասեանի «Հայոց լեզուի հոմանիշների բացատրական բառարանը», Բախտիար Յովակիմեանի «Հայոց ծածկանունների բառարանը» եւ այլն: Ողջունելի է նաեւ այսօր Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան հայկական համայնքների բաժանմունքի նախաձեռնութեամբ իրականացուող «Գալուստ Կիւլպենկեան թարգմանական մատենաշար» նախագիծը, որի նպատակն է 20-21-րդ դարերի համաշխարհային ակնառու հեղինակների հիմնարար հումանիտար եւ գիտական կարեւոր բնագրերը հասանելի դարձնել արեւելահայերէն եւ արեւմտահայերէն թարգմանութեամբ: Ներկայ փուլում մատենաշարով արդէն լոյս են տեսել Ջորջօ Ագամբէնի, Եուգէն Հաբերմասի, Ալան Բադիուի, Միշել Ֆուկոյի գրքերը:

Հայկական բարեգործական ընդհանուր միութիւնը ժամանակ առ ժամանակ նախաձեռնում եւ հրատարակում է այլեւայլ գրքեր՝ գիտական թէ գեղարուեստական, որոնցից նշենք Աւետիք Իսահակեանի Երկերի ժողովածուի 6-րդ հատորը, Էդուարդ Մելքոնեանի «ՀԲԸՄ պատմութիւնը», Լեւոն-Զաւէն Սիրմելեանի «98,6 աստիճանը», Փիքեր Բալաքեանի «Ճակատագրի սեւ շունը» եւ այլն: Յատկապէս խիստ կարեւոր են ՀԲԸՄ-ի անգլերէն հրատարակութիւնները, որոնցիսիք են ժամանակակից հայ ստեղծագործողների ժողովածուն՝ բաղկացած երեք գրքից (դրամա, արձակ և պոեզիա), Հրաւարդ Յակոբեանի, Թամարա Մինասեանի եւ Վահէ Թորոսեանի՝ վերջերս լոյս տեսած «Արցախի եւ Ուսիքի ձեռագրային ժառանգութիւնը»...

Թեքէեան մշակութային միութիւնը նոյնպէս զգալի աւանդ ունի Հայաստանում նոր արժէքաւոր հրատարակութիւններ ասպարէզ բերելու գործում՝ Երուանդ Տէր-Խաչատուրեանի խմբագրութեամբ Փանոս Թերլեմեզեանի «Կեանքիս յուշերը», Սուրէն Սարգսեանի «Միհրան Տամատեանի հրապարակախօսութիւնը», Երուանդ Ազատեանի «Էջեր կորուսեալ եւ անկորուստ» եռատոմը, իմ հեղինակած «Ֆրիկի բանաստեղծական ժառանգութիւնը», Վահան Թէքէեանի բանաստեղծութիւնների ժողովածուն եւ շուրջ երկու տասնեակ այլ գրքեր:

Արժանին մատուցենք նաեւ սփիւռքահայ գրքասէր անհատներին, որոնք ջանքեր չեն խնայել՝ դրամահաւաք կազմակերպելով եւ կամ սեփական միջոցների ներդրմամբ նպաստել նոր հրատարակութիւնների իրականացմանը:

Եկեղեցական, հասարակական գործիչ, արքեպիսկոպոս, ՀՀ ԳԱԱ պատուաւոր դոկտոր **Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճեանը** (1941-2003), ի թիւս այլ նախագծերի, հայասանեան գրականութեան համար դժուարին

1990-ականների սկզբից հրատարակեց 160 գիրք՝ մանկագրութիւնից մինչեւ գիտական ակադեմիական հատորներ: Կոստան Զարեանի «Դէպի Արարատը», Վիգէն Իսահակեանի «Հայրս», Գարեգին Նժդեհի «Հատընտիրը», մի քանի անտիպ Վազգէն Շուշանեանից, իմ հեղինակած «Պաղտասար Դպիր (ուսումնասիրութիւն եւ բնագիր), «Վաւերագիր հայ եկեղեցու պատմութեան» մատենաշարի հատորները եւ Մեսրոպ արքեպիսկոպոսի հոգածութեամբ լոյս տեսած այլեւայլ գրքեր ուսումնասիրողի եւ ընթերցողի սեղանի գիրք են քառորդ դարից ի վեր:

Շուէյցարիայում «Vialux» ժամացոյցի գործարանի տէր **Յարութիւն Սիմոնեանը** (1921-2007) մեծ գրասէր էր, որը բազմաթիւ բարեգործական ձեռնարկներ է իրականացրել Հայրենիքում եւ Սփիւռքում: Նրա մեկենասութեամբ լոյս են տեսել աւելի քան 50 հատորներ: Հայաստանի Գիտութիւնների ազգային ակադեմիայի «Գիտութիւն» հրատարակչութիւնը եւ Գրականութեան եւ արուեստի թանգարանի հրատարակչութիւնը մի շարք գրքերի հրատարակման համար պարտական է Յարութիւն Սիմոնեանին: 1974-2001 թուականներին նրա մեկենասութեամբ լոյս տեսան Լեւոն Զորմիսեանի «Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան», Խոսրով Թիւթիւնճեանի «Անմահներուն հետ», Անտոնինա Մահարիի «Իմ ոդիսականը», Գեղամ Սեւանի «Սփիւռքահայ գրականութեան ուրուագծեր», Երուանդ Օտեանի «Նամականին», նոյն հեղինակի՝ մամուլում մնացած «Հայ Տիասպորան», «Վերնատունէն», «Թիւ 17 խաֆիէն» (երեք հատոր), Զապէլ եւ Հրանդ Ասատուրների «Սիրային նամակները», Միքայէլ Կիւրճեանի «Մարտիկ աղան», «Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն» մատենաշարի երեք հատորը՝ նուիրուած Թալինին, Լոռուն, Տաւուշին եւ այլ արժէքաւոր հատորներ: Յարութիւն Սիմոնեանի գործը մասամբ շարունակեց որդին՝ **Յովան Սիմոնեանը**, որի մեկենասութեամբ եւ իմ որդու՝ Արծուի Բախչինեանի աշխատասիրութեամբ 2003-ին լոյս տեսաւ իշխանուհի Մարիամ Թումանեանի «Իմ համառօտ կենսագրութիւնը եւ իմ յիշողութիւնները» չափազանց հետաքրքրական հատորը:

Ամերիկաբնակ **Հայկ Սվաճեանը** «Մատեան պրես» հրատարակչութեամբ 2015-2019 թուականներին նախաձեռնեց գրքոյկների շարք՝ կենտրոնանալով թարգմանութիւնների վրայ: Հիմնականում առաջին անգամ հայերէն լոյս տեսան մի քանի արձակ եւ չափածոյ գործեր՝ թարգմանուած ռուսերէնից, անգլերէնից, ֆրանսերէնից, գերմաներէնից, սերբերէնից՝ Նինա Բերբերովայի «Նուագակցուհին», Վասիլին Զելեզովիչի «Եոհանի սերբական սիրը», Սոմերսեթ Մոեմի «Վերևում՝ առանձնատանը», Լեոնիդ Անդրէեւի «Յուդա Իսկարիովացին», Ռոբերտ Մուզիլի, Հերման Հեսսեի, Ալբեր Քամեւի «Պատմուածքներ նկարիչների մասին», Շառլ Բոդլերի «Չարի ծաղիկները», նաեւ Արծուի Բախչինեանի «Այլասանցի Մուչիկ Հայաստանցին», «Հնազը Ճահճաւան քաղաքից» վէպերը եւ «Ամենագեղեցիկ արուեստի նուիրեալները. զրոյցներ պարարուեստի գործիչների հետ» ժողովածուն: Յատկանշական է, որ Սվաճեանը գրքեր էր հովանաւորում դրանց վաճառքից ստացուած հասոյթը Հայաստանի բանակին եւ այլ ազգօգուտ նախաձեռնութիւնների տրամադրելու պայմանով:

Եւ վերջապէս, մէկ այլ ամերիկաբնակ գրողի եւ գրքի երդուեալ նուիրեալի՝ **Յովսէփ Նալպանտեանի** մեկենասութեամբ Հայաստանում վերջին տասնամեակներին լոյս է տեսել աւելի քան 60 հատոր գիրք, հիմնականում՝ ժամանակակից հեղինակների գեղարուեստական ստեղծագործութիւններ, սակայն դրանց մէջ կան նաեւ գիտական կարեւոր աշխատութիւններ, ինչպիսիք են Ռուբէն Սաքարեսյանի «Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարանը», Վանօ Եղիազարեանի «Գրիգոր Նարեկացին եւ 10-րդ դարի հայ գրականութիւնը», իմ հեղինակած «Սայաթ-Նովայի կեանքը» եւ «Հայ միջնադարեան բանաստեղծութիւնը» աշխատութեան Ա-Դ հատորները... Յատկանշական է, որ Յովսէփ Նալպանտեանն իր եւ տիկնոջ՝ **Գարոլինի** անունը կրող մատենաշարով հրատարակել է նաեւ իր աշխատասիրած մի շարք գրքեր: Տպագրել է նաև իր գաղափարներին համահունչ աշխատություններ: Այսպես, իրականացնելով յանիրաւի ամբաստանուած Վասակ Սիւնու «դատը», նա մէկ ընդգրկուն հատորի մէջ վերահրատարակել է նշանաւոր պատմաբան Հրանդ Արմէնի երկու մեծարժէք ուսումնասիրութիւնը Հայոց մարզպանի մասին...

Չենք յաւակնում մէկ յօդուածի շրջանակներում սպառել Հայաստանում գրքերի հրատարակութիւն հովանաւորած մեր սփիւռքահայ գրասէրների անունները: Նշենք, որ այսօր եւս քիչ չեն դէպքեր, երբ Հայաստանում հրատարակուած հատորի առաջին էջում գրուած է «հրատարակուել է այսինչ սփիւռքահայ գրասէրի մեկենասութեամբ»: Եւ կամ հայաստանցի հեղինակը դրսում հրատարակուելու առիթ է ունենում դարձեալ սփիւռքահայի հոգածութեամբ (ինչպէս, ավստրալաբնակ **Ցոլակ Աղտալեանի**, որի նախաձեռնութեամբ լոյս տեսնող ՀԲԸՄ-ի «Վահրամ Աղտալեան մշակութային հիմնադրամը» Բէյրութում 2015-ից սկսած հրատարակում է հայաստանցի եւ սփիւռքահայ հայագէտների անտիպ աշխատութիւններ):

Եւս մէկ անգամ վկայակոչելով եւ բարձրաձայնելով արտերկրում ապրող եւ Հայաստանում գիրք հրատարակող մեր հայրենակիցներին՝ ցանկութիւն յայտնենք, որ սոյն խնդրով հետաքրքրուած սփիւռքեան կազմակերպութիւններն ու անհատները չբաւարարուեն միայն հայրենիքում հատորներով: Այսօր, երբ մեր թշնամիներն աշխարհը հեղեղել են մեր պատմութիւնը իւրացնող եւ խեղաթիւրող բազմալեզու գրքերով, էջերին մատչելի հայալեզու գրականութեամբ աշխարհի հետ չես խօսի: Մինչդեռ մեր ժողովրդի ներուժի օգտագործմամբ եւ գրահրատարակչական ուղղորդուած ու խելամիտ քաղաքականութեամբ մենք պիտի կարողանանք այսօր մարտավարական խնդիրներ լուծել: Սա, անշուշտ, արդէն պետական հատատութիւնների առաջնահերթ օրակարգերից է...

Խմբ. կողմից.- *Ինչպես հեղինակն է նշում, այս մեկ հոդվածով չի սպառվում սփյուռքահայ՝ հատկապես անհատ մեկենասների ցանկը: Սակայն անհրաժեշտ ենք համարում այստեղ հիշել Ալեք Մանուկյանի անունը, որն իր հիմնադրամի միջոցով (տնօրեն՝ Եր. Ազատեան) 1991-1992-ին Երեւանում հրատարակեց 5 կամ 6 գիրք՝ հետեւյալ հեղինակների գործերից՝ Պերճ Զեյթունցյան, Գուրգեն Խանջյան, Հենրիկ Էդոյան, Նորիկ Լեւոնյան եւ Ալեքսանդր Թոփչյան: Դրանք առաջնեկներն էին սփյուռքահայ մեկենասների կողմից անկախ Հայաստանում հրատարակված:*

Կարեն Նիկոլ. « Իմ արվեստը բաց է մեկնաբանությունների համար »

ԱՐՇՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

*Նորվեգաբնակ նկարիչ, համադրող, փերֆորմեր, դերասան, բեմադրիչ եւ պարադիր **Կարեն Նիկոլը** ծնվել է Թեհրանում, 1983 թվականին: Մայրը՝ հայուհի **Օդեթ Նիկոլը**, նկարչուհի, մուլտիմլիկասոր եւ թարգմանիչ է (տե՛ս իմ հարցազրույցը նրա հետ «Ազգ»-ում, 2019, դեկտեմբերի 27): Կարենը սովորել է Բորնմութի Արվեստի համալսարանական քոլեջում (Անգլիա) եւ Օսլոյի Գեղարվեստի համալսարանում, ուսանել է նաեւ կրոն եւ փիլիսոփայություն: Նրա աշխատանքները միախառնում են մշակութային զանազան ձեւեր ու իմաստներ՝ համատեղելով ժամանակակից պարը, խորեոգրաֆիան, ռեյվը (պարային երեկոներ՝ հիմնականում էլեկտրոնային երաժշտությամբ), փողոցի մշակույթը, նոր դարաշրջանը եւ օկուլտիզմը՝ պարեր եւ բեմադրություններ ստեղծելով բեմում եւ պատկերասրահներում, նկարիչների, պարողների, մարտարվեստով զբաղվողների եւ գրողների մասնակցությամբ: Կարենը մասնակցել է ավելի քան 25 խմբային ցուցահանդեսների ամբողջ աշխարհում, անհատական ցուցահանդեսներ ունեցել Նորվեգիայում, Դանիայում, Իսպանիայում, Իտալիայում եւ ԱՄՆ-ում: Կարենն աշխատում է Օսլոյի Ժամանակակից արվեստի թանգարանում եւ ուսումնասիրում է Նորվեգիայի մշակութային կյանքը: Նկարահանել է կարճամետրաժ «Լիազորում» (2017) ֆիլմը եւ խաղացել երկու շարժանկարում Նորվեգիայում եւ Մեծ Բրիտանիայում: 2017-ին Կարեն Նիկոլն արժանացել է Օսլոյի տարվա արվեստի մրցանակին՝ իր «Լիազորում» ցուցահանդեսի համար: Նա Օսլոյի «Նո փլեյս» ցուցասրահի համահիմնադիրն է:*

Կարեն Նիկոլ

-Կարե՛ն, ես առցանց դիտել եմ քո բեմադրություններից մի քանիսը. կարծում եմ՝ դրանք պատկանում են արվեստի այն տեսակներին, որոնց մասին կարելի է բազմաթիվ մեկնաբանություններ անել, եւ դրանք բոլորն էլ կլինեն թե՛ ճիշտ, թե՛ սխալ: Քո աշխատանքները կարելի է բնութագրել որպես միստիկ, էրոտիկ, էքսցենտրիկ: Ո՞րն է այն հիմնական ուղերձը, որ ուղարկում ես արվեստիդ միջոցով:

-Այո՛, իմ արվեստը հաճախ բաց է մեկնաբանությունների համար: Բեմական բեմադրություններում ես ունեմ ընդհանուր մի գիծ, որը հաճախ պատմվում է, բայց պարտադիր չէ, որ լինի հասկանալի: Ինչպես երազը, դրանք եւս բաց աղբյուր են վերլուծության համար:

-Երբ Նորվեգիայի թագավորական ընտանիքն այցելել է Ժամանակակից արվեստի թանգարան, քեզ են վստահել ցուցահանդեսի բացատրությունը: Ինչպիսի՞ փորձառություն էր թագավորի եւ թագուհու ուղեվար լինելը:

-Լա՛վ էր... ճիշտ է, ոստիկանները սովորականից ավելի շատ էին, բայց նաեւ հավես էր:

-Վերջերս պարարվեստի մի ռուս մասնագետ միտք հայտնեց, որ գաղափար ունեցող յուրաքանչյուր ոք կարող է կատարել խորեոգրաֆիկ բեմադրություն:

-Այո՛, այդ մասնագետն իրավացի է: Հիշենք, թե որքա՛ն հրաշալի թատերախաղեր է գրել Կանդինսկին, որը նկարիչ էր:

-Լինելով ժամանակակից պարարվեստի երկրպագու՝ ինձ համար խնդիր չէր դիտել քո «Սատիրիկոն» ներկայացումը, որը տեւեց 2,5 ժամ՝ մինիմալիստական երաժշտության, միապաղաղ ձայնի եւ շատերի համար անհասկանալի լեզվով խոսակցության ներքո: Շատ հավակնոտ չէ՞ «Ֆելինիի Սատիրիկոնից» հետո ունենալ «Կարեն Նիկոլի Սատիրիկոնը»:

-Հա՜-հա՜, դա հեգնանք էր Ֆելինիի նկատմամբ, որն իր անունը ներառեց վերնագրի մեջ: Ես նաեւ ուզում էի նրանց միջեւ առկա տարբերությունը նշել այնպես, որ հանդիսատեսը չակնկալեր տեսնել Ֆելինիի տեսողական լեզուն իմ ստեղծագործության մեջ:

-Դու նաեւ հեղինակել ես օպերետ՝ «Սֆինքսի լուռ երգը»: Երաժշտական կրթություն ունե՞ս:

-Ո՛չ, չունեմ: Ես աշխատում եմ կոմպոզիտորների, երաժիշտների եւ պարուսույցների հետ, որոնք կարող են իրականացնել իմ գեղագիտական գաղափարները:

«Մայք Դենիս Թայսոն Ռոդմանի ուրվականը («Վեսլի Սնայփս 5000» եւ «Չիկագո Բուլզ» մարզադաշտերի ոչնչացումը)» (2021):

-Ենթադրում եմ՝ զվարճալի պատմություններ ունես, երբ մարդիկ շփոթել են քո սեռը՝ Կարեն անվանդ պատճառով:

-Իսկապես, եւ ամենից զվարճալին աշխատանքի ընդունվելու հարցազրույցներն էին, երբ մարդիկ սպասում էին տեսնել կնոջ, ոչ թե ճաղատ պարսկահայի *(ծիծաղում է)*:

-Դու ծնվել ես պարսիկ հոր եւ հայ մոր ընտանիքում: Ինչպե՞ս եւ որքանո՞վ է նման հարուստ ժառանգությունն ազդել քո բնավորության եւ ոճի վրա:

-Տարբեր վայրերից եկած լինելն ազդում է մեզ վրա, այն կարող է հոգեպես փոխել մարդուն: Այդպիսի ժառանգությունը քանդում է մեր անհատականությունը՝ լինես նորվեգացի, հայ, թե պարսիկ, վերածելով երակցությունների համաձուլվածքի:

-Երբ 1997-ին զանգահարեցի մայրիկիդ, հեռախոսը վերցրիր դու կամ քո եղբայր Արմինը: Հաճելի էր լսել, որ Օդեթի որդին հայերեն է խոսում մոր հետ:

-Դե՛, ուրախ եմ լսել: Իհա՛րկե, ես խոսում եմ հայերեն եւ մի քիչ էլ գրում եմ:

-Դուք ընտանիքով Հայաստանում էիք 2017 թվականին: Հնարավորություն ունեցա՞ր ծանոթանալու ժամանակակից հայ արվեստին:

-Այո՛, այցելեցի մի քանի ցուցասրահ, խանութներ եւ արվեստագետների: Երեւանում արվեստի մթնոլորտն աշխույժ է:

-Ավելի շատ ի՞նչ կցանկանայիր տեսնել Հայաստանում եւ ինչպիսի՞ փոփոխություններ:

-Կցանկանայի Հայաստանում տեսնել է՛լ ավելի շատ արվեստ ու է՛լ ավելի շատ նորաձեւության արդյունաբերություն, թեեւ հիմա էլ շատ բան կա: Կցանկանայի տեսնել լավ ապագա երկրի համար եւ որ Հայաստանը լինի անկախ իրեն խանգարող երկրներից: Ու նաեւ՝ ավելի շատ երջանկություն:

-Հայազգի շատ արվեստագետներ մտածում են հայկական նախագծերի մասին: Դու բացառությո՞ւն ես:

-Այո՛, կարող եմ բացառություն լինել: Ես չեմ ուզում, որ իմ աշխատանքն ընկալվի որպես մեկ կոնկրետ ծագում ունեցող կամ մի որոշակի տեղից:

-Բայց մի քանի տարի առաջ ինձ գրել էիր, որ մտածում ես ֆիլմ նկարահանել հայկական միստիկայի եւ վանականների մասին:

-Դե՛, ապագան ցույց կտա...

Գիրք՝ մեր ժողովրդի բարեկամի մասին

«Իսկ Հայաստանի նկատմամբ նրա խենթացնող սիրահարվածության վկայությունն անմահ բանաստեղծությունների շարքն է»

Աննա Ախմատովան՝ Օսիպ Մանդելշտամի մասին

Osար ազգերի մեջ եղել են, կան ու կլինեն մարդիկ, գործիչներ, ստեղծագործողներ, որոնք, ճանաչելով մեր ժողովրդին, ծանոթանալով նրա ստեղծած հոգեւոր արժեքներին, անկեղծ սիրով ու ջերմությամբ կապվել են նրա հետ, դարձել նրա բարեկամը, իրենց սերը խոստովանել առ նա գրական-գեղարվեստական, հրապարակախոսական, ճամփորդական եւ այլ բնույթի ստեղծագործություններով: Իսկ մեր՝ հայերիս պարտքն է եղել եւ մշտապես լինելու է հիշել, գնահատել ու մեծարել նրանց:

Մեր օտարազգի բարեկամներից է հրեական ծագումով ռուս բանաստեղծ, արվեստի տեսաբան, թարգմանիչ **Օսիպ Մանդելշտամը** (1891-1938): Եվ իբրեւ վերը նշված հիշատակի, գնահատանքի ու մեծարանքի մի արտահայտություն մեզ ներկայանում է բանասիրական գիտությունների դոկտոր, «Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր **Անուշավան Զաքարյանի «Օսիպ Մանդելշտամ. բանաստեղծը եւ Հայաստանը»** գիրքը՝ նվիրված բանաստեղծի ծննդյան 130-ամյակին. տպագրվել է ՀՀ ԳԱԱ արվեստի եւ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտների գիտական խորհուրդների որոշմամբ:

Գրախոսվող գրքից, Անուշավան Զաքարյանի «Օսիպ Մանդելշտամ. բանաստեղծը եւ ժամանակը: Հայաստանը նրա կյանքում» («Պատմաբանասիրական հանդես», 2021, 2, էջ 46-87) հոդվածից եւ հանրագիտարանային բնույթի մի քանի նյութից բացի՝ Մանդելշտամի կյանքի, գործունեության ու ստեղծագործական ուղու մասին հայերեն հրապարակումներ չկան. սույն աշխատանքը լրացնում է այդ բացը:

Աշխատության մեջ առաջին անգամ հայերենով ներկայացվել են մեծանուն մտավորականի կյանքը, գործունեությունը, ստեղծագործական ուղին եւ առնչությունները Հայաստանի հետ: Մանդելշտամի կյանքի, գործունեության ու ստեղծագործությունների, Հայաստանի հետ ունեցած առնչությունների վերաբերյալ հարուստ գրականություն կա: Վերջինս, սակայն, հիմնականում վերաբերում է Հայաստանին նվիրված բանաստեղծությունների շարքին եւ «Ճանապարհորդություն Հայաստան» արձակ սեղծագործությանը: Չեն մանրամասնվել գրապատմական կարեւոր իրողություններ, Հայաստան կատարած այցելության, հայ ժողովրդի կյանքին առնչվող իրադարձությունների նկատմամբ նրա մոտեցումների խորքային դրդապատճառներն ու նախադրյալները եւ այլն:

Անուշավան Զաքարյանի հեղինակած գիրքը բաղկացած է «Երկու խոսք» բաժնից, 7 գլխից, «Վերջաբանի փոխարեն», «Резюме», «Sammary», «Օգտագործված աղբյուրների եւ գրականության ցանկ» բաժիններից: Հեղինակը ներկայացրել է Մանդելշտամի կյանքը, գործունեությունն ու ստեղծագործական ուղին (գլուխ 1): Խոսել է նաեւ բանաստեղծի՝ Թիֆլիսում եւ Բաքվում (գլուխ 2), Հայաստանում (գլուխ 3), Շուշիում (գլուխ 4) եղած ժամանակահատվածների մասին: Անդրադարձել է «Հայաստան» բանաստեղծությունների շարքին եւ Եղիշե Չարենցի հետ անցկացրած թիֆլիսյան օրերին (գլուխ 5): Աշխատությունն ընթերցելով՝ իմանում ենք «Ֆայտոնչին» բանաստեղծությունը գրելու շարժառիթը (գլուխ 6): Առանձին գլուխ է հատկացված «Ճանապարհորդություն Հայաստան» արձակ երկին ու դրա արձագանքներին (գլուխ 7):

Նշենք, որ գրականագետը իր այս գրքով շրջանառության մեջ է դրել **Կարա Դարվիշի** (Հակոբ Գենջյան)՝ **Գրիգորի Ռոբակիձեին** նվիրված «Պար լեռների վրա» վերնագրով բանաստեղծության՝ Մանդելշտամի կողմից կատարված ռուսերեն թարգմանությունը:

Գրքում տեղադրվել է նաեւ Մանդելշտամի՝ Հայաստանում գտնվելու ժամանակ արված լուսանկարը:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանակի համար:

Հավարս ակնարկի մեջբերենք Անուշավան Զաքարյանի հետեւյալ տողերը՝ իբրեւ հաջողյալ որակումներ՝ տրված մեծ բանաստեղծին ու մեր ազգի մեծ բարեկամին. «Օ. Մանդելշտամի անունը մեծապես կապված է Հայաստան երկրի ու հայ ժողովրդի հետ: Հայաստանում ճանապարհորդելը ճակատագրական դարձավ նրա համար, քանզի հետագա կարճատեւ կյանքը շաղկապված մնաց Հայաստանի, հայ մշակույթի հետ: Կապ, որ ռուս բանաստեղծը շատ թանկ էր գնահատում: ..... Հայաստանից ստացած անջնջելի տպավորությունը խորապես արտացոլվել է Մանդելշտամի քնարերգության մեջ եւ արձակում: Հայկական թեման դարձավ շաղկապված բազմաթիվ մտորումների՝ մարդկության պատմության եւ պատմական գիտակցության, աշխարհի պատկերացումների, հնագույն մշակույթների մասին հանգուցակետ: Հայաստան կատարած այցելությունն Օ. Մանդելշտամի կյանքի ամենալուսավոր էջերից է եղել: Բիբլիական երկրի հետ ծանոթությունից ծնված բանաստեղծություններն ու արձակը ռուս գրականության մեջ Հայաստանի մասին գրված լավագույն գործերից են»:



ՀՐԱՉՅԱ ԲԱԼՈՅԱՆ (Արմենյան)
Բան. գիտ. թեկնածու

Փարիզյան նորաձեւության աշխարհի բարձրացող Մուսան՝ Կարինե Արաբյան

***Ալեն Մանուկյանի, Ֆրենսիս Քյուրֆչյանի եւ Ալեն Միկլիիի անուններին Կարինե Արաբյանի** անունն է ավելացել վերջերս որպես փարիզյան նորաձեւության աշխարհի տաղանդավոր ստեղծագործողի: Իր երրորդ տասնամյակը թեւակոխած հայուհին արդեն իսկ արժանացել է եվրոպական նորաձեւության վարպետ դիզայների կոչմանը եւ առանձնանում է իր նրբաճաշակ ոճով: Էկզոտիկ կոշիկներ է ձեւավորել Մադոննայի համար եւ ոսկերչական զարդեր՝ Շանելի համար: Նրա գործերը հնարավոր չէ շփոթել մեկ ուրիշի ստեղծածի հետ, չնայած միշտ չէ, որ հասկանալի են դրանց գեղեցկության գաղտնիքները: Վերջին շրջանում նա «JN.Mellor Club» անվանումով նորաձեւության ակումբ է բացել, որի առիթով «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի փարիզյան թղթակիցը հարցազրույց է ունեցել նրա հետ: Սորեւ թարգմանաբար ներկայացնում ենք տեղեկություններ նրա մասին խաղված այդ հարցազրույցից:*

Կարինե Արաբյանը ծնվել եւ մեծացել է Փարիզում: Գրականություն է սովորել «Սորբոն նուվելում», որից հետո զգալով նորաձեւության հանդեպ իր մեջ առաջացող կրքոտ հետաքրքրությունը, ընդունվել է նախ նորաձեւության տեխնիկայի եւ արվեստների բարձրագույն EsMoD մասնավոր դպրոցը, այուհետեւ 90-ականների սկզբներին նաեւ «Բերտրան Սուդիան»: Ավարտելուց հետո սկսել է աշխատել որպես դիզայներների օգնական: Եռուն տարիներ են եղել, բայց Ծոցի առաջին պատերազմի սկզբնավորման պատճառով շատերի նման ինքն էլ անգործ է մնացել եւ ստիպված է եղել բաց անել իր սեփական ընկերությունը:

Պապն ու տատը Թուրքիայից Ֆրանսիա են գաղթել 1920-ական թվերին: Պապը գերազանց է տիրապետել ֆրանսերենին եւ կարողացել է շուտով աշխատանք գտնել ու Փարիզ տեղափոխել իր ընտանիքին: Ծնողները ծնվել են Ֆրանսիայում, փարիզյան արվարձաններից «Ջոնտիլի» կոչված թաղամասում, որտեղ հայկական ծաղկուն համայնք է գոյություն ունեցել: Հայրը աշխատել է որպես վարպետ դերձակ, իսկ մորական կողմի պապը՝ ընտանեկան արտելում՝ որպես հնակարկաս-կոշկակար: Ինքը՝ Կարինեն մեծացել է կաբվի եւ սոսնձի խառնածին հոտառության մթնոլորտում: Փորձել է գործվածքների անպետք կտրտանքներից իր «Բարբի» տիկնիկի համար պատրաստել գունեղ հագուստներ:

1994-ին մասնակցելով «Hyeres»ի նորաձեւության փառատոնին, որն այժմ Ֆրանսիայում նորաձեւության ամենահեղինակավոր մրցույթն է համարվում, նա սկիզբ է դրել իր կարիերային: «Ես ներկայացրեցի իմ ախսեսուարներն ու ոսկեղեն ստեղծագործությունները եւ մրցանակի արժանացա: Դա ինձ շատ ոգեւորեց եւ խթան հանդիսացավ ունենալու իմ սեփական «բրենդը», որը հետագայում ես առաջարկեցի «Swarovski» եւ «Chanel» ճանաչված հաստատություններին: Նրանց հետ աշխատակցելը իսկական դպրոց եղավ ինձ համար», խոստովանում է Կարինեն:

2000 թվականին, ընդլայնելով իր մտահորիզոնը, հրաժարակ է հանել սուր քթով կանացի կոշիկների իր նոր հավաքածոն, որն այդ ժամանակ «ագրեսիվ ոճ» է համարվել: Բայց որոշ ժամանակ անց Marc Jacobs-ի եւ Chloé-ի նման դիզայներներ սկսել են հետեւել իր

համար կարեւորագույն երկու հատկանիշ՝ հավասարություն սեռերի միջեւ եւ նվիրվածություն ռոմնռոլի հանդեպ: «Մենք փորձել ենք ձերբազատվել կարծրատիպերից, նորաձեւության պարտադրված ազդեցություններից եւ ստեղծել նորը, անկաշկանդ կապը արվեստի եւ դիզայնի միջեւ: Մենք զրոյից, երբեմն դեն գցելու անպետք նյութից նոր աղրանք ենք ստեղծում, որն իր մեջ պոեզիա է պարունակում», բացատրում է Կարինեն եւ հավելում, որ իր եւ ակումբի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարելի է այցելել www.jnmellorclub.com կայքը:

Ավելացնենք, որ Կարինե Արաբյանը նաեւ նորաձեւության աշխարհում հայերի ներդրած լուման հետազոտել է եւ հասկանալով, որ ինքն այդ ասպարեզում հայտնի մարդկանց երկար շարքի շարունակողն է, տեղեկատվական եզակի մի գիրք է հրատարակել «Les Arméniens de la Mode» (Հայերը նորաձեւության ասպարեզում) խորագրով, որտեղ բացահայտումների շարքում ընդգրկել է այն փաստը, որ, օրինակ, Սկյապարելիի ձեռագործ սվիտերները պատրաստողը հայազգի մի կին է, որ ոչ միայն հյուսել է դրանք, այլեւ նախագծել դրանց համապատասխան նախշերը: Դա մեծապես զարմացրել է նրան եւ հուզել, որ հայերը ստեղծագործ ժողովուրդ են եւ իրենց նրբագեղ ճաշակն են ներդրել ֆրանսիական նորաձեւության աշխարհում:

Պատրաստեց՝ ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

Խորվաթական կայքէջը հայ խեցեգործուհու մասին

Խորվաթական croatiaweek անգլերեն կայքէջը հրատարակել է «Խորվաթիան տուն դարձնելով. ծանոթացե՛ք տաղանդավոր խեցեգործ **Ալինա Գիշյանի** հետ» հոդվածը: Հինգ տարի առաջ Հայաստանից Խորվաթիա տեղափոխված Ալինան ապրում է Դուգա Ռեսայում, խորվաթ ամուսնու՝ Տոմիսլավի հետ: «Ես սիրահարված եմ խորվաթական բնությանը: Պաշտում եմ Ադրիատիկ ծովի կապույտն ու փիրուզագույնը: Այս գույները կարող եք տեսնել իմ աշխատանքներում»,- ասում է Ալինան, որը ծնվել է հայ վաստակավոր խեցեգործների ընտանիքում: Անցած տասնվեց տարվա ընթացքում նա մեծ փորձ է կուտակել եւ զարգացրել խեցեգործության սեփական ոճը: Այժմ Ալինայի գործերը կարելի է տեսնել բազմաթիվ ցուցահանդեսներում, պատկերասրահներում եւ տոնավաճառներում:

«Այս տարի ես մասնակցել եմ երկու ցուցահանդեսի Զագրեբում եւ արվեստի տոնավաճառի՝ Դուբայում»,- ասում է Ալինան, որը վաճառում է իր աշխատանքներն առցանց եւ ցուցահանդեսներում: Նա ասում է, որ շատ նմանություններ է տեսնում խորվաթների եւ հայերի միջեւ, եւ դա նրան Խորվաթիայում երկրորդ տան զգացողություն է տալիս: Ամենագրավիչ նմանությունը նա տեսնում է հին խորվաթերեն գրի՝ գլագոլիցայի եւ հայերեն այբուբենի միջեւ: «Կա վարկած, որ գլագոլիցան ստեղծվել է հայկական լեռնաշխարհում, բացի այդ, տառերից մի քանիսը գրեթե նույնն են: Ի տարբերություն հայկական տառերի, գլագոլիցան երբեք չի պատկերվել զարդանախշերով, եւ սա ինձ գաղափար տվեց լրացնել այդ «բացը»,- ասում է Ալինա Գիշյանը: Նա ափսոսում է, որ խորվաթներն անցել են լատինական այբուբենի՝ համարելով, որ, այդպիսով, նրանք կորցրել են իրենց ինքնության մի մասը: Նա զարգացնում է իր գաղափարը՝ ստեղծելով գլագոլիցայով թռչնագրեր: «Այժմ ես ուզում եմ ավելի շատ աշխատել եւ մինչեւ տարեվերջ ավարտել բոլոր տառերը, որից հետո կցանկանայի կազմակերպել իմ առաջին անհատական ցուցահանդեսը: Ես կցանկանայի խորվաթներին ցույց տալ, թե ի՜նչ զարդ ունեն իրենք եւ թե ինչպես կարելի է երկու մշակույթներն այդքան գեղեցիկ եւ սահուն կերպով միավորել խեցեգործական արվեստում: Ես պաշտում եմ այս ուղղությունը եւ զգում եմ, որ մի մեծ բան եմ անում, որի շնորհիվ մեր երկու ժողովուրդներն ավելի կմերձենան»,- ասում է Ալինա Գիշյանը:

Ալինան սիրում է իր նոր տունը, բայց կան որոշ բաներ, որոնք նա դեռ կարոտում է: «Ես կարոտում եմ ընտանիքս, մեր պատմական հնավայրերն ու լեռները, ինչպես նաեւ լավաշը եւ հայկական ծիրանը»,- եզրափակում է Ալինան:

Ա. Բ.

Հայ տենորն ավստրալական բեմում



Հուլիսի 5-ից նոյեմբերի 4-ը Ավստրալիայի գլխավոր օպերային ընկերությունը՝ Սիդնեյի «Օպերա Ավստրալիան», ներկայացնում է Վերդիի «Տրավիատան», որտեղ տղամարդու գլխավոր դերերը կատարում է միջազգային բեմերում հանդես եկող հայ տենոր **Լիպարիտ Ավետիսյանը**:

Ավստրալական գլխավոր պարբերականում՝ «Սիդնեյ մորնինգ հերալդում», **Փիթեր Մաֆալամը** գրել է. «Երիտասարդ հայ տենոր Լիպարիտ Ավետիսյանը Ալֆրեդո Ժերմոնի դերն իրավացիորեն սկսեց երկչոտ զսպվածությամբ՝ տողերին ճնարականորեն հետեւելով լավ կառավարվող թեթեւ ձայնով: Երկրորդ գործողությունը նա սկսեց գունեղ ծաղկումի եւ նրբին փայլի ձայնով, էլ ավելի հիմնավոր խորաթափանցությամբ եւ կրքով»: Իսկ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հրեական «J-Wire» առցանց պարբերականում **Վիկտոր Գրինբերգը** գրել է. «Որպես իր առաջին ճշմարիտ սեր՝ հայ տենոր Լիպարիտ Ավետիսյանը կատարելապես համապատասխանում է Ալֆրեդոյին: Նրա հարուստ տենոր ձայնը եւ դերասանական խաղը ցույց տվեցին, որ հարաբերությունների դրաման նա խաղաց հիանալի կերպով, հատկապես հայր Ջորջոյի միջամտությունից հետո»:

31-ամյա Լիպարիտ Ավետիսյանն ավարտել է Թեոդոսիայի երաժշտական դպրոցի վոկալ բաժինը, այնուհետեւ ուսումը շարունակել է Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայում: Երկու տարի անց ուսումը շարունակել է Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում: Նրա առաջին բեմելը Եվրոպայում տեղի է ունեցել Քյոլնի (Գերմանիա) օպերային թատրոնում: 2013 թվականից Լիպարիտ Ավետիսյանը Երեւանի Սպենդիարյանի անվան Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենեղգիչ է: Գլխավոր դերերգերով հանդես է եկել Ֆրանկֆուրտի օպերային թատրոնում, Լոնդոնի Քովենթ Գարդեն Թագավորական օպերային եւ Սիդնեյի Օպերային թատրոններում: Միջազգային մի շարք մրցույթների դափնեկիր է, այդ թվում՝ 2016 թվականին Սանկտ-Պետերբուրգի «Օնեգին» առաջին ռուսական ազգային մրցանակաբաշխության «Լավագույն հրավիրյալ երգիչ» անվանակարգի մրցանակակիր:

Ա. Բ.

Հալէպի Ադամեան թատերախումբին յուշամատեանը

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Երբ տարիներ առաջ Երեւանի Տրամատիկական թատերախումբը Հալէպ այցելեց, ներկայացումներու աւարտին հիւրը եղաւ ՀԵԸ-ի «Պետրոս Ադամեան» թատերախումբին, այցելելով անոր կեդրոնթատերասենեակը ՀԲԸՄ-ի շէնքին մէջ: Դերակատարները փոխադարձ ծանօթացումներէ յետոյ հետաքրքրութեամբ դիտեցին պատերուն վրայի լուսանկարները եւ ծանօթացան արխիւներու պահարանի պարունակութեան, ուր ամենայն բծախնդրութեամբ իրար կողքի դասաւորուած էին թատերախումբի բեմականացուցած ներկայացումներուն ալբոմները, տեսաերիզները, յայտագիր-գրքոյկները, աֆիշ-որմազդներն ու տոմսերէն նմոյշներ:

-Այսքան կանոնաւոր արխիւ ոչ մէկ տեղ չենք տեսել, նոյնիսկ մեր մօտ չունենք,- ըսաւ դերասաններէն մէկը: Նոյն կարծիքը յայտնեցին նաեւ միւսները: Առաջին անձը չէր, որ կը հիանար թատերասենեակի տպաւորիչ պարունակութեամբ: Արդարեւ, Ադամեան թատերախումբի անդամներէն ոմանք յատուկ նուիրումով փարած են գործին,-անշուշտ՝ սիրով եւ անվճար,- ու ամէն ինչ կ'ընեն, որ Ադամեանը լաւագոյնս դրսեւորուի, իրենց հանգիստի ժամերը նուիրելով կազմակերպչական աշխատանքի, իւրաքանչիւր իր նախասիրած ասպարէզին մէջ: Այս նուիրեալներուն մէջ իւրայատուկ է երկարամեայ վաստակ ունեցող **Ներսէս Տաղլեանը**, որուն վերջին իրագործումը հանդիսացաւ թատերախումբի 60-ամեակին նուիրուած «Յուշամատեանը», որ պատրաստուեցաւ գործակցութեամբ թատերական յանձնախումբի անդամներուն:

328 էջերէ բաղկացած այս յուշամատեանը արգասիքն է համարեա՛ 10 տարիներու աշխատանքի (նկատի առնելու է Սուրիոյ պատերազմի տարիները), որուն հիմնական «սեւ» աշխատանքը կատարած է ինք, որ միեւնոյն ժամանակ ատենադպրն է թատերական յանձնախումբին: Պատմական բաժինը իմ սեղրագրութիւնս կը կրէ, ու որոշ օժանդակութիւն մը ունեցած եմ անոր խմբագրական աշխատանքին մէջ, սակայն ալբոմային բաժինը լրիւ Տաղլեանին կը պարտինք, ուր մանրամասն ներկայացուած են 60 տարիներու ընթացքին բեմ բարձրացած բոլոր ներկայացումներէն տեսարաններ, անոնց դերակատարները, բեմադրիչները, ներկայացումներուն թիւն ու վայրը: 60 տարուան ընթացքին 64 հայ եւ օտար հեղինակներու 96 թատերգութիւն, 621 ելոյթներով, 16 բեմադրիչներու եւ 355 դերակատար-դերակատարուհիներու մասնակցութեամբ: Պատկառելի, խօսուն թիւեր:

Մատեանին մէջ ներկայացուած են իւրաքանչիւր բեմադրիչի բեմադրած գործերուն ցանկը, դերակատարներուն մասնակցած թատերգութիւններու լրիւ ցանկերը, թէքնիք կազմի՝ բեմավար, բեմայարդար, երաժշտական յօրինում, դիմայարդար, նախագծող, զգեստաւորում, լուսաւորում, ձայնաւորում, շինարարական... բոլոր, բոլորին անունները: Թատերախումբին ստացած տիպլոմներն ու պատուոյ գիրերը: Զանազան տարիներու թատերական յանձնախումբի կազմերուն եւ անդամներուն լուսանկարներն ու անունները:



Թատերախումբի անդամներու զանազան տարիներու վաստակին համեմատ շքանշաններով պարգեւատրուածներու ցանկ: Թատերասենեակի հիւրերը, անոնց գրաւոր տպաւորութիւնները, Ոսկեմատեանին մէջ: Մեզմէ առյաւէտ բաժնուած ադամեականներու անունները:

Յուշամատեանին սկիզբը տեղադրուած են օրհնութեան գիրեր եւ ողջոյնի խօսքեր:

Վերջին էջերուն մէջ թատերախումբի զանազան ձեռնարկներու, դասախօսութիւններու, հաւաքներու, յոբելեանական երեկոներու նկարներ եւ յիշատակութիւններ: Երեւան հաստատուած ադամեականներու ինքնահաստատման նախապայմանները՝ նկարներով:

Այս կոթողային գործը լոյս աշխարհ եկաւ օժանդակութեամբ ՀԲԸՄ-ին ու ՀԵԸ-ին եւ առաւել՝ անհատ մեկենասներու նուիրատուութեամբ:

Միակ անպատեհութիւնը այն է, որ գիրքը բաւական ծանր կը կշռէ (1,5 քիլոկրամ), ատոր համար ալ զայն աշխարհի զանազան գաղութները փոստով առաքելը ահագին ծախսի կը նայի, սակայն անպայման ճարը կը գտնուի եւ օրինակ մը կը հասնի իւրաքանչիւր ադամեականի:

Հալէպի Հայ երիտասարդաց ընկերակցութեան Պետրոս Ադամեանի անունը կրող թատերախումբը երկրի ծանր պայմաններուն տակ իսկ, դադար չէ առած ու կը շարունակէ իր երթը դէպի նորանոր նուաճումներ:

Եգիպտահայ դիզայների նոր նախագիծը

Ըստ «Եգիպտոսն այսօր» անգլերեն կայքէջի՝ հայազգի եգիպտական նշանաւոր դիզայներ **Քարիմ Մխսիկյանը** մասնակցել է Դիզայնի շուրի 7-րդ թողարկմանը իր «Մովիոլա» նախագծով, որտեղ դիզայնի աշխարհը համադրել է կինեմատոգրաֆիկ ոսկեդարի (**Հիշամ Մահդիի** հետ միասին): Նախագծի հիմնական գաղափարն է ժամանակակից վերաիմաստաւորուած իրականության մեջ միաձուլել անցյալն ու ներկան՝ եգիպտական հարուստ կինոդարանի տեսարանների վերամոնտաժման միջոցով, որտեղ կահույքի մասերն ու աքսեսուարները վերախմբագրվում եւ տեղակայվում են ժամանակակից աշխարհում:

Մխսիկյանը թեեւ ծնվել է Եգիպտոսի ՀՅԴ ղեկավարներից Պետրոս Մխսիկյանի ընտանիքում, նրա գերդաստանում եղել են նաեւ արվեստագետներ: Նրա հորեղբայր **Թագվոր Անտոնյանը** եղել է եգիպտական կինոյի «ոսկեդարի» ամենահայտնի արտադրիչներից եւ տարածողներից մեկը: Մխսիկյանը հաճախ է զբաղվում կինոյով, նախկինում ձեւավորել է Կահիրեի միջազգային կինոփառատոնի 40-րդ ցուցահանդեսը, «Էլ Գունա» 4-րդ կինոփառատոնում կազմակերպել է ճանաչված դեկորատոր **Օնսի Աբու Սեյֆին** հարգանքի տուրք մատուցող ցուցահանդես:

Քարիմ Մխսիկյանը դիզայնի աշխարհում առաջամարտիկ է՝ լինի ճարտարապետության, ինտերիերի, արտադրանքի ձեւավորման թե դիզայնի կառավարման ոլորտներում: 1997-ին հիմնել է «Ալֆեմի դիզայն» միությունը, այնուհետեւ՝ «Քիմե» ապրանքանիշը, «Քարիմ Մխսիկյան դիզայնի ստուդիան», որը ներառում է ճարտարապետություն եւ ինտերիերի դիզայն, «Ջայ» թեյի տունը Մաադիում,«Լայֆ լաբ» ինտերակտիվ տարածքը, «Անալոգ» սպասքի հիմնադրման կենտրոնը եւ «Յար» գրասենյակը, որը զբաղվում է էկոլոգիապես մաքուր գյուղերի դիզայնով: Իր փայլուն կարիերայի ընթացքում Քարիմը համագործակցել է եգիպտական բարձրակարգ ընկերությունների հետ, բազմաթիվ տեղական եւ համաշխարհային մրցանակների դափնեկիր է: 2005 թվականին ստեղծել է Եգիպտոսի դիզայներների ֆորումը եւ 2006-ին եղել Եգիպտոսի կահույքի արտահանման խորհրդի գեղարվեստական տնօրեն: Նա նաեւ Կահիրեի դիզայնի մրցանակաբաշխության ժյուրիի մշտական ղեկավարն է:

Ա. Բ.

Հունգարահայերից սերած պերուացի դասախոսը նախնիների երկրում

Տրանսիլվանիայի (Ռումինիա) Տըրգու-Մուրեշ քաղաքում գործող Հայ-հունգարական մշակութային ընկերակցությունը եւ «Կաստելում» հիմնադրամը վերջերս Տրանսիլվանիայի ոչ պաշտոնական մայրաքաղաք Կլուժում կազմակերպել էր հանդիպում, որի ընթացքում ներկաները ծանոթացել են հունգարահայ Լուկաչ ազնվական ընտանիքի պատմությանը եւ հանդիպել ընտանիքի հետնորդ, Լիմայի (Պերու) Սան Մարտին դե Պորես համալսարանի դասախոս, քաղաքագետ, փիլիսոփա, մշակութաբան **Միկլոշ Վայկ Լուկաչ Պերենիի** հետ: Ըստ Հայ-հունգարական մշակութային ընկերակցության նախագահ դոկտոր **Աթիլա Պուշկաշի՝** պերուացի դասախոսի հետ հարաբերությունները ստեղծվել են հայազգի հունգարական բանաստեղծուհի **Էվա Անկայի՝** 1941 թվականին տպագրված բանաստեղծությունների հատորը վերահրատարակելու մտադրության առթիվ: Անկայի հետնորդներին փնտրելիս տեղեկացել են Պերուում բնակվող Միկլոշ Վայկ Լուկաչ Պերենիի մասին: Միկլոշը վերջին կես տարում ապրում եւ որպես հրավիրյալ դասախոս դասավանդում է Հունգարիայում, ինչը նրան թույլ է տվել այցելել Տրանսիլվանիա եւ փնտրել իր արմատները:

Հանդիպման ընթացքում պատմաբան դոկտոր **Աթիլա Կալման** հակիրճ ներկայացրել է Տրանսիլվանիայի հունգարահայ ազնվական Լուկաչ ընտանիքի պատմությունը՝ շեշտը դնելով պետական գործիչ, կրոնի եւ կրթության նախարար **Դյորդ Լուկաչի** (1865-1950) եւ նրա ժառանգների կյանքի ուղու վրա: Իր խոսքում հյուրը՝ Միկլոշ Վայկ Լուկաչ Պերենին, պատմել է նախնիների մասին, թե ինչպես է Էվա տատիկը փորձել փրկել կորստի դատապարտված հունգարերենը՝ թոռների համար կարդալով իր բանաստեղծություններն ու վեպերը: Հունգարահայ հոր եւ պերուացի մոր զավակ Միկլոշ Վայկ Լուկաչ Պերենին այժմ ապրում է Անգլիայում, բայց դասավանդում է Լիմայի համալսարանում: Նա սովորում է հունգարերեն եւ, ինչպես խոստովանել է միջոցառման ժամանակ, Տրանսիլվանիա կատարած իր այցը զգալիորեն ամրապնդել է իր հունգարահայ ինքնագիտակցությունը: Միջոցառման վերջում նա ներկաների համար ընծայագրեց տատիկի՝ Էվա Անկայի բանաստեղծությունների՝ վերջերս հրատարակված հատորը:

Ա. Բ.

Բարձրարժեք եւ գնահատելի ուսումնասիրություն

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
պատմաբան, պրոֆեսոր

Երկար ժամանակ է շնորհակալությամբ սացել եմ բարեկամ եւ գրչակից ընկերոջս ջերմ մակագրությամբ այս խիսս շահեկան ուսումնասիրությունը, ընթերցել այն, նշումներ արել, բայց ամեն անգամ ինչ-որ պատճառով գրախոսելը հետաձգվում էր: Հավանաբար անհրաժեշտ էր, որպեսզի ասելիքը հասակվի եւ բյուրեղանա, որ աշխատությանը հարիր սացվի:

Երկրորդ համաշխարհային պատերազմի եւ հայ ժողովրդի դրան մասնակցության մասին շատ է գրվել: Այդ գրվածքները պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական խմբի.

ա) Պատերազմին ականատես ու մասնակից ուսումնասիրողների անմիջական տպավորությունների ներքո գրված աշխատություններ,

բ) Շարքային եւ զորահրամանատար մասնակիցների հուշեր, պատումներ, նկարագրություններ եւ վերլուծություններ,

գ) Արխիվային, մասնագիտական գրականության եւ մամուլում սփռված նյութերի հիման վրա խորը վերլուծություններով եւ եզրահանգումներով հարուստ ուսումնասիրություններ:

Զավեն Մարյանի «Հայերը համաշխարհային Բ. Պատերազմին» գրախոսվող սույն աշխատությունը պատկանում է վերջին խմբին: Այն համաշխարհային պատերազմում հայերի մասնակցության ու դերակատարության մասին գրված բազմաթանակ ուսումնասիրություններից տարբերվում է իր փաստավավերագրերի առատությամբ, թարմ ասելիքով եւ ոչ միայն խորհրդային ու հայաստանյան աղբյուրագիտական հենքով: Այդպիսիք են օգտագործվել իհարկե, սակայն աղբյուրագիտական հենքի գերակշռող մասն են կազմում օտար աղբյուրները: Այս առումով ուսումնասիրությունը հայրենի պատմագիտական մտքին հնարավորություն է ընձեռում նորովի մոտենալ պատերազմի պատմությանը եւ իրադարձությունները գնահատելիս խուսափել միակողմանի գնահատականներից եւ ավելի անաչառ լինել:

Ստվարածավալ այս ուսումնասիրությունը բաղկացած է Նախաբանից, 34 գլուխներից, անձնանունների ցանկից եւ հեղինակի կենսագրականից: Այն գրված է աղբյուրագիտական հարուստ եւ վստահություն ներշնչող հենքով: Հեղինակն «անձամբ ձեռք ձգած է Անգլիոյ Ֆորեյն Օֆիսի» նյութերը, վարպետորեն է օգտագործել գերմանական «վաւերաթուղթեր եւ սկզբնաղբյուրներ», որոնք օգտագործել են գերմանացի եւ ոչ գերմանացի հեղինակները, եւ, հատկապես, ամերիկահայ պատմագիր Լեւոն Թումասյանի աշխատությունը: Անգլերենի փայլուն իմացությունը հեղինակին հնարավորություն է ապահովել լիովին օգտագործել նաեւ պատերազմին վերաբերող ամերիկյան «համացանցին վրայ տրուած վաւերաթուղթերը», ինչպես նաեւ հայրենաբնակ պատմաբանների օգտագործած պատերազմի մասին խորհրդային բազմաթանակ վավերագրեր: Դրվատելի է, որ հեղինակն անաչառ հետազոտողին վայել սառնասրտություն դրսեւորելով՝ «անտեսած է պատերազմի օրերուն եւ յետպատերազմեան շրջանի կրքոտ, փոխադարձ պայքարի ոգիով գրուած գրութիւնները» (էջ 9):

Դոկտոր Մարյանն անդրադառնալով մեզանում հատկապես վերջին տարիներին հաճախակի շոշափվող այն հարցին, թե արդյո՞ք պատերազմը հայերիս համար Հայրենական էր եւ որքանո՞վ էին արդարացված մարդկային եւ նյութական այն մեծածավալ զոհողությունները, որոնք կատարեց հայ ժողովուրդը, հայ գիտնականին վայել իրատեսությամբ համոզված պատասխանում է՝ միանշանակ դրական: Հեղինակը բացատրում է նաեւ, որ գիրքը գրել է ոչ թե հերոսներ կամ դավաճաններ փնտրելու նպատակով, այլ պատմությանը դեմ հանդիման գալու եւ «Համաշխարհային Բ. Պատերազմի հայկական առնչութիւնները կարեւոր սկզբնաղբիւրներու վրայ պատմագրելու, որպէսզի ազգովին սերտուին անցեալի պատահարները, ապագայի մտահոգություններով» (9):

Հեղինակը նշում է նաեւ, որ գրքում շեշտադրվել են «Համաշխարհային Բ. Պատերազմին հայերուս հետ առնչուող նուազ ծանօթ երեւոյթներուն, ինչպէս Հայկական Լեգէոնին, ռազմագերիներուն, մանաւանդ սփիւռքահայ կացութեան եւ դիրքորոշումներուն, նոյնիսկ մանրամասնութիւններ տալով եւ այս առանց սորագնահատելու հիմնականը» (10): Ասելիքն, ավելի հասկանալի դարձնելու մտահոգությամբ հեղինակը սեղմ գույներով ներկայացրել է նաեւ պատերազմին նախորդող շրջանում սփյուռքահայության շրջանում քաղաքական խմբորումներն ու Հայաստանում տիրող իրավիճակը ինչպես 1933-1939 թվականներին, այնպես էլ, իհարկե, պատերազմի ընթացքում:

Նախապատերազմական շրջանին անդրադառնալով հեղինակն ընդգծում է, որ Սփյուռքում գործող ամենուժեղ կառույցը 1926 թ. Կ.Պոլսում հիմնադրված «Կովկասէն հեռացած կամ հեռացուած կազմակերպութիւններու քաղաքական միութիւնն» էր, որի նպատակն էր «Թուրքիայի աջակցութեամբ Կովկասը ազատագրել բոլշեւիկեան տիրապետութիւնից» (14): Հայ Յեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) շաս ղեկավար անդամներ (Ռուբեն Դարբինյան, Սիմոն Վրացյան, Ռուբեն Տեր-Մինասյան) համագործակցում էին այս կառույցին: Հեղինակի կարծիքով ՀՅԴ-ում այդ շրջանում երկու տեսակետ կար՝ ա) «հայութեան հիմնական թշնամի սկսեց նկատուիլ ոչ թէ Թուրքիան, այլ խորհրդային վարչակարգը», բ) միաժամանակ շարունակել հակաթուրքական քաղաքականությունը (Հովհաննես Քաջազնունի, Գարեգին Նժդեհ, Շահան Նաթալի): (15): Այս տարբերության հենքի վրա էլ կուսակցության ներսում առաջացան պառակտումներ, եղան նաեւ վտարումներ: Վտարվածներն էլ սկսեցին հրատարակել «Մարտկոց» թերթը: Մարտկոցականները թշնամական դիրք ունեին Թուրքիայի եւ բարեկամական՝ խորհրդային Հայաստանի նկատմամբ: Նրանց նպատակը արեւմտահայ հարցի լուծումն էր: Նրանք պարի 24-ը համարում էին «ոչ թէ սգաստան, այլ վրիժաստան» (16): 1933 թ. Փարիզում մարտկոցականները հիմնեցին «Արեւմտահայ Ազատագրական ուխտ» կազմակերպությունը, թերթի անունն էլ վերափոխեցին «Ամրոց»:

Շարունակելով նախապատերազմյան թեման՝ հեղինակը նշում է, որ աշխարհի համար շրջադարձային եղավ 1933 թ. Գերմանիայում Ֆաշիստական կուսակցության իշխանության տիրանալու փաստը: Գերմանիայի վարչապետ դարձած Ադոլֆ Հիտլերը, որն իր գաղափարական, քաղաքական եւ սոցիալական հիմնադրույթները ներկայացրեց «Մայն Կամֆ» գրքում, «ցեղապաշտական համոզումներով՝ կը հաւատար Արիական ցեղին գերակայութեան, եւ հակասեմական զօրաւոր զգացումներ կը տածէր»,- ընդգծում է Մարյանը:

Հեղինակը գրում է, որ մինչ այս իրադարձությունները, 1932 թ. Փարիզում տեղի ունեցած ՀՅԴ 12-րդ ընդհանուր ժողովին ԱՄՆ-ից որպես պատգամավոր մասնակցած Գարեգին Նժդեհը, 1933-ին հիմնեց ցեղակրոն ուխտը (18): Վկայակոչելով Մ. Լալայանի աշխատությունը (Լալայան Մ., Ցեղակրոնություն (Քննական վերլուծություն), Ե., 1994) հեղինակը գրում է, որ ցեղակրոնությունը սահմանում էր՝

ա) «Այլեւս այսպէս ապրել կարելի չէ,

բ) Մեզ պէտք է ցեղակրօն հայը, որ ի զօր է դիմանալ մերօրեայ քաղաքական աշխարհին,

գ) Ցեղիս ճանաչում, ճանաչումը մեր գերիվերոյ ուժի, էութեան,

դ) Այդ ուժ-էութեան ցմահ հաւատարիմ մնալնուս ուխտն էր դա» (19):

Այնուհետեւ պարզաբանվում է, որ դրա արդյունքում «կը ստեղծուի մէկ հայութիւն, ինչ որ անհրաժեշտ պայման է ամէն քաղաքական գործունէութեան...»: Համադրելով մի շարք փաստեր, հեղինակը ցույց է տալիս, որ «ցեղակրօն շարժումին եւ Գ. Նժդեհի նկատմամբ «Ամրոցը» բացասական դիրք ունէր» (20): Այս հենքի վրա ծայր առած հակասություններն աստիճանաբար խորացան եւ ի վերջո Նժդեհին ՀՅԴ-ի շարքերից հեռացրին: Դրան նպաստել էր նաեւ 1935-ից կուսակցության կենտրոնից դժգոհ Հայկ Ասատրյանի շուրջ ձեւավորված «Տարոնականություն» շարժումը, որն ըստ էության «միեւնոյն ցեղակրօնութիւնն էր հասակ առած սերունդի համար» (22),-պարզաբանում է հեղինակը:

Նյութի եւ փաստերի խորհմացությամբ հեղինակը լուսաբանում է այդ շրջանում գերմանացիների վերաբերմունքը հայերի նկատմամբ: Նա ցույց է տալիս, որ նացիստական Գերմանիայի առաջնորդները հրեաներին դասել էին ոչ-արիական խմբին եւ այդ նույն լույսի տակ էին դիտարկում նաեւ «Արեւելքի հրեաներ ու հնարամիտ վաճառականներ» (55) հայերին: Սակայն Գերմանիա-հայկական ընկերության նախագահ Փաուլ Ռոհրբախի եւ փոխնախագահ պրոֆեսոր Արշաշես Աբեղյանի ջանքերով (շեշտում էին, որ հայերը հնդգերմանացիներ են) Գերմանիայի ներքին գործոց նախարարությունը 1933 թ. հուլիսի 3-ին «հայերը կը դասաւորէր արեւելեան արիացիներու շարքին», չնայած որ Հիտլերը «հակուած էր հայերը նկատելու իբր ոչ-արիականներ» (29): Նա համարում էր, որ հայերը «հրէականացած ժողովուրդ են» (69): Հեղինակի կարծիքով գերմանացիներն ընդամենը «կը շահագործէին արիականութեան հարցը քաղաքական նպատակներով» (71), ապա ավելացնում, որ մեծամանակ աղբյուրների ուսումնասիրության ընթացքում հայերին բնաջնջելու որեւէ որոշման չի հանդիպել: Ավելին, նրանք բավական բարեհաճ են գտնվել հայերի հանդեպ, արտոնել են նրանց կազմակերպություններ ունենալ, թերթ հրատարակել, Բեռլինի ռադիոյով հայերեն հաղորդումներ տալ եւ այլն (74):

Անդրադառնալով նախապատերազմական Խորհրդային Հայաստանին՝ հեղինակն ընդգծում է, որ մինչեւ 1930-ականները ներգաղթը շարունակվում էր եւ 1936 թ. արդեն ներգաղթողների թիվը կազմում էր 42 հազար մարդ: Կարեւորվում են նաեւ 1936 թ. նոր սահմանադրությամբ Հայաստանը որպես միութենական հանրապետություն եւ որպես առանձին իրավական սուբյեկտ ԽՍՀՄ-ի կազմում լինելու հանգամանքը: Ինչպես նաեւ շեշտվում, որ անհատի պաշտամունքը մեծ վնաս հասցրեց նաեւ հայ ժողովրդին, սպանվեց Աղասի Խանջյանը, կադրերի ջարդ եւ այլ բացասական իրադարձություններ տեղ գտան ՀԽՍՀ-ի կյանքում: Ընդգծվում է նաեւ, որ Խորհրդային Հայաստանում անհիմն քաղաքական մեղադրանքներով ձերբակալվեցին 15 հազարից ավելի հայեր, որոնց մեկ երրորդը գնդակահարվեց (35):

Խոսելով հայ ավանդական կուսակցությունների մասին, իրողություններից քաջատեղյակ հետազոտողը մեծամանակ աղբյուրների հենքի վրա կարեւորում է 1938 թ. սեպտեմբերի 9-28 տեղի ունեցած ՀՅԴ-ՌԱԿ բանակցությունները եւ դրանց արդյունքում ստորագրված համաձայնագիրը: Դրանում ասված է, որ «ոչ մէկ հայ քաղաքական կուսակցութիւն, առանձին, ի վիճակի է հայ ազգային ճակատագիրը վարելու. ՌԱԿ-ը եւ ՀՅԴ-ն այն երկու «գլխաւոր քաղաքական գործօններն են՝ որոնց ուժերուն համախմբումով միայն հնարաւոր է հիմնական աշխատանք կատարել»: Որ Խորհրդային Հայաստանը, անկախ «հոն տիրող իրաւակարգէն, կը նկատեն հայութեան ազգային գոյութեան խարիսխը եւ քաղաքական ապագային հիմնաքարը» (40-41): Ապա հեղինակն իրավացիորեն ավելացնում է, որ ՌԱԿ-ը «տարիներէ ի վեր հետեւած ազգային ուղղութիւնը որեւէ փոփոխութիւն կրած չէ» (43):

Խոսելով պատերազմի շեմին գտնվող իրավիճակի մասին, հեղինակն անդրադարձել է այդ շրջանում ՀՅԴ-ի պահվածքին եւ մանրամասն քննելով եղած աղբյուրները նշում է, որ «ՀՅԴ-ն չյարեցաւ» հայ նացիստների կողմից Բեռլինում հրատարակվող «Կովկաս» պարբերականին շուրջ համախմբվածներին, սակայն «մամլոյ իր տեսութիւններուն մէջ Խ. Միութեան անդամահատումի մէջ կարելիութիւն մը կը տեսնէր Հայաստանի անկախութեան, ինչպէս կովկասականները» (45):

Նախապատերազմական կարեւոր իրադարձություններից պատվարժան հետազոտողի աչքից չի վրիպել նաեւ հայերի համար բախտորոշ 1939 թ. մայիս-հունիս ամիսներին կնքված Անգլո-Ֆրանս-թուրքական դաշինքը: Նա իրավացիորեն նշում է, որ ինչպես միշտ, այս անգամ էլ օգտվելով պատեհ առիթից՝ Թուրքիան կլանեց Ալեքսանդրեթի սանջակը: Դա պատճառ դարձավ, որ 27 հազար հայեր արտագաղթեն այնտեղից եւ ապաստան գտնեն Սիրիայի եւ Լիբանանի հյուրընկալ հողերում:

Հեղինակն անդրադարձել եւ նոր լույսի ներքո քննարկել է նաեւ Հիտլերի ու Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը: 1939 թ. օգոստոսին Հիտլերը հրահանգեց անխնա կոտորել լեհերին, «աւելցնելով թէ ով կը յիշէ այսօր հայոց բնաջնջումը» (45): Հեղինակն այնուհետեւ պարզաբանում է, որ Հիտլերի «խօսքը ան էր, որ թուրքերը անպատիժ մնացին Հայոց ցեղասպանութենէն եւ ժխտական հետեւանքներ չկրեցին» (53): Իր խոսքն ավելի համոզիչ դարձնելու համար Մարյանն ընդգծում է, որ Հիտլերի հերոսներից մեկը «դարուս մեծագոյն մարդ» Աթաթուրքն էր, իսկ Թուրքիան՝ պետություն, որը մեծ հաշվով եւ վերջնականորեն լուծել էր իր փորձամասնական հարցը: Պատահական չէր, շեշտում է հեղինակը, որ «նացիստները թրքական դասերը օրինակելի կը նկատէին Գերմանիոյ համար» (53):

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամին վայել գիտականությամբ Մարյանը քննարկում է նաեւ ԽՍՀՄ-Գերմանիա չհարձակվելու, Մյունխենյան եւ զանազան այլ պայմանագրեր եւ ցույց տալիս դրանց մեջ առկա խարդավանքներն ու աշխարհի հզորների կողմից նոր աշխարհակարգ ձեւավորելու ձգտումները: Հեղինակն արձանագրում է նաեւ, թե ինչպիսի դյուրությամբ գերմանացիները գրավեցին Ֆրանսիան եւ ինչպես այնտեղ ապրող հայության կյանքը «որոշ կաշկանդումներու կ ենթարկուէր» (97): Ինչպես նաեւ, որպես այդ ամենի հետեւանք, 1940-ին ֆրանսիական բանակից 3000 հայ ռազմագերիներ Գերմանիա փոխադրվեցին: Ընդգծվում է, որ Ֆրանսիայի գրավումից հետո «ՀՅԴ-ն աւելի զուսպ քաղաքականութիւն մը վարեց» (98) եւ հիմնականում չմասնակցեց դիմադրության շարժմանը:

⇨12

Բարերար Հրաչյա Պողոսյան. «Կրկին Հայրենիքում եմ արտիս կանչով»

ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ

Մոսկվայում «Ազգ»-ի հատուկ թղթակից

Պետերբուրգաբնակ մեր նշանավոր հայրենակից, ճանաչված բարերար եւ հասարակական գործիչ **Հրաչյա Պողոսյանը** հերթական անգամ ժամանել է Հայաստան: Արդեն երկար տարիներ նրա այցելությունները Հայրենիք, որպես կանոն, ուղեկցվում են հերթական ծրագիր-մտահղացումը կյանքի կոչելով եւ հաճելի նոր անակնկալներով: Բացառություն չէր նաեւ բարերարի ներկայիս այցելությունը:

Հուլիսի 1-ին Հրաչյա Պողոսյանը հանդիսավոր պայմաններում աշխարհահռչակ ռուս դասական գրող Ֆյոդոր Դոստոեւսկու ծննդյան 200-ամյակի նվիրված հուշամեդալներ հանձնեց Գեւորգ եպիսկոպոս Սարոյանին, Երեւանի պեսական համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետի դեկան Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանին, Հայաստանի վաստակավոր արտիս Զարուհի Բաբայանին, Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի ուսանողուհի Անի Պողոսյանին, ինչպես նաեւ Փարիզի դիզայներական ստուդիայի տնօրեն Լուսինե Հովսեփյանին, որը միջնակարգ կրթությունը ստացել է որպես էֆստեռն ուսանող եւ անմիջապես ընդունվել Երեւանի պեսական բժշկական համալսարանի երկրորդ կուրս: Պարգեւատրվածներից յուրաքանչյուրի համար կյանքում առանձնահատուկ տեղ է գրավում Դոստոեւսկու կերպարը:

Արժե հիշեցնել, որ 2021 թվականի նոյեմբերի 11-ին Ռուսաստանը եւ ամբողջ աշխարհը նշեցին ռուս մեծ դասական Ֆյոդոր Դոստոեւսկու ծննդյան 200-ամյակը: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հրամանագրով տարեդարձին նվիրված միջոցառումներ տեղի ունեցան ամբողջ տարվա ընթացքում:

Մեր հայրենակցի նախաձեռնությամբ եւ հովանավորությամբ վերականգնվել է Ալեքսանդր Նեւսկու մայր տաճարի Տիխվինյան գերեզմանատանը գտնվող գրողի տապանաքարը եւ իրականացվել են գրողի մասին հիշողության պահպանման լայնածավալ նախագծեր, ինչպես Սանկտ Պետերբուրգում, այնպես էլ Ղազախստանի Սեմեյ քաղաքում: Այդ մասին առավել մանրամասն եւ ամբողջական տեղեկատվությունը ընթերցողները կարող են ծանոթանալ Հրաչյա Պողոսյանի հովանավորությամբ հրատարակված Ֆ. Մ. Դոստոեւսկու ծննդյան 200-ամյակին նվիրված ծավալուն գրքում:

Մեր հայրենակիցը ֆինանսավորել է նաեւ անվանի գրողի 200-ամյակին նվիրված հուշամեդալների տպագրությունը:

«Ֆյոդոր Դոստոեւսկու ծննդյան 200-ամյակ» հուշամեդալները, մեր հայրենակցի պատվերով, պատրաստվել են Սանկտ Պետերբուրգի դրամահատարանի կողմից: Ճակատային կողմում պատկերված է գրողի կիսանդրին, հակառակ կողմում՝ քաղաքի զինանշանը եւ «Հրաչյա Պողոսյան» հիմնադրամի տարբերանշանը: Ստեղծագործության հեղինակը Ռուսաստանի ժողովրդական արտիստ Ալեքսանդր Բակլանովն էր: Առաջին մեդալները տրվել են Սանկտ Պետերբուրգի նահանգապետ Ալեքսանդր Բեգլովին, Քաղաքային օրենսդիր ժողովի նախագահ Ալեքսանդր Բելսկուն եւ այլ ականավոր պեսական գործիչներ:

Ի դեպ, երեւանյան պարգեւատրման ընթացքում Հրաչյա Պողոսյանի կողմից պարգեւատրված **Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը** նշել է, որ Հայաստանում կան Անտոն Չեխովի, Մաքսիմ Գորկու եւ այլ ականավոր արվեստագետների անվան դպրոցներ: Այնուհետեւ միտք ծնվեց՝ առաջարկով դիտարկել հանրապետության դպրոցներից մեկը Ֆյոդոր Դոստոեւսկու անունով կոչելու հարցը: Հրաչյա Պողոսյանը համապատասխան գրություններ է ուղարկել Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն եւ ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության դեսպանություն: Բացի այդ, բարերարն առաջարկել է ընտրված դպրոցում տեղադրել արձակագրի կիսանդրին եւ տեղեկատվական տախտակ: Եթե արձագանքը դրական լինի, ապա պետերբուրգցի բարերարը պատրաստ է իր վրա վերցնել ծրագրի իրականացման հետ կապված բոլոր ծախսերը: Խորհրդանշական կլինի միջոցառման ժամանակացույցը Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին:

Ամենայն հարգանքի եւ մեծագույն գնահատանքի արժանի Հրաչյա Պողոսյանն այսօր հայտնի է Հայաստանում, Ռուսաստանում եւ աշխարհի բազմաթիվ անկյուններում: Նա արդեն երկար տարիներ հայտնի է իր բարեգործական նշանակալի գործունեությամբ:

Հրաչյա Պողոսյանի սերը հայկականության եւ հայկական մասունքների հանդեպ, նրա անցած ուղին հայրենասիրության, աշխատասիրության եւ պարտաճանաչության փայլուն օրինակ կարող է ծառայել երիտասարդ սերնդին, նա ամենուր իրեն դրսեւորում է որպես բանիմաց եւ պատասխանատու մարդ, նրա բոլոր ձեռնարկումները ուղղված են մեկ նպատակի՝ հանուն Հայրենիքի հզորացման եւ բարգավաճման:

Հանրության ջերմ սերն ու հարգանքը վայելող բարերարի եւ իր անունը կրող բարեգործական հիմնադրամի կողմից երկար տարիների ընթացքում իրականություն դարձած գործերը վերաբերվում են մեր կյանքի բոլոր ոլորտներին եւ իրականացվում են Ամենայն Ռուսիո Եկեղեցու առաջնորդ Կիրիլի եւ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնությամբ: Պողոսյանի սրաթռիչ մտքի արգասիք, զարմանք հարուցող ու երբեմն անհավատալի եւ հիացմունքի արժանի գործունեությունը բարձր գնահատականների է արժանացել իշխանության բարձր օղակներում ինչպես Ռուսաստանում եւ Հայաստանում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում, որտեղ իրականացվել են նրա նախաձեռնությունները:

Անցնող տարիների ընթացքում, ընդհանուր առմամբ, Հրաչյա Պողոսյանի եւ նրա բարեգործական հիմնադրամի նախաձեռնությամբ ամբողջ աշխարհում ստեղծվել եւ վերականգնվել են ավելի քան 300 հոգեւոր, մշակութային եւ պատմական նշանակություն ունեցող հուշարձաններ: Մեր հայրենակցի բարեգործության շրջանակն ընդգրկում է այսօր արդեն 14 երկիր: Աշխարհի որ անկյունում էլ իրականացրել է իր հերթական մտահղացումը՝ արել է սիրով ու նվիրումով եւ հայ ժողովրդի արժանի զավակի բոլոր ձեռնարկումները արդյունք են տարիների նրա տքնաջան աշխատանքի:

Հրաչյա Պողոսյանի մտահղացմամբ ու աջակցությամբ հրատարակվել են տասնյակ գրքեր եւ ամսագրեր, նկարահանվել են մի շարք մեծարժեք եւ ուսուցողական վավերագրական ֆիլմեր:

Հիշեցնենք, որ այս տարվա ապրիլի 13-ին ՌԴ Սանկտ Պետերբուրգ քաղաքի Օրենսդիր ժողովում հանդիսավորապես հրատարակվեց մի աննախադեպ որոշում, որի համաձայն՝ պետերբուրգաբնակ մեր ճանաչված հայրենակցի անունը կրող բարեգործական հիմնադրամն արժանացավ Սանկտ Պետերբուրգի պատվավոր բարերար տիտղոսին: Ասում ենք աննախադեպ, քանի որ «Հրաչյա Պողոսյան» բարեգործական հիմնադրամը քաղաքի պատմության մեջ դարձավ առաջին իրավաբանական միավորումը, որին շնորհվեց նման պատվավոր կոչում:

Հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել Մարիինյան պալատում: Հիմնադրամի նախագահ Հրաչյա Պողոսյանին պարգեւը հանձնեց Սանկտ Պետերբուրգի Օրենսդիր ժողովի նախագահ Ալեքսանդր Բելսկին:

Հայաստանում գտնվելու օրերին Հրաչյա Պողոսյանը վերստին սիրով հիշում է 2018-ի հոկտեմբերի 7-ի պատմական օրը, երբ իր ծննդավայրում՝ Արագածոտնի մարզի Ագարակ համայնքում մեծ հանդիսավորությամբ նշվեց գյուղի վերածննդի 10-ամյա հոբելյանը եւ լեգենդար «Արարատ 73»-ի հաղթանակի 45-ամյակը: Հանդիսություններին մասնակցում էր նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Այդ օրը Ագարակում տեղի ունեցան շքեղ եւ ուրախ միջոցառումներ, տոնակատարության օրվա շրջանակներում գյուղում տեղի ունեցան Հայաստանի համար աննախադեպ ութ անջնջելի իրադարձություններ, որոնք արժե եւս մեկ անգամ հիշատակել.

1. Ագարակի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում տեղի ունեցավ Հրաչյա Պողոսյանի պատվերով եւ պետերբուրգյան «Տավր» բաց բաժնետիրական ընկերության վարպետների կողմից պատրաստված Հայոց ցեղասպանության նահատակ սրբերի խաչանկարային սրբապատկերի օծման արարողություն: Նման մեծամասշտաբ աշխատանք առաջին անգամ է տեղադրվում Հայաստանի տարածքում:

2. Ագարակի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ ԽՍՀՄ հերոս, առաջին տիեզերագնաց-օդաչու Յուրի Գագարինի անվան ռոբոտաշինության դասարանի բացումը: Դասարանի անվանումը նախապես համաձայնեցվել է Յու. Գագարինի դստեր՝ «Մոսկովյան Կրեմլ» թանգարան-արգելավայրի գլխավոր տնօրեն Ելենա Գագարինայի հետ: ԽՍՀՄ փլուզումից հետո նման ծրագիր Հայաստանի տարածքում իրականացվում է առաջին անգամ:

3. Նորաբաց դասարանում տեղի ունեցավ Յուրի Գագարինի կիսանդրու բացումը: Բացման արարողությունը կատարեցին Հրաչյա Պողոսյանը եւ տիեզերագնաց, ՌԴ հերոս Անտոն Շկապլերովը:

4. Նույն օրը Ագարակի կենտրոնում տեղի ունեցավ «Արարատ-73» ֆուտբոլային թիմի պատվին անվանակոչված նոր հրապարակի հանդիսավոր բացման արարողությունը, որի բացումը կատարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Արարողությանը հաջորդեց ծառատունկ. «Արարատ» ֆուտբոլային թիմի հաղթանակի 40-ամյակի եւ Ագարակ գյուղի վերածննդի պատվին 2013 թ.-ին բացված «Արարատ-73» հուշարձանի մոտ Ագարակում առաջին անգամ տնկվեց հավերժության եղեւնի:

5. Այդ օրը Ագարակի կենտրոնում տեղի ունեցավ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ հուլիսին Սանկտ Պետերբուրգի հայ գործարարների հետ հանդիպման ժամանակ արված առաջարկով հիմնված կարի արտադրամասի բացման արարողությունը: Հրաչյա Պողոսյանն առաջինն էր, որ արձագանքեց ՀՀ վարչապետի կոչին եւ իր համագյուղացիներին աշխատանքով ապահովելու նպատակով արդեն իսկ գործում է ավելի քան 20 աշխատատեղ: Կառուցվող կցաշենքի հիմքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ Հրաչյա Պողոսյանը զետեղեցին հիշողության պատիճ, որը թույլ կտա հետագայում ավելացնել աշխատատեղերը՝ հասցնելով շուրջ հարյուրի:

6. Այդ օրը տեղի ունեցավ Հրաչյա Պողոսյանի ինքնատիպ ու յուրօրինակ մտահղացման շնորհիվ, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի օրհնությամբ եւ «Ռոսկոսմոսի»՝ հանձին Սերգեյ Կրիկալեւի աջակցությամբ տիեզերք տարված Հայաստանի դրոշի հանդիսավոր հանձնման արարողությունը: 195 օր տիեզերքում՝ միջազգային տիեզերական կայանում մնալուց հետո Հայաստանի դրոշը վերադարձել է երկիր: Այն այնտեղ էր տարել տիեզերագնաց Օլեգ Արտեմեւը: Հայաստանի դրոշը նախօրեին անձամբ տիեզերագնաց, ՌԴ հերոս Անտոն Շկապլերովն է բերել մեր երկիր եւ տոնական միջոցառման ընթացքում այն Ագարակում հանձնեց վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

7. Նույն օրը, Հայաստանում առաջին անգամ, Ագարակի պատվավոր քաղաքացու կոչում շնորհվեց Հայ Առաքելական եկեղեցու սպասավորի՝ Ագարակի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ Վիգեն Մանուկյանին:

8. Դպրոցի բակում տնկվեց դեռեւս Պետրոս Առաջինի կողմից տնկված եւ խնամված դարավոր կաղնու ծիլ, որը Հրաչյա Պողոսյանն էր բերել հայրենի գյուղ: Ծիլը, որ հայազգի բարերարին նվիրել էին Սանկտ Պետերբուրգի ռուսական թանգարանից՝ Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում ծավալած ակտիվ եւ նվիրված գործունեության համար, տնկեցին Սանկտ Պետերբուրգից եւ Մոսկվայից ժամանած հյուրերը:

Ի դեպ, տիեզերքում 195 օր շրջագայած երկրորդ՝ մայրաքաղաք Երեւանի 2800-ամյակի դրոշը Հրաչյա Պողոսյանն իր իսկական տերերին հանձնեց 2019-ի հունիսի 20-ից 21-ը Սանկտ Պետերբուրգում անցկացված «Երեւանյան օրեր» միջոցառման ընթացքում, որին ներկա էր նաեւ նահանգապետ Ալեքսանդր Բեգլովը:

Երեւանի քաղաքապետին հանձնելով նվերը՝ Հրաչյա Պողոսյանը տեղեկացրեց, որ որպես վավերականության ապացույց Երեւանի դրոշի հակառակ մակերեսին տիեզերական արշավախմբի եւ տիեզերական կայանների նամականիշերն են, ինչպես նաեւ ռուս տիեզերագնացներ Օլեգ Արտեմեւի եւ Անտոն Շկապլերովի ինքնագրերը:

Հայաստանի հետ կապված գեղեցիկ հիշողությունները շատ են, նույնքան շատ են նաեւ ծրագրերն ու երազանքները, որոնք Հրաչյա Պողոսյանի ջերմ արտի եւ կամեցողության շնորհիվ ապագայում կյանքի կկոչվեն մայր հայրենիքում:

Նորանոր հաջողություններ, գեղեցիկ մտահղացումների իրականացում եւ ձեռքբերումներ ենք ցանկանում մեր հայրենակցին:

Գիտության նվիրյալը

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Էներգետիկայի բնագավառի մեծանուն գիտնական, բազմաթիվ ակադեմիաների իսկական անդամ, լրագրող, հրապարակախոս, հասարակական ակտիվ գործիչ, «**Ազգ**»-ի երկարամյա աշխատակից **Ստեփան Պապիկյանը** ծնվել է 1957 թվականի հուլիսի 9-ին ՌԴ Ալթայի երկրամասի Զալեսովո գյուղում: 1987թ. ավարտել է Մոսկվայի էներգետիկական ինստիտուտի ցերեկային ասպիրանտուրան: Տեխնիկական գիտությունների թեկնածու է: 1985թ. Մոսկվայում ավարտել է դասախոսների վարպետության բարձրացման համալսարանը:

1992թ. մշակված Հայաստանի էներգետիկայի զարգացման համալիր ծրագրի հեղինակներից է: 1995թ. մշակված Հայաստանի ջերմամատակարարման համակարգերի զարգացման հայեցակարգի պատասխանատու հեղինակներից է: 1997թ. ընտրվել է էներգետիկ ինժեներների միջազգային ասոցիացիայի անդամ (ԱՄՆ): Ստացել է «Վկայագրված էներգետիկ մենեջեր» միջազգային անվանակոչությունը (ԱՄՆ): Տարիներ շարունակ տարբեր բուհերում կատարել է դասախոսական աշխատանք: Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանում բազմիցս հանդիսացել է պետական քննական հանձնաժողովի նախագահ:

2000թ. ընտրվել է բնության եւ հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի իսկական անդամ:Հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատությունների, ինչպես նաեւ 13 մեծաժեք մենագրությունների, որոնք առնչվում են ջերմամատակարարման եւ գազամատակարարման համակարգերի, գազատուրբինային կայանքների, ՋԷԿ-երի եւ ԱԷԿ-ների, ՀԷԿ-երի, կաթսայատների ռեժիմային, էկոլոգիական, ինչպես նաեւ էներգետիկայի պատմության հարցերին: **Նա հեղինակել է՝ Հայաստանի ջրաղացները, Երեւան քաղաքի էներգետիկայի պատմությունը, Հայաստանի եւ Արցախի գազամատակարարման պատմությունը; Երեւան քաղաքի փողոցների լուսավորության պատմությունը, Արցախի էներգետիկայի պատմությունը, Գյումրի քաղաքի էներգետիկայի պատմությունը; Հայաստանի էներգետիկայի պատմությունը** քառասնյակ արժեքավոր գիտական մենագրությունները:

Ս.Պապիկյանի էներգետիկայի բնագավառին նվիրված ուսումնասիրություններն աչքի են ընկնում պրոֆեսիոնալ բարձր մակարդակով, ուսումնասիրվող նյութի խոր իմացությամբ: Դրանք առանձնանում են ճնարկվող առարկայի հանդեպ թարմ եւ ինքնատիպ մոտեցումներով: Նրա գիտական մենագրությունները մշտական պահպանության են հանձնվել Հայաստանի եւ Արցախի ազգային արխիվներում, Հայաստանի պատմության թանգարանում, Երեւանի պատմության պետական եւ այլ թանգարաններում:

Էներգետիկայի զարգացման բնագավառում մեծ ներդրում ունենալու համար ընտրվել է Հայկական տեխնոլոգիական, ինչպես նաեւ գիտատեխնոլոգիական ազգային ակադեմիաների իսկական անդամ: Նա համաշխարհային ճանաչման արժանացած վաստակաշատ գիտնական է: Նրա կողմից մշակվել են ջերմամատակարարման համակարգերի ռեժիմների ուսումնասիրության մի շարք արժեքավոր մեթոդներ, որոնք հնավորություն են տալիս լուծելու բազմաթիվ խնդիրներ՝ հաշվի առնելով ելակետային տվյալների անորոշությունը եւ ռեժիմային հարցեր: Մասնավորապես, հիմնավորել է ռեժիմների վերլուծության միջակայքային մեթոդը, որը զգալիորեն հեշտացնում է իրականացնել ինժեներական հաշվարկները, հատկապես շուկայական հարաբերությունների պայմաններում: Գիտական աշխատանքները ներդրվել են Մոսկվայի էներգահամակարգում եւ բազմաթիվ գիտական ու նախագծային կազմակերպություններում:

Ավելի քան 200 գիտական զեկուցում է կարդացել միջազգային, նախկին համամիութենական եւ հանրապետական գիտաժողովների ընթացքում (Երեւան, Մոսկվա, Թբիլիսի, Բաքու, Քութաիսի, Խարկով, Կիեւ, Մինսկ, Ս.Պետերբուրգ, Խերսոն, Բրյանսկ, Օդեսա, Սվերդլովսկ, Տաշկենդ, Ալմա-Աթա եւ այլ քաղաքներում): 2009թ. գիտամանկավարժական բազմամյա եւ բեղմնավոր գործունեության համար ստացել է Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսորի գիտական կոչում: Հաշվի առնելով նրա հսկայական ծառայությունները էներգետիկայի զարգացման եւ կրթության բնագավառում՝ նրան շնորհվել է Վերնադսկու անվան ոսկե մեդալ (ք.Մոսկվա), իսկ 2010թ՝ «Գիտության եւ կրթության վաստակավոր աշխատող» պատվավոր կոչում (Մոսկվա):

Ս.Պապիկյանը հսկայական աշխատանք է կատարում Հայաստանում, Արցախում, Վրաստանում հիդրոէլեկտրակայանների, հողմաէլեկտրակայանների, ինչպես նաեւ արեւային էլեկտրակայանների նախագծման եւ կառուցման բնագավառում: Մինչեւ օրս նրա նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ նախագծվել եւ կառուցվել են ավելի քան 80 հիդրոէլեկտրակայաններ: Նա Հայաստանի ժուռնալիստների միության եւ ժուռնալիստների միջազգային ֆեդերացիայի անդամ է:1996թ. հիմնադրել է «Էներգետիկ լրատու» թերթը:

2019 թվականի հուլիսի 17-23-ը Հոնկոնգում (Չինաստան),այնուհետեւ Մոսկվայում, Եվրոպական մի շարք երկրներում տեղի ունեցած գրքի միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներում Ս. Պապիկյանի գիտական աշխատանքները մեծ հետաքրքրություն ներկայացրեցին եւ լայն արձագանք ունեցան: Նրանց ամփոփագրերը տպագրվել են «HONG KONG BOOK FAIR 2019» եւ այլ հեղինակավոր կատալոգներում:

Արցախի Հանրապետության էներգետիկայի զարգացման գործում ունեցած ակնառու ներդրման համար 2017 թվականին ԱՀ նախագահի կողմից պարգեւատրվել է Արցախի Հանրապետության պետական պարգեւով՝ «Երախտագիտություն» մեդալով:

***

«Ազգ»-ի խմբագրությունը բարձր է գնահատում էներգետիկայի բնագավառում Ս.Պապիկյանի կատարած գիտական արդյունավետ աշխատանքը: Հղելով մեր հոբելյանական շնորհավորանքները՝ ուրանց ցանկանում ենք մեր աշխատակցին երիտասարդական ավյուն եւ հետագա բեղմնավոր աշխատանք,քաջառողջություն եւ բարեկեցություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Երեւան, 14, հուլիսի [illegible]

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, Իսանջյան 50, հեռ. +37410 552 632, էլ.փոստ՝ tekeyan@arminco.com, www.tekeyan.am

Հարգարժան Երզնկացյան և Ուզունյան ընտանիքներին

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Միրզախանյան Ռուբեն
Նախագահ

Գևորգյան Գարեգին
քարտուղար

Ավետիքյան Հակոբ

Խաչատրյան Հարություն

Մելիք-Բախշյան Մհեր

Մուրադյան Գայանե
գանձապահ

Վարդանյան Սերգեյ

Էլբակյան Արմեն

Հակոբյան Արա



Հարգարժան Երզնկացյան եւ Ուզունյան ընտանիքներին

Հարգելի Երզնկացյան եւ Ուզունյան ընտանիքների անդամներ,

Խոր վշտով տեղեկացանք անվանի վիրաբույժ, պրոֆեսոր Գրիգոր Երզնկացյանի մահվան լուրը:

Ընդունեք Հայաստանի Թեքեյան մշակութային միության անդամների խորին ցավակցությունները՝ անժամանակ եւ ծանր կորուստի համար:

Գրիգոր Երզնկացյանն իր կյանքը նվիրել է Արեւելյան, Կենտրոնական եւ Հարավային Աֆրիկայում բժշկության ոլորտի զարգացմանը, վիրաբույժների ուսուցմանը, որակյալ մասնագետների պատրաստմանն ու իր մասնագիտական փորձը նրանց փոխանցելուն:

Վիրաբուժության ոլորտում միջազգային ճանաչում ունեցող պրոֆեսոր Երզնկացյանը պարբերաբար այցելում էր Հայաստան, ծավալում վիրաբուժական եւ բարեգործական գործունեություն՝ ի սպաս իր ժողովրդին ու հայրենիքին:

Գրիգոր Երզնկացյանի բացակայությունը մեծ կորուստ է ինչպես բժշկության ոլորտի, այնպես էլ հայ ժողովրդի համար:

Նրա կյանքը համակ նվիրում էր բժշկությանը, բժշկի եւ բարերարի բացառիկ օրինակ, ինչի շնորհիվ հազարավոր կյանքեր էին փրկվում:

Սփոփանքի եւ վշտակցության խոսքեր ենք ուղղում նրա ընտանիքին, հարազատներին, բարեկամներին եւ գործընկերներին:

Գրիգոր Երզնկացյան մարդու եւ վաստակաշատ բժշկի փայլուն կերպարը մշտապես վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

Ի ԴԻՄԱՑ ՀԹՄՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

«Ազգ»ը միանում է ցավակցություններին:

Հայկական ատոմակայանի անվտանգ շահագործման համար

ԱՄՆ պետդեպարտամենտը շարունակում է ակտիվ աջակցել ՀԱԷԿ-ում մի շարք նախագծերի իրականացմանը: Ամերիկյան կողմի համաֆինանսավորմամբ իրականացվում է վարժասարքի ներդրման աշխատանքները: Աշխատանքները մասամբ կատարված են: Ակտիվ քայլեր են ձեռնարկվում նախագիծն ավարտին հասցնելու ուղղությամբ:

Համավարակով պայմանավորված բացակայությունից հետո օրերս դարձյալ Հայկական ԱԷԿ-ում էին ԱՄՆ-ի էներգետիկայի դեպարտամենտի, PNNL-ի եւ WSC-ի ներկայացուցիչները: Հանդիպմանը մասնակցում էին նաեւ «Հայատոմ ԳՀԻ» ՓԲԸ եւ «Ատոմսերվիս» ԲԲԸ մասնագետները: Այս փուլում կարեւորվեց ՀԱԷԿ-ի օպերատիվ անձնակազմի ուսուցման գործընթացի կազմակերպումը վարժասարքի միջոցով:Այն հնարավորություն կտա ապահովել թիվ 2 էներգաբլոկի անխափան ու բնականոն աշխատանքը:

Քննարկվել են նաեւ ՀԱԷԿ-ի հետագա շահագործմանը վերաբերող հարցեր՝ աշխատած վառելիքի չոր պահեստարանի նոր մոդուլի կառուցման, ճառագայթակտիվ թափոնների ժամանակավոր պահման խնդիրները եւ այլն:

Ս. ՊԱՊԻԿՅԱՆ

Իրանահայ համայնքային առօրյայի որոշ հարցերի շուրջ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
Իրանագետ

Սույն հոդվածի շրջանակներում փորձելու ենք անդրադառնալ իրանահայ համայնքային առօրեայի որոշ հարցերի: Մեր օրերում Թեհրանում գործում է սոցիալ-բարոյական նշանակության մի հիմնարկ, որի նմանը դժվար է գտնել հայկական սփյուռքի այլ հասվածներում: Խոսքը վերաբերում է մարմնամարզային խանգարումներով երեխաներին օժանդակող «**Ակունք**» կենտրոնին, որտեղ վերջերս այցելել է Թեմական խորհրդի ատենապետ **Նորայր Արամյանը** եւ հանդիպել կենտրոնի տեսչուհի **Վանուշ Թեւանյանի** հետ:

Այս կենտրոնն աշխատում է սաների խոսքային եւ մտային կարողությունները զարգացնելու ուղղությամբ, կատարում ֆիզիոթերապիաներ, սովորեցնում խեցեգործություն, նկարչություն, երգ-երաժշտություն:

Ըստ ներկայացված զեկույցի՝ կենտրոնն ունի 30 սան եւ 13 աշխատող: Սակայն կենտրոնի սաների տարիքային բարձրացման պատճառով առաջացել են որոշ հարցեր: Խնդիրն այն է, որ այս հիմնարկը չունի եկամտի հիմնական աղբյուր եւ ֆինանսավորվում է նվիրատվությունների ու բարերարների աջակցությամբ: Փաստորեն, այս կենտրոնի գոյության միակ երաշխավորը ակամայից դարձել է Թեմական խորհուրդը, որն էլ իր հնարավորության սահմաններում նեցուկ է դարձել կենտրոնի աշխատանքներին, սակայն, ցավոք, միշտ չէ, որ հաստատված միջոցները բավարարում են հիմնարկի բոլոր կարիքները հոգալուն:

Հաջորդ սոցիալական խնդիրը, որի մասին կխոսենք առնչվում է կրթական ոլորտին: 2021-2022 ուսումնական տարվա ավարտին արդեն նախանշվում են նոր խնդիրները, որոնց գույքագրման ուղղությամբ պահանջ է դրվել Թեմական խորհրդի կողմից Կրթական խորհրդի հետ միասնաբար: Այդ մարմինների ներկայացուցիչները հայկական դպրոցներ այցելություն կատարելով՝ հանդիպումներ են ունենում տեսչական կազմերի ու ծնողական խորհուրդների հետ՝ ծանոթանալու առկա խնդիրներին, ինչպես նաեւ խորհրդակցելու դրանց լուծման հնարավոր ուղիների վերաբերյալ:

Օրերս Թեմական խորհրդի ատենապետ Նորայր Արամյանը, Կրթական խորհրդի ատենապետ **Ալֆրեդ Կարապետյանը** եւ նույն խորհրդի անդամ **Խաչատուր Խաչատրյանն** այցելել են «**Թունյան-Թովմասյան**» օրիորդաց միջնակարգ դպրոց:

Դպրոցի տեսչուհի **Արսինե Խաչատրյանը** ներկայացրել է անցած ուսումնական տարում իրականացված աշխատանքները, իսկ ծնողական խորհուրդն առաջարկել է կազմակերպել դպրոցական ճամբարներ: Վերջինս կարեւոր սոցիալական նշանակություն ունի, քանի որ վերջին տարիներին համավարակի պայմաններում սահմանափակված էր ամառային ճամբարների գործունեությունը:

Արամյանի կողմից կրթական համակարգի հայեցի դաստիարակության հիմնախնդրի բարձրացումը եւ հայոց դպրոցներում այն իրացնելու հնարավորության շեշտադրումը նշանակում է, որ բոլոր դեպքերում իրանահայ այսօրվա դպրոցն ունի մայրենի լեզուն զարգացնելու խնդիրը: Այդ համատեքստում է, որ հաստատես կարեւորվել է այն, որ հայեցի դաստիարակություն ստացած անհատների միջոցով է հայի հավատական ապագան երաշխավորվում:

Ակնհայտ է, որ վերոնշյալ հարցերի լուծումը սերտորեն կապված է միութենական աշխատանքների հետ, որի համար անհրաժեշտ է դպրոց-միություն սերտ համագործակցությունը, որի դեպքում մի կողմից դպրոցը, ունենալով պետական հաստատված ուսումնական ծրագիր, իսկ մյուս կողմից միությունը՝ որպես համայնքային միավոր, կարող են գործակցել հայեցի դաստիարակության շրջանակներում:

Նշելի է, որ 2021-2022 ուսումնական տարում «Թունյան-Թովմասյան» դպրոցը միջնակարգ Ա. եւ Բ. բաժիններում ունեցել է թվով 132 աշակերտուհի: Ընդ որում, հատկանշական է, որ նախորդ տարվա 12-րդ դասարանի բոլոր աշակերտուհիներին հաջողել է ընդունվել համալսարան: Այսպիսով, նշված դպրոցի օրինակով պարզ է դառնում պարսկերեն լեզվի բարձր առաջադիմությունը, սակայն միաժամանակ մտահոգիչ է դառնում արդյոք սաները տիրապետո՞ւմ են հայերենին նույնքան բարձր մակարդակով:

Իրանահայ համայնքային կյանքին բնորոշ գծերից մեկն էլ մշտական եւ անխափան կապն է հայրենիքի հետ, թեկուզ դժվարին այս օրերին: Ավելին, հենց դրանով է բնութագրական այս համայնքը, որի կառույցները գիտեն՝ ինչպես զորավիգ դառնալ եւ կանգնել մարտահրավերներով շրջափակված հայրենի Արցախի կողքին տարբեր ձեւաչափերով: Այդ մասին է վկայում օրերս Թեհրանի Ազգային առաջնորդարանի դահլիճում Թեմական խորհրդի կողմից հատուկ հրավերով Արցախից Թեհրան ժամանած Ստեփանակերտի եւ Ասկերանի՝ **ՀՕՄ**-ի «Սոսե» մանկապարտեզների տնօրեններ **Նելլի Ղուլյանի** եւ **Սուսաննա Գրիգորյանի** հյուրընկալումը: Տնօրենները մասնակցելու են Հայ մշակութային «Արարատ» կազմակերպության 78-ամյակի տոնակատարությանը:

Թերեւս Հայրենիք-Սփյուռք մասնագիտական կապերի խորացման շրջանակներում պետք է դիտարկել Թեմական խորհրդի կողմից **«Արտակ Մանուկյան»** ազգային թանգարանում՝ հավաքածուների համալիր ուսումնասիրության նպատակով, Թեհրան ժամանած Երեւանի Մատենադարանի Ձեռագրագիտության բաժնի ավագ գիտաշխատող, ձեռագրատան ֆոնդապահ, արվեստագիտության թեկնածու **Դավիթ Ղազարյանի**, Մատենադարանի Արեւելագիտության բաժնի ավագ գիտաշխատող եւ ԵՊՀ Հայ արվեստի պատմության եւ տեսության ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու **Իվետ Թաջարյանի,** ԵՊՀ Հայ արվեստի պատմության եւ տեսության ամբիոնի դասախոս **Մարիամ Վարդանյանի**, Մատենադարանի աշխատակից, ասպիրանտ **Գրետա Գասպարյանի** հյուրընկալումը:

Հիրավի, գնահատելի է այս խմբի անդամների նախաձեռնությունը՝ թանգարանի իրերի գիտական համալիր ուսումնասիրումը, որը միաժամանակ նպաստում է առաջիկա համատեղ ծրագրերի մշակման եւ մշակութային ժառանգության պահպանման մի շարք խնդիրների վերաբերյալ համատեղ գործունեության ծավալմանը:

Այսպիսով, համայնքում աշխատանքներ են կատարվում կրթա-մշակութային տարբեր նախաձեռնությունների մշակման ուղղությամբ, որոնց իրականացման գործում ներառված են հայասանյան մասնագետներ:

Կանցկացվի «Գյումրի. վարպետաց քաղաք» փառատոն՝ նաեւ ԱՊՀ երկրներից մասնակիցներով

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, Գյումրու համայնքապետարանն ու Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանը (Երեւան) հուլիսի 16-ին Շիրակի մարզկենտրոնում համատեղ կանցկացնեն «Գյումրի. վարպետաց քաղաք» փառատոն:

Ինչպես ծանուցվում է այս մասին քաղաքային իշխանության տարածած հայտարարությունում, փառատոնն անցկացվում է ԱՊՀ ժողովրդական ստեղծագործության եւ մշակութային ժառանգության տարվա միջոցառումների շրջանակում: Նպատակն է մշակութային մեկ հարթակում միավորել արդի շրջանի ժողովրդական արհեստները, մեծացնել դրանց ճանաչելիությունը եւ նպաստել այդ ժառանգությունը կրող ու փոխանցող անհատների ստեղծագործական առաջխաղացմանը:

Գյումրու տարբեր մշակութային, արհեստագործական կազմակերպություններից ու անհատներից բացի, որոնք կներկայացնեն եւ կտարածեն «վարպետաց քաղաքի» շունչը, փառատոնին կմասնակցեն նաեւ ժողովրդական ստեղծագործության վարպետներ ինչպես Հայաստանի տարբեր համայնքներից, այնպես էլ ԱՊՀ երկրներից: Գորգագործության, ասեղնագործության, տիկնիկագործության, փայտագործության, խեցեգործության հարուստ մշակույթը ներկայացնող տաղավարներում այցելուները կծանոթանան Հայաստանի եւ ԱՊՀ երկրների ժողովուրդների արհեստագործական յուրօրինակ ավանդույթներին, կմասնակցեն վարպետաց դասերին, արհեստների շուրջ քննարկումներին, հնարավորություն կունենան ձեռք բերելու ինքնատիպ հուշանվերներ:

Կազմակերպիչների հավաստմամբ, քաղաքն այդ օրը կդառնա արհեստների, ազգային երգ ու պարի, ավանդական զրույցների, համեղ ուտեստների եւ անմոռանալի զգացողությունների կենտրոն:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Գյումրի

Ռամկավար Ազատական կուսակցության 100-ամյա ճանապարհը

Առձակատումից մինչեւ միավորման հույսեր

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ.

Թեֆեյան մշակութային միության ԱՄՆ եւ Կանադայի կենտրոնական վարչության նախագահ, ՌԱԿ Գերագույն խորհրդի անդամ, «Արմենիքն Միրոր- Սփեթեյթըրի» ավագ սյունակագիր, «Պայքար» շաբաթաթերթի պատասխանատու խմբագիր (Դետրոյթ-ԱՄՆ):

«Հին կոշիկներով նոր ճանապարհին չենք կարող քայլել»

Մի այլ տարր էլ կար, քանի որ կուսակցությունը Բարեգործականում դերակատարում ուներ, մարդիկ հացի համար գալիս էին կուսակցությանն էին անդամագրվում, որպեսզի Լիբանանի ու Սիրիայի մեջ կարողանան ՀԲԸՄ վարժարաններում ուսուցչական պաշտոններ ստանձնել: Երբ թողնում էին պաշտոնավարումը, դադարեցնում էին նաեւ կուսակցական պատկանելությունը, կամ շարունակում էին իրենց կուսակցականությունն ի վնաս կուսակցության օգտագործել: Լիբանանն ամեն տեսակ ինտիգիների կենտրոնն է: Մարդիկ նույնիսկ հակադիր կուսակցությունների պատգամավորների համար են ծառայել: Արդյունքում, մեր ամենաընտիր մտավորական խավերը հեռացան ղեկավար դիրքերից կամ հեռացվեցին, որպեսզի կարողանային այդ հակակշիռը ապահովել:

-Այժմ, հնարավոր համարում ե՞ք, որ կուսակցության տարբեր ճյուղերը միանան իրար եւ գոնե ՌԱԿ կուսակցության համադաշնություն ստեղծեն, այդպիսով գոնե ռամկավար ազատական գաղափարակիրները միավորվեն մեկ կառույցում, եւ 21-րդ դարի մարտահրավերների պարագայում կարողանաք նաեւ նոր սերնդի հոսքը ապահովել:

-Մեր հույսն այն էր, որ ՌԱԿ 100-ամյակի շեմին կուսակցությունը միասնական ներկայանա: Իմ տեսակետը եւ իմ պատկանած խմբավորումը, որ սփյուռքի մեջ հավաքված է ՌԱԿ Գերագույն խորհրդի անվան տակ, կիավատա, որ կուսակցությունը պետք է հայաստանակենտրոն դառնա: Դրա համար պետք է հզորացնել Հայաստանը: Դրսում էլ կուսակցությունը պետք է քաղաքականանա: Դաշնակցությունն օրինակ՝ Ամերիկայում, ի պատիվ իրեն, շատ լուրջ քաղաքական աշխատանք է կատարում:

Կուսակցությունն իր կոչումի համեմատ պետք է քաղաքական գործունեություն տանի: Երկար տարիներ ՌԱԿ-ը դպրոցների, եկեղեցիների, մշակութային կյանքի մեջ էր գործում: Այդ դերը կատարեց: Հիմա ավելի պետք է քաղաքականա: Մանավանդ, որ Հայաստանի մեջ պետականություն կա, եւ կուսակցությունները պայքարում են իրենց դերը ունենալու համար: Դուրսն էլ պետք է արձագանքի, որ մեկ քաղաքական հայեցակետով մոտենանք, եւ ոչ թե տարբեր կուսակցական մոտեցումներով: Երբ Հայաստանն անկախացավ, մենք 22 անդամ ունեինք Հայաստանի խորհրդարանում: Կուսակցությունը «բրենդ» ուներ: Այժմ բավականին աղոտած է այդ բրենդը: Կջանանք այդ բրենդը հաստատել իր նախկին հեղինակության դիրքի վրա, բայց մարդկային գործոնը ինձ համար շատ մտահոգիչ է: Այդ գործոնը շատ այլասերած է եւ շատ տխուր դեր է կատարում մեր կուսակցության մեջ: Այժմ մեր Գերագույն խորհուրդը կա եւ հակադիր ճակատը կա, որը ապօրինի միջոցներով ու խաղերով կենտրոնական վարչություն են հռչակել: Այս կռիվների մեջ ո՛չ կանոնադրություն, ո՛չ օրենք, ո՛չ էլ ծրագիր գոյություն չունի: Իսկ 2018թ. մայիսին հակառակ կողմը ժողով գումարեց, եւ երկու մասի բաժանվեց: Այնպես որ, այժմ կուսակցությունը երեք մասի է բաժանված՝ Լիբանանի շրջանային վարչության անվան տակ, ՌԱԿ Կենտրոնական վարչության անվան տակ, եւ կա մեր ՌԱԿ Գերագույն խորհուրդը: Որոշ մերձեցումներ արվում են, բայց հին կոշիկներով նոր ճանապարհին չենք կարող քայլել:

-Հնարավոր չէ՞ սպիտակ էջից սկսել այդ համագործակցությունը:

- Դժբախտաբար մարդկային գործոնը թույլ չի տալիս: Հայաստանում այդ հարցում հաջողեցինք: Այնտեղ համագումար եղավ եւ հուսանք, որ մտավորական մարդիկ իրենց տեղը կգրավեն եւ կուսակցությունն իր դիմագիծը կպահպանի: Կուսակցության դիմագիծը նաեւ Հայաստանի մեջ էր ծերացել: Ահավասիկ նոր սերունդ կա, որ կարող է տանել կուսակցության բրենդը:

-Կարծում ե՞ք, որ կուսակցության այս վիճակը նաեւ Թեֆեյան մշակութային միության կալվածներին եւ գումարներին տիրանալու պատճառով է ստեղծվել: Հիմնական կռիվը ոչ թե անձնական է կամ գաղափարական, այլ՝ ֆինանսական:

- Ճիշտ է, մինչեւ վերջերս գաղափարական տարաձայնություն չկար: Այս նոր վարչությունը, որ կազմավորվել է Մայք Խաչաբյանի գլխավորությամբ Հայաստանում գումարած ժողովի ընթացքում, շեղվելով մեր ավանդական քաղաքականությունից, խոսել են, որ Ամենայն Հայոց կաթողիկոսի դեմ արշավին մասնակցություն բերեն: Դա մեր ավանդական քաղաքականությանը դեմ է եւ պատեհապաշտության գլուխգործոցն է:

Այո, մենք մտահոգված ենք, որ նախադեպեր կան, եւ այդ մարդիկ նախկինում օգտագործելով Թեֆեյան միությանը պատկանող կալվածները, յուրացրել են եւ մսխել են միջոցները, իսկ այսօր, երբ որեւէ բանակցության առիթ է լինում, կրկին բարձրացնում են Ամերիկայի եւ Կանադայի Թեֆեյան միության կալվածների եւ նյութական միջոցների հարցը: Նախապայմաններից մեկն էլ այն է, որ տիրանան այդ կալվածներին: Իմ կարծիքով, կասկած չունեմ, որ նրանց հովանու ներքո անցնելուն պես, այդ կալվածների ճակատագիրն էլ կլինի նույնը, ինչ որ մյուսներինը:

- ԱՄՆ եւ Կանադայի Թեֆեյան մշակութային միությունը ի՞նչ միջոցների է տիրապետում, որ ֆինանսելով ասում են, թե թափանցիկ չեն ծախսվում գումարները:

-Լիբանանի մեջ նման ամբաստանություններ կարելի է անել, քանի որ Լիբանանը առավ-փախավներու երկիր է: Բայց ԱՄՆ-ի մեջ նման խաղ անհնար է անել: Մենք բարեսիրական կազմակերպություն ենք պետության մոտ արձանագրված եւ պարտավոր ենք պետությանը հաշվետվություն ներկայացնել: Ամեն տարի իրավաբաններով ու հաշվապահներով պատրաստված նման հաշվետվություն ենք ներկայացնում եւ հաշիվներ չենք կարող թաքցնել, քանի որ հանրային սեփականություն է:

Կառույցն իր իսկ գործունեությամբ հերքում է նման ամբաստանությունը: Բայց այլ բան պատահեց: Կալիֆորնիայի Տիգրանյան վարժարանի նախկին բարերարներից մեկը, որ սովորություն ունի բարերարություն անելու եւ ապա այդ հաստատության դեմ դատ բացելու, ինչպես օրինակ այս պարագայում, դատ բացեց եկեղեցական թեմի դեմ, ապա նաեւ՝ մեր միության դեմ: Վարժարանը փակվեց եւ մենք ստիպված էինք վաճառել, բայց ինքը ամբաստանեց, թե խարդախություն ենք արել, գումարները յուրացրել ենք: Բայց ԱՄՆ մեջ օրենք կա՝ գնացինք դատարան եւ այդ մարդը պարտվեց: Որեւէ արժանապատվություն ունեցող լրագրող պետք է գրեր, որ այն ամբաստանությունները, որ արել են՝ դատարանի կողմից հերքվել են: Բայց լրագրողական որեւէ արձագանք չեղավ:

Ապագայում ծրագրում ենք ԱՄՆ, Կանադայի, Հարավային Ամերիկայի, Ֆրանսիայի Թեֆեյան մշակութային միության համադաշնություն ստեղծել, որը համագործակցության լայն հնարավորություն կտա: Նաեւ քանի որ Հայաստանում մշակույթի առանձին նախարարություն չկա, մշակույթի գործիչները «անտեր են», մշակութային մի հարթակ ստեղծել, մեր հնարավորությունները ներդնել, եւ ավելի արդյունավետ կլինի, քան սփյուռքի պարագայում, ուր ավելի թանկ է եւ շատ քիչ արդյունք է տալիս:

-Ներկա պահին հնարավորություն տեսնո՞ւմ եք, որ բոլոր կողմերով կլոր սեղանի շուրջ նստեք եւ գոնե գլոբալ հարցերում հանդես գաք իբրեւ մեկ ռամկավար ազատական ուժ:

-Ավելացնեմ. մեր այս բոլոր կռիվների պատճառով ոչ միայն հեղինակություն կորցրեցինք սփյուռքի մեջ, այլեւ մենք ունենք շատ լավ մտավորական տարր, որոնք մեր այստեղի դպրոցների շրջանավարտներ են եւ բարձր մակարդակի են հասել: Նրանք խրտնեցին ներկուսակցական կռիվներից: Եթե խաղաղ, շինարար գործի մեջ լինի կուսակցությունը, նրանք կմասնակցեն, բայց այս կռիվների մեջ չեն ուզում մտնել:

Իսկ հիմա, թե կուսակցությունն իր բնականոն կյանքին վերադառնալու դեպքում քանի՞ մարդ կվերադառնա կուսակցության շարքերը, չեմ կարող ասել, բայց մենք մարդկային մեծ դրամագլուխ կորցրեցինք: Կուսակցության գլխավոր նպատակներից մեկը դա պետք է լինի, որ եթե վերականգնվի, այդ մարդիկ գան եւ խաղաղ գործունեության լծվեն:

Անկեղծորեն, այս հանգրվանին ես շատ լավատես չեմ: Այն տարրերը, որոնք Կենտրոնական վարչության գլուխ են եկել, այնքան փորձված են, որ այլեւս փորձելու տեղ չկա: Իհարկե, իրենց համակիրներից շատերը մոտենում են մեզ եւ ցանկություն են հայտնում համագործակցելու: Բայց եթե պարագլուխները չեն ուզում, դա անհնար է:

«Օրեր» ամսագիր, Պրահա
2019-21թթ.

(Շար. 4 եւ վերջ)

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

-ՌԱԿ-ում ե՞րբ ստեղծվեց այս ճգնաժամը եւ ինչո՞ւ:

- Այս ճգնաժամը ստեղծվեց 1995 թվականին, երբ Կիպրոսում՝ Լառնակայում տեղի ունեցավ ՌԱԿ հերթական համագումար, ուր որոշ զարգացումներ եղան: Նոր Կենտրոնական վարչությունում հին սերնդից ոչ ոք չէր մնացել բացի Հայկազեն Ուզունյանից, որ այդտեղ կարող էր դրական դեր կատարել: Սակայն թույլ չտվեցին, որ նա այդ դերը կատարի: Արտաքնապես դա կարելի էր առողջ մղում նկատել, որ նոր երիտասարդությունը ցանկանում է գալ եւ իր ձեռքը վերցնել կուսակցական ժառանգության ղեկավարումը: Սակայն խորքում այն տարրերը, որոնք ուզում էին կուսակցության ղեկավարումը ստանձնել, այլ նպատակներով էին եկել: Առաջինն այն էր, որ երկար տարիներ կուսակցության մտավորական ղեկավար տարրը կարեւոր դեր էր կատարել Բարեգործականի ղեկավարության մեջ: Իսկ Բարեգործականը համազգային կազմակերպություն է, ոմանց մտքում ավելի բարձր հեղինակություն վայելող կառույց էր, եւ ոմանք ցանկանում էին կուսակցության միջոցով մագլցել Բարեգործականի Կենտրոնական վարչություն: Շատերն ուզեցին կուսակցությունից անցնել ՀԲԸՄ, բայց չհաջողեցին տարբեր պատճառներով: Մնացին կուսակցության ղեկավարության դիրքերում, որն իրենց սկզբնական փափագը չէր:

Մինչդեռ կուսակցության հին սերունդը նաեւ իմ սերնդի աջակցությամբ մեծ զոհողություններով ակումբների համար բավական գույք եւ նյութական միջոցներ էր ապահովել: Մեր սերունդը երբեւէ չէր մտածել, որ այդ գույքը եւ այդ միջոցները կարելի է անձնական միջոցների համար օգտագործել: Այս խումբը, որ եկավ իշխանության, նպատակ ուներ այդ կալվածքներին տիրանալ եւ տիրացան: Եվ շատ տեղերում որոշ կալվածքներ փչացրին: Օրինակ՝ Կալիֆորնիայում հսկա մի կալվածք կորցրեցինք անհատական խարդավանքների պատճառով: Մարդիկ որոշեցի իրենց խարդավանքները ծածկեն, մտան այս նոր իշխանության հովանու տակ, որն էլ սրանց հովանավորեց, որ, իբր, սխալ բան չեն արել եւ նյութական կորուստ չունեն: Մինչդեռ կալվածքը չկա: Լիբանանի հսկայական կալվածքը՝ Թեֆեյան կենտրոնը, որ տարեկան 500-600 հազար դոլար եկամուտ ունի, դրա ներդրման 95 տոկոսը Ամերիկայի շրջանակն է կատարել: Բայց նոր սերունդը որ եկավ, արդեն ոչ մեկին հաշվետվություն չի ներկայացրել: Այսպիսի ամենաթողությունը սկսեց տիրապետել: Մարդիկ որոշ նյութականի վրա իշխանություն հաստատեցին եւ պետք է ջանային կուսակցության ճեղքերից օգտվել: Սա էլ՝ երկրորդ պատճառը:

Երրորդ պատճառն էլ մարդկային տեսակի այլասերումն է: Նոր սերնդի մեջ բոլոր նրանք, ովքեր Բարեգործականի կամ մի այլ հայկական կազմակերպության մեջ հարգանք չեն վայելում, գալիս են եւ կուսակցության գլխին փորձանք են դառնում: Ու քանի որ կուսակցության մեջ ամենաթողություն է ստեղծվել, ամեն տեսակի մարդ մտել է: Նաեւ չպետք է բացառեմ, որ արտաքին ուժերը կուսակցության քայքայման մեջ իրենց շահն ունեն եւ իրենց գործակալներն են ներդրել: Սա քաղաքական կյանքի բնական ընթացք է:

Ես, իհարկե, հիմա մատնանշումներ չեմ կարող անել, թե ով ինչ դավադրության մեջ է: Բայց աշխարհում որեւէ կուսակցության մեջ նման խաղեր տարվում են: Սակայն մեր կառույցը քանի որ տկար էր, այդ խաղերի ազդեցությունն ավելի է զգացվում: Օրինակ՝ Դաշնակցության պարագայում թեեւ ասում էին, որ Մարուխյանը ԿԳԲ-ի գործակալ էր, ուրիշներ էլ կային, բայց քանի որ Դաշնակցությունն ավելի զորավոր կառույց ունի, կարողացան մարսել այդ եւ նման ցնցումները: Մեր կառույցն ի սկզբանէ խախտվեց:

Քարձրարժեք եւ գնահատելի ուսումնասիրություն

⇨7 Դրան հակառակ, Հունաստանում հայերն իրենց «ճնշիչ մեծամասնութեամբ դէմ էին նացի բռնատիրութեան եւ ցեղադաշնութեան» (98):

Աշխատության Դ գլխում հեղինակը նշում է, որ Գերմանիայի ԽՍՀՄ ներխուժումից հետո պատերազմը «տարբեր բնոյթ ստացաւ հայրենաբնակ եւ սփիւռքի մէջ գրուած հայ ժողովուրդին համար» (99): 1941-45 թթ. ԽՍՀՄ-ի տարբեր վայրերում բնակվող շուրջ 500 հազար հայ զորակոչվեց, որից 325 հազարը՝ Հայաստանից: Ամբողջ ուժերը ֆաշիզմը ջախջախելու համար Սփյուռքի եւ հայաշխարհի հայությանն ուղղված հատուկ կոչերով հանդես եկան Հայաստանյայց առաքելական եկեղեցին եւ հայ մտավորականությունը, հայրենասիրական մեծաթիվ ստեղծագործություններ գրվեցին, ինչպես նաեւ ստեղծվեցին տասնյակից ավելի հայ ազգային զորամասեր:

Խոսելով ԽՍՀՄ-ի վրա գերմանական հարձակումից հետո սփյուռքահայ կուսակցությունների որդեգրած դիրքորոշումների մասին, հեղինակը փաստական մեծաքանակ նյութերի հիման վրա գրում է, որ ՌԱԿ, Հնչակյան եւ Կոմունիստական կուսակցությունները պատերազմի հենց սկզբից որդեգրեցին հակաֆաշիստական կեցվածք: Իսկ Եվրոպայում հաղթանակներից ու մանավանդ Ֆրանսիայի անկումից հետո «երկուութիւն մը կը տիրէր ՀՅԴաշնակցութենէն ներս» (108): Այսպես, գրավյալ տարածքներում ՀՅԴ ղեկավարներ **Դրոն, Ա. Խատիսյանը, Ա. Ջամալյանը, Վ. Փափազյանը, Ս. Թովմասյանը** եւ այլք «գործակցութիւն կը ցուցաբերէին Պերլինի հետ» (109): Իսկ Եգիպտոսի կենտրոնական կոմիտեն (Բիւրօն) որոշեց բոլշեւիկների հետ ունեցած նախկին հակասությունները մոռացության տալ եւ Անգլո-ռուսական «դաշնակիցներուն ուղեկցիլ»:

Դրոն համոզված էր, գրում է հեղինակը, որ Գերմանիան պիտի հաղթեր եւ ինքը «գիտակցաբար անցած էր գերմանական բանակային ծառայութեան», որպեսզի ինքն իր «հայ զինուորներով առաջինը մտնի Հայաստան» ու չթողնի, որ թուրքերը խուժեն ու կոտորեն հայությանը (111): Իսկ Փրոլ Հարբորի վրա ճապոնացիների հարձակումից հետո, ԱՄՆ-ի ՀՅԴ կենտկոմը կոչ ուղղեց հայությանը մինչեւ վերջնական հաղթանակ թիկունք կանգնել դաշնակիցներին: Ամփոփելով՝ հեղինակը գրում է, որ հայ ազգի մեծ մասը, չնչին բացառությամբ, համոզված պատերազմեց դաշնակիցներին: Նրանցից շատերը ակտիվ մասնակցություն ունեցան ընդհատակյա եւ պարտիզանական հակաֆաշիստական պայքարին: Հայերի համար կարեւոր նշանակություն ունեցավ այն, որ նացիստական Գերմանիան քաջալերում էր պան-թուրանական նկրտումներ ունեցող Թուրքիային, այն հույսով, որ վերջինս ընդդեմ դաշնակիցների մտներ պատերազմի մեջ: Սակայն զգուշավոր Թուրքիան հատկապես Ստալինգրադի ճակատամարտից հետո երկակի կեցվածք էր դրսեւորում:

Ներկայացնելով մեր հարեւանների որդեգրած դիրքը Գերմանիայի նկատմամբ, հեղինակը պարզաբանում է, որ ադրբեջանական ազգայնամոլները նպատակ ունեին ԽՍՀՄ-ի պարտությունից հետո, որին նրանք չէին կասկածում, Խորհրդային եւ Իրանական ադրբեջանների միացումով «Մեծն Ատրպէյջան մը» ստեղծել եւ դիրքորոշվել էին հօգուտ Գերմանիայի: Իսկ վրացիներն էլ, որոնց վրա Կովկասը գրավելու իրենց «Էդվեյս» ծրագրում նախընտրում էր հենվել Գերմանիան, «կը նախընտրէին Վրաստանի գրաւումը Վեհրմախթի կողմէ» (140): Որոշ հայ գործիչներ եւս երազում էին, որ իրենց երկիրը պարզապես հանձնվեր Գերմանիային: Մասնավորապես Փարիզում բնակվող մի խումբ դաշնակցականներ՝ **Դրոն, Կոմսը** եւ այլք, անմիջապես իրենց ծառայությունն առաջարկեցին նացիստներին: Այնինչ գերմանական ծրագրերով Կովկասի ժողովուրդները ինքնուրույն պետական մարմիններ եւ զինյալ ուժեր չպիտի ունենային: Ավելին, նույնիսկ հաղորդակցության լեզուն գերմաներենը պիտի լիներ:

Դոկտոր Մարյանը փաստառաս հենքի վրա մանրամասն քննարկել է նաեւ Հայկական լեգեոնի խնդիրը: Հաշվի առնելով այդ առիթով թուրքական կողմի անհանգստությունները, նացիստներն ամենաուշը ստեղծեցին Հայկական լեգեոնը: Այն ունեցավ մոտ 18 հազար անդամ եւ ներառվեց գերմանական 162-րդ զորաբաժնի մեջ: Գերմանական բանակի հայ կամավորները, տեղեկացնում է հեղինակը, կրում էին գերմանական համազգեստ, իսկ ուսերին՝ 1918-1920 թթ. ՀՀ-ի դրոշի եռագույնով նշաններ: Մյուսների նման հայերին եւս խոստացել էին, որ Կովկասի գրավումից հետո նրանց կտրվեն քաղաքական, մշակութային եւ տնտեսական ազատություններ: 1943 թ. վերջերին կային հայկական ութ հետեւազորային գումարտակներ, յուրաքանչյուրը՝ 950 անդամով: Ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր գերմանահպատակ **Ալֆրեդ Մուրադյանը**: Հայ լեգեոնն ուներ նաեւ իր «Հայաստան» թերթը: Հեղինակը միաժամանակ ընդգծում է, որ հայ լեգեոնականներն «ամենէն նուազ հակա-բոլշեւիկեան զգացում ունեցողներն էին» (212) եւ բոլոր գումարտակներում գործում էին ընդհատակյա հայրենասիրական կազմակերպություններ եւ նրանցից շատերն անցան Կարմիր բանակի կողմը:

Հեղինակը նշում է, որ Բեռլինի համալսարանի հայագիտության դոկտոր **Արտաշես Աբեղյանի** ղեկավարությամբ եւ մի քանի դաշնակցական նշանավոր գործիչների անդամակցությամբ ստեղծվել էր Հայոց ազգային խորհուրդ, որը փորձում էր կոորդինացնել հայկական խնդիրները: Այնուհետեւ մանրամասնվում է, որ հիմնվել էր նաեւ Արմենական շարժումը, որը հույս ուներ «Հայաստանի մէջ իշխանութիւնը ձեռք ձգել եւ վերահաստատել 1920-էն առաջուան քաղաքական պայմանները» (230): Մի քանի փոքերից հետո գերմանացիները համոզվեցին, որ հայերն իրենց անհարազատ տարր են եւ ստիպված եղան դադարեցին նրանց վստահել:

Պատերազմի ընթացքում գերմանական հատուկ ծառայությունները լայնածավալ քարոզչական գործունեություն ծավալեցին Անդրկովկասում անջատողական շարժումներ հրահրելու համար, բայց թշնամու հաշվարկները, հատկապես հայերի դեպքում, ամբողջովին սխալ դուրս եկան, գրում է հեղինակը:

Քննարկելով ավանդական կուսակցությունների դիրքորոշումները պատերազմի ավարտին, հեղինակը նշում է, որ մոտալուտ հաղթանակի զգացումից ՀՅԴ ղեկավարները ստիպված էին «փրո-խորհրդային դիմակ կրելու» (356): Հնչակյանները, որ իրենք իրենց կոչում էին մտավորական մարքսիստներ, եւ Ռամկավարները, որ համամիտ էին եւ համագործակցում էին տեղական իշխանությունների հետ, դեմ էին ծայրահեղական կուսակցություններին: Նրանք գտնում էին, որ դրանք կարող են թշնամանք ստեղծել եւ դրանով վտանգել հայ համայնքների ապահովությունը, պատշտպանում էին դաշնակիցների շահերը:

Աշխատության վերջին՝ «Համաշխարհային Բ. Պատերազմի վախճանը եւ հայերը» գլխում հեղինակն իրավամբ նշում է, որ պատերազմի դարձակետը եղան Ստալինգրադի, Կուրսկի եւ Էլ-Ալամեյնի ճակատամարտերը: 1944 թ. հունիսի 6-ին Ֆրանսիա ափհանումը եւ օգոստոսի 25-ին Փարիզի գրավումը դրանց հետեւանքն էր, իսկ Խորհրդային եւ դաշնակից ուժերի հանդիպումը 1945 թ. ապրիլի 25-ին՝ պատերազմի վերջնակորդը: Մինչ այդ՝ 1945 թ. փետրվարի 4-11-ին Յալթայում ԱՄՆ-ի նախագահ **Ռուզվելտի**, Անգլիայի եւ ԽՍՀՄ-ի վարչապետներ **Չերչիլի** ու **Ստալինի** հանդիպումով էլ դրվեց նոր աշխարհակարգի հիմքերը:

Հեղինակը շոշափում է նաեւ մի կարեւոր հիմնհարց՝ թե ի՞նչ եղավ նացիստների հետ համագործակցածների հետ: Բազմաքանակ փաստերի, արխիվային վավերագրերի եւ հուշերի վրա հիմնվելով հեղինակը պարզաբանում է, որ ռազմագերիներից շատերին ստիպեցին վերադառնալ իրենց երկրները: Իսկ Հայկական լեգեոնի մնացուկները՝ 4-5 հազար մարդ, տեղակայված էին Շտուտգարդի մոտ եւ մնացին ամերիկյան գրաված տարածքում: Նրանցից 3600-ը փոխադրվեցին ԱՄՆ, իսկ մնացյալ մասը ավելի ուշ վերադարձավ Հայաստան: Ջերբակալվեց նաեւ Դրոն, բայց որպես նախապատերազմյան «հին տարագիր», ազատ արձակվեց: Սփյուռքում եւ Դաշնակցություն կուսակցու-թյան մեջ,-նշում է հեղինակը,-երկակի վերաբերմունք կար Դրոյի նկատմամբ: Մի մասը դատապարտում էր նրան նացիստների հետ համագործակցելու համար, իսկ մյուսը՝ **Վահան Նավասարդյանի** գլխավորությամբ՝ պաշտպանում: Ավելին, նրանք արդարացնում էին Դրոյի քայլերը պատճառաբանելով, որ դա միակ հնարավորությունն է եղել ռազմագերի հայերի կյանքը պահպանելու եւ Գերմանիայի կողմից Այսրկովկասի գրավման դեպքում հայության անվտանգությունը ապահովելու համար:

Առանձին ենթագլխում հեղինակն անդրադարձել է նաեւ Պոստդամի կոնֆերանսին, Ռուզվելտի մահվան, ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում հայերի մեծ ներդրումի եւ այլ հարցերի, որոնք թեեւ նորություն չեն պարունակում, սակայն ամբողջացնում են ասելիքը: Իսկ ամենավերջում հեղինակը թվերի լեզվով ցույց է տալիս, որ բնակչության թվի համեմատ թե՛ պատերազմի մասնակիցների, թե՛ հերոսների եւ թե՛ զոհերի թվով հայերը գերազանցել են ԱՄՆ-ին, Անգլիային եւ ԽՍՀՄ-ի կազմում ապրող բոլոր ժողովուրդներին: Այսինքն՝ նրանք իրենց հայրենի հողի, լինելիության եւ ապագայի համար մարտնչել են նվիրված, հերոսաբար, համոզված, որ պատմություն են կերտում եւ ապագա սերունդներին հպարտ ու արժանապատիվ ապրելու հնարավորություն ընձեռում:

Ամփոփելով նշենք, որ կատարված է հսկայածավալ աշխատանք: Միայն սկզբնաղբյուրների եւ ուսումնասիրված գրականության թվարկումը ամբողջական էջեր կլրացնի: Հիացմունք է առաջացնում հեղինակի տիտանական ջանքերը լուռ ու մունջ եւ կաթիլ-կաթիլ փաստերը հավաքելու, հրապարակի վրա եղած բազմաշերտ նյութը ուսումնասիրելու, դրանք համադրելու եւ համապատասխան եզրակացություններ կատարելու տեսակետից:

Միանշանակ բարձր գնահատելով 2-րդ համաշխարհային պատերազմի մասին հիմնարար եւ ամբողջական հաջողված սույն աշխատությունը, ցանկանում ենք նշել նաեւ, որ տարալեզու սկզբնաղբյուրներից եւ գրականությունից հավաքած մեծաքանակ նյութերը կարելի էր, պատմագիտական լեզվով ասած, ավելի շատ ու ամբողջական «խոսեցնել», հնարավորինս սպառիչ պատասխաններ տալ ցարդ բաց մնացած մի քանի կարեւոր հիմնահարցերի, գնահատել տարբեր երկրների, ինչպես նաեւ ԽՍՀՄ կազմի մեջ մտնող ժողովուրդների (այս դեպքում լավ կլիներ հատկապես Ադրբեջանի) ներդրման չափը հաղթանակի գործում, քանի որ աշխարհը կրկին կանգնած է նոր աշխարհակարգ ձեւավորելու շեմին եւ դրանք նորից խիստ արդիական ու կարեւոր են դարձել:

Իհարկե, նշված ցանկությունները բոլորովին չեն սվերում գիտական բարձր մակարդակով եւ ամենայն բարեխղճությամբ կատարած հայրենանվեր աշխատանքը, որն արժանի է ամենաբարձր գնահատանքի եւ խոնարհումի: Սա այն դեպքերից է, որ որպես պատմաբան եւ գրչակից բարեկամ՝ հանգիստ խղճով կասեմ՝ վարձդ կատար, մեծարգո Մարյան...

Հայտարարություն



ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ.

❖ կրտսեր գիտաշխատողի,
❖ գիտաշխատողի,
❖ առաջատար գիտաշխատողի,
❖ գլխավոր գիտաշխատողի թափուր տեղերի համար:

Դիմողը պետք է ունենա գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտական աշխատանքներ ղեկավարելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

1) գրավոր դիմում,
2) երկու լուսանկար՝ 3x4 չափսի,
3) քաղվածք աշխատանքային գրքույկից,
4) ինքնակենսագրություն,
5) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
6) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը,
7) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
8) հրատարակված աշխատանքների ցանկ,
9) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),
10) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ (գիտական քարտուղարին):

Հեռ. 54-86-71

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակության ԼԱ տարի
Հրատարակիչ
«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ
Երեւան 0010, Եզնիկ Կողբացի 20/3
e-mail: azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հաշվապահութիւն (գովազդ)
հեռ. **010 582960**
Համակարգչային շարուածքը՝
«Ազգ» թերթի

"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960
20/3 Yeznik Koghbatsi st.,
Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Եզնիկ Կողբացի 20/3: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 14.07.2022, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: